

Վ. Գ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

**ՀՏԴ 347
ԳՄԴ 67.99 (2) 9
Ե 472**

Վ. Գ. Ենգիբարյան

Ե 472 **Պատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները:** –
Երևանի պետ. համալս. – Եր.: Երևանի համալսարանի
հրատ., 2007 – 128 էջ:

*Տպագրվում է ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետի խորհրդի որոշմամբ*

**Խմբագիր ի. Գ. Ք. պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան
Լ. Պ. Օհանյան**

**ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Մենագրությունը նվիրված է դատական փորձաքննությունների տեսության և պրակտիկայի հիմնախնդիրներին: Հիմնականում ներկայացվում են դատական փորձաքննություններին, փորձագետի դատավարական կարգավիճակին, ինչպես նաև փորձագետի եզրակացությանը վերաբերող հարցերը և այլն:

Մենագրությունը կարող է օգտակար լինել փորձագետների, քննիչների, փաստաբանների, դատավորների, դատախազների, իրավաբանական բուհերի ուսանողներին, դասախոսների, ասպիրանտների և դատական փորձաքննությունների հիմնախնդիրներով հետաքրքրվող անձանց:

Ե $\frac{1203021300}{704(02)07}$ 2007

ԳՄԴ 67.99 (2) 9

**Երևանի համալսարանի հրատարակչություն
Երևան 2007**

ISBN 978-5-8084-0854-8

© Վ. Գ. Ենգիբարյան, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ 1. ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ	7
§ 1. Դատական փորձաքննությունների սկզբնավորման և զարգացման պատմությունը.....	7
§ 2. Դատական փորձաքննության հասկացությունը.....	30
§ 3. Դատական փորձաքննությունների տեսակները	54
ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՑԻ ՏԵՍԱԿ	77
§ 1. Փորձագետը որպես քրեական դատավարության առանձնահատուկ սուբյեկտ	77
§ 2. Փորձագետի եզրակացության գնահատման գիտական չափանիշները.....	95

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրապես փորձագիտական հետազոտությունների մակարդակի բարձրացման ու դրանց կատարելագործման համար էական նշանակություն ունի տվյալ ժամանակաշրջանում գիտության և տեխնիկայի զարգացման աստիճանը, բնական ու տեխնիկական գիտություններում արձանագրված նվաճումները:

Սակայն որքան էլ գիտությունը զարգանա, միևնույն է փորձագիտական հետազոտությունների պրակտիկան արդիականացնելու գլխավոր նախադրյալն այդ բնագավառում միաժամանակյա գիտահետազոտական, ինչպես նաև ուղումնական աշխատանքների անընդհատ իրականացումն է:

Վերը շարադրվածն առավել հրատապ խնդիր է մեր երկրի համար, եթե նկատի ունենանք փորձագիտական գործունեության իրականացման համար միասնական օրենսդրական դաշտի բացակայությունն ու ներկայումս դրա մշակմանն ուղղված նախապատրաստական միջոցառումների իրականացումը:

Ինչ խոսք, հանրապետությունում գործող փորձագիտական հաստատությունների կողմից իրականացվում են դատական փորձաքննություններ, ընդ որում, դրանք ընդգրկում են հետազոտությունների բավականին լայն շրջանակ: Այնուամենայնիվ, թե՛ դրանց որակի բարձրացման, նյութատեխնիկական վերազինման, և թե՛ կադրերի վերապատրաստման հարցում դեռևս անելիքները բազմաթիվ են:

Մի խոսքով գիտության և տեխնիկայի զարգացման, հատկապես թվային ու բարձր տեխնոլոգիաների աննախադեպ զարգացման ներկայիս տեմպերը, դրանցով պայմանավորված հանցագործությունների կատարման ի հայտ եկող նոր եղանակները փորձագիտական պրակտիկայի առջև նորանոր խնդիրներ են դնում:

Բացի ժամանակակից խնդիրներից, դատական փորձաքննությունների կատարելագործման, դրանց դերի ընդգծման նպատակով, դատական փորձաքննությունների տեսության մեջ դեռևս կան նաև հրատապ լուծում պահանջող դատավարական ու կրիմինալիստիկական բազմաթիվ հարցեր:

Այլ կերպ ասած՝ պատշաճ մակարդակով փորձագիտական հետազոտությունների կատարման համար ի թիվս տեխնիկական ու մեթոդական խնդիրների լուծման, հարկ է նաև հստակեցնել որոշ ընթացակարգային, քրեադատավարական ու կրիմինալիստիկական բնույթի հիմնախնդիրներ, որոնք կոչված են կանոնակարգելու ինչպես փորձագիտական հետազոտության բուն ընթացքը, այնպես էլ դրան նախորդող ու հաջորդող փուլերը: Ավելին, քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների կիրառումը փորձագիտական հետազոտությունների կատարման ճանապարհով բավականին նուրբ կարգավորման և հստակ մոտեցումների ձևավորման կարիք ունի, քանզի դրանց կիրառման արդյունքում ստացվում է քրեադատավարական ապացույցի նոր տեսակ՝ ի դեմս փորձագետի եզրակացության, որն էլ կարող է քրեական գործի լուծման համար վճռորոշ նշանակություն ունենալ:

Այս և փորձագիտական պրակտիկային ու տեսությանը հուզող բազմաթիվ այլ հիմնահարցերի քննարկմանն ու վերլուծմանն է նվիրված սույն աշխատանքը, որում փորձ է արված մեր հանրապետությունում առաջին անգամ համալիր մոտեցում դրսևորել փորձագիտական հիմնախնդիրների քննարկմանը: Հասկանալի է, որ հարցերը բազմազան են և դեռևս պետք է քննարկվեն, ուստի մեր խնդիրն է աջակցել Հայաստանի Հանրապետությունում դատական փորձաքննությունների բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կատարմանը և համեստ ավանդ ներդնել Հայաստանի Հանրապետությունում դատական փորձաքննությունների տեսության զարգացման գործում:

ԳԼՈՒԽ 1.

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԲԵՆՆՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Դատական փորձաքննությունների սկզբնավորման և զարգացման պատմությունը

Պատմական փաստերը վկայում են, որ դատական փորձաքննությունների բնագավառի նվաճումները ժամանակին անգնահատելի դեր են կատարել արդարադատության ճիշտ և արդյունավետ իրականացման, հանցագործությունների բացահայտման, անմեղ անձանց արդարացման գործում:

Ինչպես յուրաքանչյուր տեսություն, գիտության ճյուղ, այնպես էլ դատական փորձաքննությունների բնագավառը ժամանակի ընթացքում անընդհատ կատարելագործվել, հարստացել է: Իհարկե, դրա զարգացումն էապես պայմանավորված է եղել և այսօր էլ պայմանավորված է բնական և տեխնիկական գիտությունների զարգացման մակարդակով, գիտության այդ բնագավառների նվաճումներով: Այդ կապին իր ցայտուն արտահայտությունն է ստանում ժամանակի ընթացքում հետազոտություններ կատարելիս նոր մեթոդիկաների, կատարելագործված տեխնիկական միջոցների կիրառմամբ և այլն: Այդ նվաճումների շնորհիվ է, որ ժամանակին կիրառվող սենսացիա առաջացնող մեթոդիկաներն այսօր դուրս են եկել փորձագիտական պրակտիկայից:

Ընդհանուր առմամբ Հայաստանում կրիմինալիստիկայի գիտության սկզբնավորումն ու զարգացումը մեծապես կապված են ռուսական իրականության մեջ այդ գիտության զարգացման հետ: Դա ունի նաև իր օբյեկտիվ պատճառները, քանի որ կրիմինալիստիկայի գիտության ձևավորման ժամանակաշրջանում Հայաստանը ԽՍՀՄ հանրապետություններից մեկն էր, և ինչպես շատ հարցերում, այդ առումով

մեր հանրապետությունն ուղղակի թե անուղղակի կապված էր Ռուսաստանի հետ:

Նախ Եզենք, որ թեև Հայաստանում դատական փորձաքննությունների ծագման պատմությունը համարվում է քիչ լուսաբանված, սակայն հին հայկական ձեռագրերի ու սուլմնասիրությունը վկայում է, որ այն սկիզբ է առել դեռևս 4-րդ դարում¹:

«...Դավիթ Ալավկա որդու (12-րդ դար), Մխիթար Գոշի (12-րդ դար) և Սմբատ Սպարապետի (Գունդատաբլի) (13-րդ դարի Կիլիկյան դատաստանգիրքը) դատաստանագրքերը խոսում են դատական ապացույցների մասին, մասնավորապես, խոստովանության, վկաների ցուցմունքների, երդման, գրավոր փաստաթղթերի, իրավասու անձանց եզրակացության (փորձաքննության): Վերջինս, որն առաջին հայացքից հուսադրում է գիտության տարբեր բնագավառների օգտագործմամբ մասնագիտական եզրակացություններ (ապացույցներ) ստանալուն, վերաբերում էր միայն գիտության մեկ որոշակի բնագավառի՝ բժշկությանը: Նույնիսկ 989թ. առանց օրենքը խախտելու արտաշիրմուն է կատարվել Սմբատ թագավորի մարմինը զննելու և բնական մահվան փաստը հաստատելու նպատակով: Այս և նման հարցերի լուծումը հանձնարարում էին ժամանակի գիտության նվաճումներին տիրապետող անձանց»²:

Իսկ Ռուսաստանում այս ինստիտուտը զարգացել է 19-րդ դարում³:

Սակայն ռուսական իրականության մեջ դեռևս Պսկովյան դատական հրովարտակում, որը, իմիջիայլոց, համարվում է 14-15-րդ դարերի ֆեոդալական Պսկովի իրավունքի

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Давтян А. Г. Экспертиза в гражданском процессе, М., 1995, изд. Спарк, էջ 5-10:

² Տե՛ս նույն տեղում, էջ 151:

³ Մանրամասն տե՛ս Լևոն Օհանյան, Կրիմինալիստիկա, Երևան, 2004, էջ 128-147:

կարևորագույն աղբյուրը, նախատեսված է եղել հատուկ հոդված՝ «Հոդված 61», որում նշված է եղել. «Ոչ իշխանը և ոչ էլ մարզպանը (փոխիշխանը) չի կարող քննարկել հրովարտակաների իրական չլինելու հարցը: Հետագոտման արդյունքում կեղծ ճանաչված հրովարտակաների ու հուշամատյանների հարցը կարող է քննարկել միայն դատարանը»¹: Այս առնչությամբ Ի. Ֆ. Կրիլովը նշում է, որ քննարկվող հոդվածի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ հրովարտակաների կեղծված լինելու վերաբերյալ կասկածանք առաջանալու դեպքում այն պետք է ենթարկվի հետազոտման: Կասկածանքը հաստատվելու դեպքում «կեղծ հրովարտակը» դատական վիճաբանության ընթացքում պետք է ճանաչվի ուժը կորցրած²:

Ինչպես տեսնում ենք, ռուսական միջնադարյան ֆեոդալական իրավունքի աղբյուրներից մեկում արդեն հիշատակվում է հետազոտության տեսակներից մեկի՝ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման մասին:

Ռուսական իրականության մեջ մինչև 17-րդ դարի վերջը դատական փորձաքննությունների իրականացման կարգի միասնական իրավական կարգավորումն ապահովող իրավական ակտ գոյություն չուներ: Այդպիսի իրավական ակտ կարելի է համարել 1699թ-ի դեկտեմբերի 9-ի հրամանը, որը վերնագրված էր «Կալվածատիրական ակտերի վրա կատարված ստորագրությունների իսկության վերաբերյալ վեճ կամ կասկածանք առաջանալու դեպքում դրանց հետազոտման կարգի մասին, կալվածատերերի կողմից կալվածատիրական գործերով տեղական հրամաններում (բացառությամբ Իվանովյան հրապարակի) կատարված գրառումների

¹ Ст'ю Памятники русского права. М., 1953, вып. 2, էջ 294:

² Ст'ю Крылов И. Ф. В мире криминалистики. Л., 1980, էջ 175:

և կալվածատիրական ակտերն ստորագրելու համար վկաների անհրաժեշտ քանակի ապահովման մասին»¹:

Թեև նշված իրավական ակտը մեր օրերում չի պահպանվել, սակայն տեղեկանում ենք, որ դրա ընդունումը լուծվել է երկու կարևորագույն հարց, որոնք, անշուշտ, մեծ արժեք են ներկայացնում կրիմինալիստիկական հետազոտությունների բնագավառի պատմության զարգացման համար: Նախ, հրամանով նախատեսվում էր, որ բոլոր դեպքերում, երբ վիճարկվում է ստորագրությունը, փորձաքննության կատարումը պարտադիր է, և ապա փորձաքննություն կատարելու իրավունք ունեն միայն հրամանում նշված ատենագրերն ու քարտուղարները, այլ ոչ թե հրապարակային գրագիրները, ինչպես կատարվում էր նախկինում²:

Ակնհայտ է, որ մինչև հրամանի ընդունումը փորձաքննությունները կատարվում էին հրապարակային գրագիրների կողմից: Այս հարցում հետազոտություններ կատարելով՝ Մ. Ֆ. Ջլոտնիկովը հանգել է այն եզրակացության, որ հրապարակային գրագիրների համար փաստաթղթերի հետազոտումը թեև ոչ հիմնական, սակայն մշտական զբաղմունք է հանդիսացել³:

Սա վկայում է այն մասին, որ մասնագիտացված մարմին և համապատասխան մասնագիտություն ունեցող անձինք կրիմինալիստիկական հետազոտման որոշ բնագավառներում քննարկվող ժամանակաշրջանում դեռևս գոյություն չուներին:

1699թ-ի դեկտեմբերի 9-ի հրամանը 1649թ-ի Հավաք օրինացից հետո հանդիսացավ դատական փորձաքննություններին իրավական կարգավորում տվող երկրորդ իրա-

¹ Ст'ю Титов Ю. П. Хрестоматия по истории государства и права России, М., 2000, изд. Проспект, էջ 56:

² Ст'ю Крылов. И. Ф. В мире криминалистики. Л., 1980, էջ 177:

³ Ст'ю Злотников М. Ф. Подячие Ивановской площади. Пг., 1916, էջ 29:

վական ակտը: Սակայն նման օրենսդրական կարգավորումը լիարժեք համարվել էր կարող, քանի որ նշված ակտով որոշակիացվում էին միայն հետազոտման հնարավոր օբյեկտները (կալվածատիրական ակտեր) և նման հետազոտություններ կատարելու իրավունք ունեցող անձանց շրջանակը (ատենագիրներ ու քարտուղարներ): Փորձաքննությունների ընթացակարգային հարցերը՝ դրա նշանակման, կատարման կարգն իրավական կարգավորում էր ստացել:

Արդեն 18-րդ դարում որևէ փորձաքննություն գիտական մակարդակով էր անցկացվում, թեև դա ուներ իր օբյեկտիվ պատճառները՝ փորձաքննություն կատարող անձանց մասնագիտական ոչ բավարար պատրաստվածությունը և այլն:

Այս պատճառով էլ կատարված փորձաքննությունների արդյունքները հանրության շրջանում մասնավոր բողոքների տեղիք էին տալիս: Մի խոսքով, փորձաքննությունների այս պրակտիկան իրեն չարդարացրեց:

Ընդհանրապես կրիմինալիստիկական հետազոտությունները Ռուսաստանում որոշակիորեն գիտական բնույթ են ստանում 19-րդ դարի սկզբներին: Վերջինս պայմանավորված էր քիմիայի բնագավառում կատարված հայտնագործությունների հետ: Ի դեպ, բնական գիտություններից առաջինը քիմիան է եկել օգնության փորձագետներին: Որոշ տեսակի փորձաքննությունների կատարումը շատ հաճախ հանձնարարվում էր դեղագործներին, ովքեր պատշաճ մասնագիտական պատրաստվածություն չունեին գիտական հետազոտություններ կատարելու համար, ինչն էլ իր ազդեցությունն էր թողնում նրանց կատարած փորձաքննությունների որակի վրա: Այս հանգամանքը գիտակցելով՝ Ռուսաստանի Ներքին գործերի բժշկական խորհուրդը որոշում է կայացնում փորձագետների համար գիտական ձեռնարկ հրատարակել: Խորհրդի գիտական քարտուղար Ա. Ֆ. Գաևսկուն հանձնարարվում է ռուսերեն թարգմանել Վ. Ռեյ-

մերի «Ոստիկանական և դատական քիմիա» աշխատությունը: 1818թ. Բժշկական խորհրդի նիստում կրկնակի քննարկումից հետո Գաևսկու թարգմանությունը հրատարակվում է:

Չեղինակի կողմից երաշխավորվող հնարքների շարքում գլխավոր տեղը զբաղեցնում էր օրգանական վերլուծության հնարքը, նշվում էր, որ քիմիական ազդեցության ենթարկված նյութը կարող էր փոխել գույնը, դառնալ դյուրաբեկ և այլն¹:

Չնայած թերություններին, Ռեյների աշխատությունը երկար տարիներ հետազոտություններ կատարելիս փորձագետների համար հանդիսացել է միակ ձեռնարկը:

Այնուհետև, 1876թ. հրատարակվում է Ա. Նակեի «Դատական քիմիա» աշխատությունը, որը ժամանակին լուրջ օգնություն էր փորձագետների համար:

Այնուամենայնիվ, հետազոտման պատշաճ մեթոդիկայի, ինչպես նաև հատուկ մասնագիտացում ունեցող անձանց բացակայությունը բացասական ազդեցություն էր ունենում փորձագիտական պրակտիկայի վրա: Հաճախակի էին դառնում կրկնակի փորձաքննությունները, որն էլ շատ դեպքերում հանգեցնում էր հետազոտման օբյեկտի վնասման կամ արժեզրկման:

Այդուհանդերձ, որոշ դեպքերում, նույնիսկ քիմիական մեթոդներ կիրառելիս, փորձաքննություններն անհրաժեշտ արդյունքներ չեն տվել և հաճախ եզրակացությունների մեջ ուղղակիորեն նշվել է, որ չնայած կիրառվել են քիմիական մեթոդներ, սակայն արդյունքներ չեն հայտնաբերվել: Նմանօրինակ արդյունքներ են արձանագրվել նաև ակադեմիկոս Յու. Ֆ. Ֆրիցշեի կողմից Դոլգովի զեկուցագրի ստորագրության կեղծման կապակցությամբ կատարված կրկնակի փորձաքննության եզրակացության մեջ: Այս դեպքում ևս կի-

¹ Ст'ю Крылов И. Ф. В мире криминалистики. Л., 1980, т.2 182:

րառվում են քիմիական մեթոդներ, սակայն ստորագրության կեղծման հատկանիշներ չեն հայտնաբերվում¹:

Ընդհանուր առմամբ, եթե համեմատելու լինենք դեղագործների փորձագիտական պրակտիկան նախկին գրասենյակային ծառայողների, դպիրների փորձագիտական պրակտիկայի հետ, անշուշտ, կարող ենք արձանագրել առաջընթաց քայլեր:

Ինչևէ, դեղագործների փորձագիտական պրակտիկան, իր թերություններով ու առավելություններով հանդերձ, եկավ լրացնելու և հարստացնելու կրիմինալիստիկական հետազոտությունների բնագավառը՝ իր ուրույն ավանդը ներդնելով դրա հետագա զարգացման գործում: Ընդհանրապես գիտության որևէ բնագավառում կամ ճյուղում հաջողությունները միանգամից չեն արձանագրվում. դրա համար պահանջվում են և ջանքեր, և միջոցներ, և, անկասկած, ժամանակ: Այս իմաստով մենք կարծում ենք, որ թեև շատ դեպքերում դեղագործների կողմից քիմիական մեթոդների կիրառումը չի տվել ցանկալի կամ պահանջվող արդյունքներ, այնուամենայնիվ, այդ մեթոդների կիրառման փաստն արդեն վկայում էր փորձաքննությունների մակարդակի աճի մասին, իսկ այդ մեթոդները, անկասկած, հետագա կատարելագործման միտում և հեռանկար ունեին: Դեղագործների փորձագիտական պրակտիկայի ժամանակաշրջանը եթե չանվանենք փորձագիտական հետազոտությունների լուրջ գիտական շրջան, ապա գոնե կարելի է բնորոշել որպես կրիմինալիստիկական հետազոտությունների բնագավառում հետազոտությունների գիտականացման ժամանակաշրջան, քանի որ որոշ տեսակի հետազոտությունների ընթացքում, մասնավորապես, փաստաթղթերի փորձագիտական հետազոտման պատմության մեջ առաջին անգամ կիրառվեցին

¹ Ст'ю Дулов А. В., Крылов И. Ф. Из истории криминалистической экспертизы в России, М., 1960, էջ 42-50:

գիտական մեթոդներ՝ քիմիայի բնագավառից: Ժամանակին ակադեմիկոսներ Բորոդինն ու Բուտլերովն իրենց մտահոգությունն են արտահայտել այն առթիվ, որ հասարակության մեջ հազիվ են կարողանում լրջորեն տարբերակել քիմիան դեղագործությունից, լաբորատորիան՝ դեղատնից¹:

Կցանկանայինք նաև ընդգծել, որ քննարկվող ժամանակաշրջանում փորձագիտական պրակտիկայի համար դրական տեղաշարժ էր նաև գիտական աշխատությունների՝ փորձագիտական ձեռնարկների հրատարակումը: Դրանց հրատարակումն արդեն առաջընթաց իրողություն էր, առավելևս, որ այդ գործընթացով զբաղվում էին պետական հաստատությունները:

Դատական փորձաքննության տեսության և ընդհանրապես կրիմինալիստիկայի գիտության պատմությունը ներկայացնելիս չի կարելի չանդրադառնալ դատական լուսանկարչության և ռուսական իրականության մեջ դատական փորձաքննությունների հիմնադիր, անվանի կրիմինալիստ Եվգենի Ֆեոդորովիչ Բուրինսկու կյանքին ու գործունեությանը: Նրա աշխատություններն էապես զարգացրել են կրիմինալիստիկայի տեսական հիմքերը, նրա մոտ են ուսանել շատ կրիմինալիստներ, որոնք անխոնջ պայքար են մղել կրիմինալիստիկայի գիտության ստեղծման ու զարգացման համար: Չնայած իր ունեցած մեծ ավանդին՝ Բուրինսկու աշխատությունները ժամանակին մասնագիտական գրականության մեջ ըստ արժանվույն չեն գնահատվել: Այս կապակցությամբ բնութագրական է Վ. Ի. Գրոմովի 1912թ-ին լույս տեսած «Դատական լուսանկարչության մասին» աշխատությունը, որտեղ նշվում է. «Ա. Բերտիլյոնի և արտասահմանյան մյուս կրիմինալիստների ջանքերի շնորհիվ փաստաթղթերի լուսանկարչական փորձաքննության համ-

¹ Ст'ю Журнал русского физического и химического общества, 1880, т-12, էջ 226:

բավը կայունացավ, իսկ արդյունքներն ուղղակի ցնցող են»¹: Հետաքրքիր է, սակայն ցավալի, որ լուսանկարչական փորձաքննությունների մեջ Բուրինսկու ներդրած մեծ ավանդի մասին չի խոսվում, նա հիշատակվում է որպես 1903 թվականին փաստաթղթերի դատական փորձաքննության մասին Ռուսաստանում հրատարակված առաջին մենագրության հեղինակ: Այնուամենայնիվ, Բուրինսկու գիտական ավանդի զնահատականը տրվել է դեռևս 1898 թվականին: Գիտությունների ակադեմիայի որոշմամբ նա պարգևատրվում է Մ. Վ. Լոմոնոսովի անվան մրցանակով: Որոշման մեջ հավաստվում է. «Բուրինսկու իրավունքը կոչվելու որպես դատական լուսանկարչության հիմնադիր» և որ այն «ճանաչվում է բոլորի կողմից, և ոչ ոք չի վիճարկում»²: Բուրինսկու աշխատանքներին օբյեկտիվ զնահատական չի տրվել նաև Ս. Ն. Տրեգուբովի կողմից: Խոսելով Բուրինսկու և նրա աշխատանքների մասին՝ վերջինս սահմանափակվում է նշելով. «Ռուսաստանում գիտատեխնիկական մեթոդներ կիրառող առաջնեկը հատկապես փաստաթղթերի հետազոտման բնագավառում համարվում է Բուրինսկին»³:

Չնայած այս ամենին, Բուրինսկին մեծ ավանդ է ներդրել դատական լուսանկարչության և մասնավորապես փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման բնագավառում: Այդ են վկայում նրա հրատարակած աշխատությունները և ժամանակին նրա կողմից կատարված բարձրակարգ փորձաքննությունները: Սխալված չենք լինի, եթե նշենք, որ Բուրինսկու կյանքի լավագույն օրերը կապված են Պետերբուրգի մարզային դատարանի հետ: Այդ դատարանի շենքում է նրան 1889 թ-ին հաջողվում ստեղծել

¹ Стів Громов В. И. О судебной фотографии. СПб, 1812, էջ 8:

² Стів Ищенко Е. П., Ищенко П. П., Зотчев, В. А. Криминалистическая фотография и видеозапись, (учебно-практическое пособие), под редакцией Е.П. Ищенко, М., 1999, изд. Юристъ, էջ 17:

³ Стів Трегубов С. Н. Основы уголовной техники, Пг., 1915, էջ 10:

աշխարհում առաջին դատալուսանկարչական հետազոտությունների լաբորատորիան: Լաբորատորիայի առաջացման համար հիմք է հանդիսացել նրա կողմից նույն թվականի սեպտեմբերի 11-ին Ռոկոսովսկու և Յունգերցի քրեական գործով Պետերբուրգի մարզային դատարանում կատարված փորձաքննությունը: Այդ փորձաքննությունը հիմք է հանդիսացել ոչ միայն Ռուսաստանում կրիմինալիստիկական հաստատություններ հիմնադրելու համար, այլ նաև առանձնացնելու կրիմինալիստիկայի զարգացման արդեն գիտական ժամանակաշրջանը նախորդ ոչ գիտական, էմպիրիկ մակարդակից¹:

Երկու ամիս անց նույն դատարանի շենքում Բուրինսկին կատարում է երկրորդ դատալուսանկարչական փորձաքննությունը: Քրեական գործով մեղադրյալներ՝ տոմսավաճառներ Կորոլյովը, Յուտիլոն և այլոք մեղադրվում էին գնացքի տոմսեր կեղծելու և իրացնելու համար: Սենատի կողմից արդարացման դատավճռի փոփոխումից հետո գործն ուղարկվում է լրացուցիչ քննության: Մեղադրյալների արդարացման գործում էական դեր էր կատարել մի փորձաքննություն, որով պարզվել էր, որ երկաթգծի վարչության կողմից կեղծված ճանաչված տոմսերը տպագրվել են նույն տպարանում, որտեղ տպագրվում են իսկական տոմսերը: Լրացուցիչ քննության ժամանակ փորձաքննություն կատարելու համար դատարան է հրավիրվում Բուրինսկին, որի կատարած հետազոտությունը հերքում է առաջին եզրակացությունը: Բուրինսկին անհերքելիորեն ապացուցում է, որ տոմսերը կեղծված են և տպագրվել են ոչ թե տպարանում, այլ ձեռքի միջոցով՝ բարակ թիթեղիկների և գլանակների օգնությամբ²:

¹ Стів Крылов И. Ф. В мире криминалистики. Л., 1980, էջ 48:

² Փորձաքննության մասին մանրամասն տես Буринский Е.Ф. Судебная экспертиза документов, производство ее и пользование ею. СПб, 1903, էջ 121-124:

Նման բարձրակարգ փորձաքննությունները չէին կարող աննկատ մնալ: Դրանց վրա մեծ ուշադրություն են դարձնում ոչ միայն մամուլը, այլ նաև դատական մարմինները: Պետերբուրգյան մարզային դատարանի նախագահ Ա. Մ. Կուզմինսկին Բուրինսկուն առաջարկում է դատարանին կից ստեղծել դատալուսանկարչական լաբորատորիա: Առաջարկությունն ընդունվում է, սակայն լաբորատորիայի հիմնադրումն այդքան էլ դյուրին չի լինում: Այս կապակցությամբ քաղաքացիական և քրեական իրավունքի ամսագրում նշվում է. «Բուրինսկուն դատարանի շենքում հատկացվել է առանձին տեղ և արդարադատության նպատակների համար չափազանց օգտակար փորձաքննություններ կատարելու համար վերջինս կունենա բոլոր հարմարությունները»¹:

Իրականում լաբորատորիայի համար առանձնացված տեղը մի փոքրիկ անկյուն էր, իսկ անհրաժեշտ սարքավորումները Բուրինսկին բերել էր իր անձնական լաբորատորիայից: Դատական իշխանությունները լաբորատորիայի տեխնիկական հագեցվածության գործում ոչինչ չեն ձեռնարկում, իսկ Բուրինսկու անձնական լաբորատորիան շատ համեստ էր, այն չունեի անհրաժեշտ բոլոր սարքավորումները: Օրինակ, լաբորատորիան չունեի սպեկտրալ և միկրոգրաֆիկական սարքավորումներ և այլն²:

Սակայն երեք տարվա ընթացքում լաբորատորիայում կատարվում են այնպիսի փորձաքննություններ, որոնք նույնիսկ պատիվ կբերեին նաև ժամանակակից կրիմինալիստիկական լաբորատորիաներին: Գործունեության առաջին տարում լաբորատորիայում իրականացվում են 78 տարբեր հետազոտություններ, որոնք վերաբերում էին հիմնականում

¹ Տե՛ս Журнал гражданского и уголовного права 1889, N 10, էջ 131:

² Տե՛ս Громов В.И. Кабинеты научно-судебной экспертизы в городах Москве, Киеве и Одессе по закону от 4 июля 1913г., СПб, 1913, էջ 30:

փաստաթղթերին: Դրանցից 6-ը փաստաթղթերի ընդհանուր հետազոտություն էր, 29-ը՝ ձեռագրի համեմատում, 9-ը՝ թանաքի և թղթի հետազոտություն, 12-ը՝ ջնջված, կերագծված տեքստերի վերականգնում, 22-ը՝ փաստաթղթի պատրաստման ժամանակի (վաղեմության) և եղանակի հետազոտություն¹:

Շուտով լաբորատորիայում կատարվող փորձաքննությունների աստիճանաբար մեծացող քանակից պարզ է դառնում, որ լաբորատորիան կարիք ունի մեծացման: Այնուհետև Պետական խորհրդի որոշմամբ հիմնադրվում է դատալուսանկարչական լաբորատորիա, որն իր գործունեությունն սկսում է 1893 թվականի հունվարին: Ա. Մ. Կուզմինսկին, որի ջանքերով ստեղծվել էր լաբորատորիան, այդ պահին Պետերբուրգի դատական պալատի դատախազն էր: Նա առաջարկում է Բուրինսկուն պետական լաբորատորիայում զբաղեցնել պատվավոր լուսանկարչի պաշտոնը և միաժամանակ ղեկավարել լաբորատորիան: Սակայն Բուրինսկին մերժում է առաջարկը և հայտնում, որ. «մնալով անկախ անձնավորություն՝ իմ հիմնադրած հաստատությանն անհամեմատ ավելի օգուտ կբերեն, քան որպես Պալատի դատախազի գրասենյակի չինովնիկ»²:

Հրաժարման շարժառիթներն անձնական բնույթ չէին կրում, Բուրինսկին սկզբունքորեն կողմ էր փորձագետի դատախազական իշխանությանը ենթակա չլինելուն: Տասը տարի անց այս առիթով նա գրում է. «Առանձնապես դժվար է հաշտվել դատախազական հսկողությունից փորձագետի ծառայական ենթակայության հետ: Անհնար է ժխտել, որ այդ ծառայական կախումը շատ դեպքերում պետք է վնասակար

¹ Տե՛ս Буринский Е.Ф. Почерк деятельности Санкт-Петербургской судебно-фотографической лаборатории за время с 11 сентября 1889г. по 11 сентября 1892г., Фотографический ежегодник 1893, էջ 93:

² Տե՛ս Юридическая газета, 1897, N 58:

ազդի փորձագետի գործողությունների և ճնշում գործադրի նրա խղճի վրա»¹:

Բուրինսկին շարունակում էր մնալ որպես սկզբունքային մարդ և հիանալի մասնագետ, թեև ճնշումները նրա նկատմամբ իշխանական օղակների կողմից չէին դադարում: Նույնիսկ մի քրեական գործով նրան մեղադրանք է առաջադրվում կեղծ եզրակացություն տալու համար, սակայն դատաքննության ընթացքում Բուրինսկին բավականին հաջողությամբ կարողանում է ապացուցել իր անմեղությունը: Թեև Բուրինսկին արդարացվում է, սակայն երկար ժամանակ այդ դեպքերն իրենց զգացնել էին տալիս:

Բուրինսկու ներդրած ավանդների շարքին կարելի է դասել նաև նրա հայտնագործած անտեսանելի տեքստերի նկարահանման մեթոդիկան: Այս կապակցությամբ նա չորս լեզուներով հիսուն տարվա մասնագիտական գրականություն է ուսումնասիրում, սակայն իրեն հետաքրքրող հարցի շուրջ ոչ մի աշխատություն չի գտնում: Միայն հանրագիտարաններում հիշատակումներ է գտնում, երբ լուսանկարողի կամքից անկախ նկարահանվել էին անզեն աչքի համար անտեսանելի դետալներ: Տարիների իր քրտնաջան աշխատանքի արդյունքում Բուրինսկին կարողացավ ցայտերանգի (կոնտրաստի) ուժեղացման, գունազատման մեթոդներով լուսանկարել անտեսանելի տեքստեր:

Թեև մեթոդների կիրառումը որոշակի տեխնիկական բարդություն էր իրենից ներկայացնում, այնուամենայնիվ, ժամանակին այն առաջընթաց քայլ էր թե՛ դատալուսանկարչության և թե՛ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման բնագավառում:

Թերևս այս մեթոդների կիրառման շնորհիվ էր, որ ռուսական իրականության մեջ կատարվեց պատմական մի

¹ Ст'ю Буринский Е. Ф. , Судебная экспертиза документов, СПб, 1903, էջ 339:

փորձաքննություն, երբ Կրեմլի վերանորոգման աշխատանքների ժամանակ հայտնաբերվում են պատմական մեծ արժեք ներկայացնող տեքստեր: Փաստաթղթի պատմական մեծ արժեքը հաստատում են անվանի պատմաբաններն ու հնագետները, իսկ տեքստը նույնիսկ քիմիական մեթոդների կիրառմամբ հնարավոր չի լինում ընթերցել: Օգնության է գալիս դատական լուսանկարչությունը ի դեմս Բուրինսկու, նրա նոր մեթոդի: Երեք շաբաթ անընդմեջ քրտնաջան աշխատանքի շնորհիվ Բուրինսկուն հաջողվում է վերականգնել և ընթերցել պատմական արժեք ներկայացնող տեքստը¹:

Բուրինսկին մտահոգված էր հայրենական դատալուսանկարչության և փաստաթղթերի դատական փորձաքննության զարգացման հարցում, սակայն, ցավոք, աջակցություն չէր ստանում ցարական արդարադատության բնագավառի գործիչներից: Այդ մասին ցավով է պատմում հենց ինքը՝ Բուրինսկին. «Ես երբեք չկարողացա հասկանալ, թե ինչն էր պատճառը, որ դատական իշխանությունները և ընդհանրապես իրավաբանները միշտ այդպես անբարյացակամորեն էին վերաբերվում և այժմ էլ շարունակում են այդպես վերաբերվել փաստաթղթերի փորձաքննության այդ մութ բնագավառը լուսավորելու ցանկացած փորձ կատարելու նկատմամբ: Ծիշտ է, այժմ դահիճի ձեռքերով չեն այրում այդ փորձաքննությունների վերաբերյալ գրականությունը, սակայն չեն դադարում անընդհատ խոչընդոտներ հարուցել: Տքնաջան աշխատանքի, զրկանքների ու անհաջողությունների գնով ինձ հաջողվեց Պետերբուրգի դատական պալատի դատախազին կից դատալուսանկարչական լաբորատորիա հիմնադրել, սակայն դրա գործունեությունը դրեցին

¹ Ст'ю Крылов И.Ф. В мире криминалистики. Л., 1980, էջ 58:

այնպիսի պայմանների մեջ, որ հետագա զարգացման մասին ոչինչ մտածել չէր կարելի»¹:

Այս կապակցությամբ Բուրիսկին գրել է. «Փորձագետի աշխատանքը մշտական պայքար է կեղծարարի հայտնագործության, ճարակության և փորձագետի գիտելիքների ու տաղանդի միջև»²:

Բուրիսկին անձամբ վերը թվարկված երեք տեսակի լուսանկարահանման մասնագետ էր: Այդ են վկայում նրա կատարած փորձաքննությունները: Ցավոք, Բուրիսկու պահպանած 16 ալբոմներից բաղկացած հավաքածուն մեր օրերը չի հասել, քանի որ այն ոչնչացվել է Լենինգրադի շրջափակման օրերին, իսկ փորձագիտական եզրակացություններն այրվել են 1917 թվականի փետրվարյան հեղափոխության ժամանակ:

Իսկապես Բուրիսկու աշխատանքները, այդ թվում և նրա կողմից հետազոտությունների դասակարգումները ժամանակին առաջընթաց քայլ էին գիտության զարգացման քննարկվող շրջանում:

Բուրիսկու անունը, որպես տաղանդավոր և փորձառու փորձագետի, շատ բարձր էր: Նրան էին դիմում ոչ միայն Ռուսաստանի հեռավոր շրջաններից, այլ նաև արտասահմանից: Այդ է վկայում Բուրիսկուն Բուխարեստի համալսարանից հրավիրելու փաստը:

Գործի հանգամանքները հետևյալն էին. 1900 թվականին Բուխարեստում մահանում է մեծահարուստ Անաստասիուն, որն իր ողջ կարողությունը կտակել էր Ռումինիայի գիտությունների ակադեմիային: Կտակը հաստատվում է դատարանի կողմից և ակադեմիան սկսում է տիրապետել ի-

¹ Ст'ю Сборник научно-практических работ судебных медиков и криминалистов, Петрозаводск, 1963, Вып.2, էջ 171-173:

² Ст'ю Труды Первого съезда русских деятелей по фотографическому делу, М., 1897, էջ 56:

րեն թողնված ժառանգությունը: Որոշ ժամանակ անց ի հայտ է գալիս ևս մեկ կտակ, որը ներկայացնում են Անաստասիուի բարեկամները, որի համաձայն նախորդ կտակը համարվում է չեղյալ: Նոր կտակի կապակցությամբ կասկածներ են առաջանում: Վեճը լուծելու համար դատարանն սկզբում դիմում է գրաֆիոլոգիական փորձաքննության: Թե առաջին և թե երկրորդ կտակի տեքստի հետազոտությունները կատարվում են անվանի փորձագետների կողմից: Նրանք հանգում են այն եզրակացության, որ կտակների երկու տեքստերում էլ ձեռագրերը նույնն են: Հիմք ընդունելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ վերջին կտակն ունի իրավաբանական ուժ: Այնուամենայնիվ, ակադեմիայի կողմից միջնորդություն է ներկայացվում դատարան, որպեսզի հետազոտումը հանձնարարվի Բուխարեստի համալսարանին, քանի որ կեղծարարները կարող են կիրառած լինել այնպիսի մեթոդներ, որոնք հայտնի չեն փորձագետներին: Միջնորդությունը բավարարվում է և հետազոտությունը հանձնարարվում է ռումինացի անվանի գիտնական, քիմիայի պրոֆեսոր Ստեֆան Մինովիչիին: Բայց նրա խորհրդով համալսարանը հետազոտությունը կատարելու համար հրավիրում է Բուրիսկուն, և նրանք միասին կատարում են այդ բարդ փորձաքննությունը¹:

Եթե վերլուծենք քննարկվող ողջ ժամանակաշրջանում կրիմինալիստիկայի գիտության, մասնավորապես փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական բնագավառի պատմությունը, ապա վստահաբար կարող ենք արձանագրել, որ, իրոք, ռուսական իրականության մեջ նշված բնագավառում գիտության զարգացման և գիտության որոշ նվիրյալների շնորհիվ նկատելի են առաջադիմական որոշակի քայլեր:

¹ Ст'ю Судебная газета, 1904, N 13, էջ 7:

Այնուհետև, կրիմինալիստիկայի պատմության համար ռուսական իրականության մեջ սկիզբ է առնում այնպիսի մի ժամանակահատված, երբ երկրի պետական ու քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունների և գիտության, տեխնիկայի զարգացման արդյունքում տեղի են ունենում արմատական տեղաշարժեր, և արդեն 20-րդ դարը նշանավորվում է որպես կրիմինալիստիկայի, դատական փորձաքննությունների կատարելագործման ժամանակաշրջան: Ստեղծվում են դատական փորձաքննություններ կատարող, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող լաբորատորիաներ ինչպես տարբեր գերատեսչությունների համակարգերում, այնպես էլ գերատեսչական ենթակայությունից դուրս: Այս աշխատանքների հետ մեկտեղ, որակական նոր մակարդակի վրա են դրվում այս բնագավառի կադրերի ուսուցումն ու վերապատրաստումը, նոր տեխնիկական միջոցների ու սարքավորումների կիրառումը և այլն: Միայն 1948-1957թվականներին ԽՍՀՄ արդարադատության նախարարության համակարգում գիտահետազոտական լաբորատորիաներ են ստեղծվել Լենինգրադում, Դոմի-Ռոստովում, Խաբարովսկում, Սարատովում, Սվերդլովսկում, Նովոսիբիրսկում, Տաշքենդում, Մինսկում¹:

Քննարկվող ժամանակաշրջանում իրենց կատարած գիտական ու գործնական աշխատանքներով աչքի են ընկնում անվանի կրիմինալիստներ Ի. Ն. Յակիմովը, Վ. Ի. Գրոմովը, Պ. Ս. Սենենովսկին, Ս. Ա. Գոլունսկին, Ս. Մ. Պոտոպովը, Ն. Վ. Թերզիևը և այլոք: Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման բնագավառում արժեքավոր

¹ Стен Криминалистика, под редакцией И. Ф. Герасимова, Л. Я. Драпкина, М., 2000, «Высшая школа», էջ 26: ԽՍՀՄ-ի օրոք Ռուսաստանում դատական փորձաքննության հիմնարկների կազմակերպման մասին մանրամասն տես Крылов И. Ф. Судебная экспертиза в уголовном процессе, Л., 1963, изд. ЛГУ, էջ 145-163:

աշխատություններ են հրատարակում Ա. Ա. Էյսմանը, Վ. Մ. Նիկոլայչիկը և այլոք:

Ընդգծենք, որ 20-րդ դարը կրիմինալիստիկայի ոլորտի հաջողություններով աչքի է ընկնում նաև եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում, ինչը, անշուշտ, պայմանավորված է նաև այդ երկրներում գիտության ու տեխնիկայի զարգացման տեմպերով:

Եթե փորձենք ընդհանրացնել, ապա քննարկող ժամանակաշրջանն առավել կարևորվում է փորձաքննություններ կատարելիս նոր տեխնիկական միջոցների ու կատարելագործված մեթոդիկաների կիրառմամբ:

Փորձագետի եզրակացությունը հավասարազոր էր վկայի ցուցմունքներին: Համաձայն Ռուսական Կայսրության քրեական դատավարության կանոնադրության (1864թ.), փորձաքննությունն իրականացվում էր քննիչի և վկաների ներկայությամբ: Կանոնադրությունում չկային փորձագետի եզրակացության ձևը և բովանդակությունը կարգավորող հոդվածներ: Հատուկ գիտելիքների օգտագործման արդյունքները ձևակերպվում էին փորձագետի հարցաքննության տեսքով, չնայած որ այսպիսի կարծիքին ոչ բոլորն էին համաձայնում: Այսպես, Սպասովիչը նշել է. «Փորձագետները վկաներ չեն, նրանք միայն կասկածելի փաստն ստուգողներ են: Նրանք դատարանին չեն հաղորդում իրենց անձնական տպավորությունները, այլ ասում են իրենց կարծիքը՝ հիմնված խիստ տրամաբանական դատողությունների վրա: Վերջապես, եթե վկաներն իրենց ցուցմունքների համար պատասխանատու են օրենքի առաջև, փորձագետները իրենց կարծիքի համար պատասխանատու են միայն իրենց խղճի առաջ, քանի որ արդարադատությունը, ապավինելով արվեստի հեղինակությանը, բացահայտում է իր անկարողությունը լուծելու հայտնի խնդիրը, հետևաբար, այն անկարող է նաև դատել՝ ճիշտ է, արդյոք, լուծվել այդ խնդիրը

փորձագետների կողմից, թե՛ ոչ: Փորձագետների դատողությունների ճիշտ լինելու մասին կասկածներ ունենալու դեպքում արդարադատությունը կարող է դիմել այդ գործում ավելի առաջատար այլ փորձագետների»¹:

Հետագայում փորձագետի եզրակացությունը ձեռք է բերում ապացույցի ինքնուրույն կարգավիճակ:

Դատափորձագիտական լաբորատորիաների բացակայությունը բացասաբար էր անդրադառնում դատաքննչական մարմինների գործունեության վրա և դատական փորձաքննությունների իրականացման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում ակնհայտ էր, և դրա բացակայությունը, անկասկած, կարող էր հանգեցնել ինչպես գործերի քննության բարդությունների, այնպես էլ դատական սխալների: Այս հանգամանքով էլ պայմանավորված, օրինակ, արյունոտ թվացող հագուստը և այլ իրեղեն ապացույցները վերցվում էին, կցվում քրեական գործին և զնահատվում էին միայն **զննությամբ**, որը կարող էր առաջացնել ոչ ճիշտ հետևություններ: Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական հիմնարկների և համապատասխան փորձագետ կադրերի բացակայությունը բացասաբար էր անդրադառնում քննչական և դատական մարմինների աշխատանքների վրա²: Հանցավորության դեմ տարվող պայքարում և հանցագործներին հայտնաբերելու համար առաջնային խնդիր է դառնում գիտության և տեխնիկայի նվաճումների օգտագործումը:

Այդ հարցն իր լուծումն ստացավ 1959 թ. ապրիլի 25-ին, երբ Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի № 149 որոշմամբ Երևանի պետական համալսարանում կազմակերպվեց

¹ Стѣн Спасович В. Д., О теории судебно-уголовных доказательств в связи с судоустройством и судопроизводством. М., "ЛексЭст", 2001, էջ 29:

² Стѣн Դատական փորձաքննության հարցեր, ժողովածու 1, ԵՊՀ, Երևան, 1962, էջ 3:

գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբորատորիա: Վերջինիս հիմնադրումը հետապնդում էր երեք հիմնական նպատակ. կատարել գիտահետազոտական աշխատանքներ, ապահովել ուսանողների ուսուցման կապը պրակտիկայի հետ և դատաքննչական մարմինների համար կատարել փորձաքննություններ: Մինչ լաբորատորիայի հիմնադրումը, փորձաքննություններն առանձին կարևոր գործերով, այն էլ բացառիկ դեպքերում, կատարվում էին Թբիլիսիի լաբորատորիայում, իսկ փորձաքննության ենթակա շատ նյութեր մնում էին անկատար, եթե հաշվի չառնենք ՀՍՍՌ ՆԳՄ Միլվարչության Գիտատեխնիկական բաժանմունքի միջոցով կատարված փորձաքննությունները, բաժանմունք, որն այդ առումով իրավասու չէր սպասարկելու դատական ու քննչական մարմիններին: Ավելի ուշ, ՀՍՍՌ Մինստրների Սովետի 1959թ. դեկտեմբերի 8-ի մեկ այլ որոշմամբ Գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբորատորիայում կազմակերպվեց ավտոտեխնիկական փորձագետների խումբ՝ ավտոճանապարհային գործերով փորձաքննություններ կատարելու համար: Լաբորատորիայի կազմակերպման գործընթացն անցել է դժվարին ճանապարհ՝ նկատի ունենալով նյութատեխնիկական հագեցվածությունն ու կադրերի վերապատրաստումը¹:

Համալսարանի ռեկտորատի ջանքերի շնորհիվ շուտով լուծվում են սարքավորումների ձեռքբերման, կադրերի ընտրության ու պատրաստման խնդիրները: Այս հարցերում մեծ աջակցություն են ցույց տվել Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Թբիլիսիի և այլ գիտահետազոտական լաբորատորիաները:

¹ Стѣн Հովհաննիսյան Բ. Ս., Գիտահետազոտական կրիմինալիստիկական լաբորատորիայի գոյության երեք տարին և մեր հետագա խնդիրները, «Դատական փորձաքննության հարցեր», ժողովածու 1, Երևան, 1962, ԵՊՀ-ի հրատարակչություն, էջ 3:

Արդեն 1959թ. դեկտեմբերին կազմվում են լաբորատորիայի կանոնադրությունը, փորձաքննությունների մասին հրահանգը և այլ փաստաթղթեր, ընդունվում է իրավաբանական ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը, որով վստահվում և թույլատրվում է լաբորատորիայի աշխատակիցներին սկսելու փորձագիտական աշխատանքները:

Այսպիսով, չնայած առկա որոշ դժվարություններին՝ կադրերի պակաս, հարմարությունների, որոշ սարքավորումների բացակայություն, լաբորատորիան մեծ համբավ է ձեռք բերում՝ աշխատակիցների նվիրված ու տքնաջան աշխատանքի շնորհիվ: Այդ մասին են վկայում ինչպես պրակտիկան, այնպես էլ միութենական ուսումնասիրություններից ստացված կարծիքները: Սկզբնական ժամանակաշրջանում լաբորատորիայում կատարվում էին հիմնականում ձեռագրային, փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական, հետքաբանական, ձգաբանական, ավտոտեխնիկական և այլ տեսակի փորձաքննություններ: Լաբորատորիայում Լ. Պ. Օհանյանի և Ռ. Գ. Բաբաջանյանի ջանքերով հաջողությամբ կատարվել են նաև փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական փորձաքննություններ:

Լաբորատորիայի աշխատանքների հաջողությունները մեծամասամբ պայմանավորված էին գիտահետազոտական, փորձագիտական և ուսուցողական աշխատանքների համատեղմամբ, և որ ամենակարևորն էր՝ լաբորատորիան չունեի գերատեսչական ենթակայություն¹: Լաբորատորիայի աշխատակիցների ջանքերով հրատարկվում էին գիտամեթոդական, դիդակտիկ և այլ նյութեր, պատրաստվում էին զեկուցումներ պրակտիկ աշխատողների և ուսանողության համար:

Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին փորձաքննությունը՝ որոշակի եզրակացությամբ, իրականացվել է 1960թ.՝ վաստակաշատ գիտնական, Հայաս-

¹ Տե՛ս Օհանյան Լ., Առաջարկություններ դատական փորձաքննության վերաբերյալ, «Իրավաբանական թերթ», թիվ 8, 1999:

տանում կրիմինալիստիկայի գիտության նախահայր և հիմնադիր, իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Լ. Պ. Օհանյանի կողմից: Դա անձի նույնացումն էր ստորագրությամբ:

Այնուհետև, 1968 թվականին, լաբորատորիան տեղափոխվում է արդարադատության նախարարություն գերատեսչական ենթակայության տակ¹: Դրանից հետո մինչ այժմ կրիմինալիստիկական փորձաքննությունները կատարվում են ՀՀ արդարադատության, ՀՀ ոստիկանության վերջին տարիներին՝ նաև պաշտպանության նախարարության համակարգերում գործող լաբորատորիաներում ու կենտրոններում:

ՀՀ ոստիկանության համակարգում կրիմինալիստիկական փորձաքննությունները կատարվում են փորձաքրեագիտական բաժնի փորձագետների կողմից: Փորձաքրեագիտական բաժինը հիմնադրվել է դեռևս ՆԳ համակարգում գործող Գիտատեխնիկական բաժնի բազայի հիման վրա, որը հետագայում վերանվանվեց օպերատիվ-տեխնիկական բաժին, ներկայումս՝ փորձաքրեագիտական բաժին²:

Սակայն նշենք, որ աշխատանքները՝ դատական փորձաքննությունների հիմնախնդիրներով զբաղվող գիտահետազոտական լաբորատորիա ստեղծելու ուղղությամբ, չդադարեցին, և միայն 21-րդ դարում ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ղեկավարության, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի, ինչպես նաև ԵՊՀ ռեկտորատի համատեղ ջանքերի շնորհիվ իրավաբանական ֆա-

¹ Տե՛ս Давтян А. Г. Экспертиза в гражданском процессе, М., 1995, изд. Спарк, էջ 12:

² Տե՛ս Հովհաննիսյան Բ. Մ. Սովետական Հայաստանում դատական փորձաքննությունների զարգացման որոշ հարցեր; ՀՍՍՀ-ում դատական փորձաքննությունների արդյունավետության բարձրացման ուղիները և ժամանակակից հնարավորությունները, Երևան, 1984, էջ 80:

կուլտետի կրիմինալիստիկայի կաբինետի հիմքի վրա ստեղծվեց կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների պրոբլեմների հետազոտման գիտագործնական կենտրոն՝ գիտահետազոտական աշխատանքների կատարման նպատակով, որտեղ էլ ներկայումս կատարվում են փորձարարական աշխատանքներ:

Այնուհետև, 2004թ. հուլիսի 22-ին ՀՀ կառավարության հ 1127-N որոշմամբ 11.06.2001թ. «ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև թմրամիջոցների հսկողության և իրավապահ ոլորտներում համագործակցության մասին» միջկառավարական համաձայնագրի շրջանակներում հիմնադրվեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» մարմինը, պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակով: Իսկ 2005թ. սեպտեմբերի 26-ից սկսվել են իրականացվել հետևյալ տեսակների փորձաքննություններ.

ձեռագրաբանական, հեղինակագիտական, փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական, տնտեսագիտական, ապրանքագիտական:

Ներկայումս նշված հիմնարկում տեխնիկական վերագինման աշխատանքներ են տարվում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում կրիմինալիստիկայի ու դատական փորձաքննությունների հարցերով գիտահետազոտական աշխատանքների կատարելագործումը հրատապ խնդիր է ժամանակակից փորձաքննությունների բոլոր տեսակների կատարման հնարավորությունների ընդլայնման ու բարելավման նպատակով:

§ 2. Դատական փորձաքննության հասկացությունը

«Փորձաքննություն» եզրույթն առաջացել է լատիներեն «expertus» բառից, որը նշանակում է փորձառու, իրազեկ:

Դատական փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի՝ փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ:

Դատական փորձաքննությունը հետազոտությունների իրականացում է, որը կատարվում է քրեական և քաղաքացիական գործերով փաստական տվյալների բացահայտման նպատակով գործող քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրությանը համապատասխան, այն անձանց կողմից, որոնք տիրապետում են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի վերաբերյալ հատուկ գիտելիքների:

Այս ենթատեքստում կարևոր ենք համարում նախ բացահայտել հատուկ գիտելիքների հասկացությունը և բովանդակությունը՝ փորձագետի կարգավիճակի ճշգրտման, ինչպես նաև փորձագիտական հետազոտությունների դերի հստակեցման առումով:

Քրեական դատավարության տեսության և կրիմինալիստիկայի գիտության մեջ «հատուկ գիտելիքներ» հասկացության բովանդակությունը տարատեսակ քննարկումների առիթ է հանդիսանում:

Ավանդականորեն իրավաբանական գրականության մեջ, մեկնաբանելով նշված հասկացության բովանդակությունը, իրավագիտորեն նշվում է, որ դրանց մեջ չեն մտնում հանրահայտ, ինչպես նաև իրավաբանական գիտելիքները¹:

¹ Стѹ Белкин Р. С. Криминалистическая энциклопедия. М., 2000; Додин Е. В. Доказивание и доказательства в правоприменительной деятельности органов советского государственного управления. Киев; Одесса, 1976; Энциклопедия судебной экспертизы/ Под ред. Т. В. Аверьянова и Е. Р. Поссинской. М., 1999.

Իմացաբանական տեսությունում «հատուկ՝ գիտելիքներ», «հատուկ գիտական գիտելիքներ» բառակապակցություններ գոյություն չունեն, դրանք բնորոշ են միայն իրավական ոլորտին: Իրավաբանական ռուսալեզու գրականությունում «знания» (գիտելիք)՝ եզրույթի հետ հավասարաչափ օգտագործվում է նաև «познания» (իմացություն)՝ եզրույթը¹: Վ. Կ. Լիսիչենկոյի և Վ. Վ. Ցիրկալի կարծիքով՝ «հատուկ գիտելիքներ» և «հատուկ իմացություն» եզրույթները միարժեք են և վկայում են փորձագետի մասնագիտական գիտելիքների բազմազանության մասին²:

Մի շարք հեղինակներ կարծում են, որ «հատուկ գիտելիքներ» եզրույթի օգտագործումն ավելի ընդունելի է և ճիշտ³:

*Հատուկ-1.առանձնակի, կարևոր, 2.առանձին նշանակություն՝ կարևորություն ունեցող, 3.Առանձնահատուկ, բացառիկ, տե՛ս Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, Ա-Զ, էջ 840:

• Գիտելիք-մարդու՝ որևէ բնագավառի վերաբերյալ իմացածների՝ գիտեցածների ամբողջությունը, տե՛ս վերը նշված աշխատությունը, էջ 240:

• Իմացություն-1.իմանալը, 2.իմացական կարողություն, 4.կեցության արտացոլումը մտածողության մեջ, օբյեկտիվ աշխարհի ճանաչողությունը, տե՛ս վերը նշված աշխատությունը, էջ 488:

¹ Տե՛ս Зуйков Г. Г., Общие вопросы использования специальных познаний в процессе предварительного расследования, Криминалистическая экспертиза, Вып. 1, М., 1966, էջ 113–125; Сорокотягин И. Н., Специальные познания в расследовании преступлений, Ростов-на-Дону, 1984, էջ 5; Шиканов В. И., Актуальные вопросы уголовного судопроизводства и криминалистики в условиях современного научно-технического прогресса, Иркутск, 1978 և այլն:

² Տե՛ս Лисиченко В. К., Циркаль В. В., Использование специальных знаний в следственной и судебной практике, Киев, 1987, էջ 17:

³ Տե՛ս Надгорный Г. М., Гнесеологические аспекты понятия “специальные знания”, Криминалистика и судебная экспертиза, Вып. 21, Киев, 1980, էջ 37; Махов В. Н., Использование знаний сведущих лиц при расследовании преступлений, М., 2000, էջ 38–39; Сахнова Т. В., Судебная экспертиза, М., 2000, էջ 9–10:

Նախ նշենք, որ նման եզրույթը նոր չէ քրեական դատավարությունում: «Իրազեկ անձինք,-ինչպես սահմանված է Ռուսական Կայսրության քրեական դատավարության կանոնադրության 325 հոդվածով,-իրավիրվում են այն դեպքերում, երբ գործում հանդիպող հանգամանքների ճշգրիտ ընկալման համար անհրաժեշտ են հատուկ տվյալներ կամ փորձ՝ գիտության, արհեստի, արդյունաբերության կամ այլ զբաղմունքի բնագավառում»: Չնայած դրան, հենակետային է համարվում Ա. Ա. Էյսմանի այն ձևակերպումը, որ հատուկ գիտելիքները սահմանվում է որպես գիտելիքներ, որոնց չի տիրապետում ապացուցման հասցեատերը. «Այդ գիտելիքները հանրաճանաչ, հանրամատչելի չեն և չունեն զանգվածային տարածում...»¹: Չնայած որ նշել ենք հատուկ գիտելիքի գլխավոր հատկանիշը, սակայն պարզ չէ, թե ինչ կարելի է հասկանալ «ոչ հանրաճանաչ, ոչ հանրամատչելի և զանգվածային տարածում չունեցող գիտելիքներ» ասելով, և որոնք են դրանց սահմանազատման չափանիշները:

Գ. Գ. Ջուլկովը հատուկ գիտելիքները սահմանում է որպես «տեսության վրա հիմնված և փորձով ամրապնդված կրիմինալիստիկական տեխնիկայի հնարքների և միջոցների խոր և բազմակողմանի իմացություն, որն ապահովում է ապացույցների հայտնաբերումը, ֆիքսումը և հետազոտումը: Այդ իմաստով հատուկ գիտելիքների թվին են դասվում դատական բժշկության, քիմիայի, ֆիզիկայի, հրդեհային գործի հետ կապված ուսումնասիրությունները, ինչպես նաև ցանկացած այլ ուսումնասիրություն (մանկավարժական, լեզվաբանական, մաթեմատիկական և այլն), որոնց կիրառումն անհրաժեշտ է հանցագործությունների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության համար»²: Սահմանումը

¹ Տե՛ս Эйсман Э. Э., Заключение эксперта, М., 1967, էջ 91:

² Տե՛ս Зуйков Г. Г., Общие вопросы использования специальных познаний в процессе предварительного расследования, Криминалистическая экспертиза, Вып. 1, М., 1966, էջ 113-125:

պարունակում է գիտելիքների որոշակի բնագավառներ և օգտագործման նպատակներ: Միևնույն ժամանակ պահանջվում է որոշակիացում՝ կապված խոր և բազմակողմանի գիտելիքների հետ :

Քննարկվող բառակապակցությունը սահմանումների շարքում հասկացվում է այդ բառի նեղ և լայն իմաստով:

«Հատուկ գիտելիքներ ասելով,-նշում է Ջ. Մ. Սոկոլովսկին,-պետք է հասկանալ վկայությունների ամբողջություն, որը ստացվել է մասնագիտական նախապատրաստության արդյունքում, և որը հնարավորություն է տալիս այն տիրապետողին լուծել ինչ-որ ոլորտի խնդիրներ»¹: Դրանով իսկ հեղինակը խիստ սահմանափակ է ընդունում սահմանման առարկան:

Միաժամանակ Գ. Ե. Մորոզովը հատուկ գիտելիքներ ասելով՝ հասկանում է այն գիտելիքները, որոնցով օժտված է անձը՝ քիմիայի կամ կենսաբանության, մաթեմատիկայի կամ ֆիզիկայի, բնագիտության կամ էներգետիկայի, մանկավարժության կամ լեզվաբանության ոլորտում²:

Հատուկ գիտելիքների շարքին է դասվում, ինչպես կարծում է Յու. Գ. Կորոլևսկին, գիտության, տեխնիկայի կամ արվեստի որոշ ոլորտների գիտելիքների ամբողջությունը, որն օգտագործվում է ապացուցման նպատակով³:

Դեռևս 1864թ. Քրեական դատավարության կանոնադրության 112 հոդվածով սահմանվում էր, որ գործում հանդիպող հանգամանքների ճշգրիտ ընկալման համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ կամ հմտություն՝ գիտության,

¹Տե՛ս Соколовский З. М., Понятие специальных знаний, Криминалистика и судебная экспертиза, 1969, № 6, էջ 202:

²Տե՛ս Морозов Г. Е., Участие специалистов в стадии предварительного расследования, Автореф. дис., Саратов, 1977, էջ 10:

³Տե՛ս Корухов Ю. Г., Правовые основания применения научно-технических средств при расследовании преступлений, М., 1974, էջ 17-78:

արվեստի, արհեստի կամ այլ զբաղմունքի մեջ: Հատուկ գիտելիքների այսպիսի ընկալումը փոխառնված է շատ հեղինակների կողմից: Օրինակ, հատուկ գիտելիքները մասն ձևով է դիտարկում Ե.Ն. Ջուկը «...ցանկացած գիտելիք գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի բնագավառում (բացառությամբ նյութական և դատավարական իրավունքի), որը կիրառվում է արդարադատության իրականացման ընթացքում ծագող հարցերի լուծման համար»¹: Նույն ձևով է սահմանում այդ հասկացությունը Ն.Ե. Սուրիգան. «...գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի ոլորտում գիտելիքների և մասնագիտական փորձի ամբողջություն, որը կիրառվում է հետախուզման և ապացուցման հետ կապված տեղեկության ստացման, մշակման և օգտագործման համար՝ հանցագործությունների արագ և ամբողջական քննության կամ նախազգուշացման նպատակով»²:

Սակայն այդ եզրույթների սկզբնական իմաստը նշանակալից կերպով տարբերվում է նրանց օգտագործման ժամանակակից իմաստից: Սկզբնապես արվեստի հատուկ գիտելիքներ ասելով՝ հասկանում էին կարողությունը, հմտությունն ընդհանրապես: Նման բովանդակությունը բխում է այդ եզրույթի ընկալման պատմությունից: Ինչպես հայտնի է, «արվեստ» եզրույթը լայն առումով մարդկային վարպետության, պատկերացման և հնարամտության գործընթաց է և արդյունք՝ ի հակադրություն բնության: Արվեստում գոյություն ունի երկու ուղղություն: Առաջին ուղղությունը, որը սերում է Արիստիդեսից, պնդում է, որ արվեստը գործ ունի նմանակման հետ, ինչի արդյունքում մենք հաճույք ենք ստանում՝ զննելով իրական աշխարհի ճշգրիտ և խնամքով

¹Տե՛ս Зуев Е. Н., Непроцессуальная помощь сотрудника криминалистического подразделения следователя, М., 1975, էջ 89:

²Տե՛ս Сурыгна Н. Е., Повышение эффективности использования специальных технико-криминалистических познаний в раскрытии и расследовании преступлений. Дис., М., 1992, էջ 27:

կատարված պատկերները: Երկրորդ ուղղությունը, որ սկիզբ է առել Պլատոնից, բացատրում է, որ արվեստը ոգեշնչվում է Մուսաների կողմից այն ամենի համար, ինչ գտնվում է շրջապատող աշխարհում: Ինչպես նշում էր Կոնֆուցիոսը՝ «Ձգտիր ճշմարտության, առաջնորդվիր առաքինությանը, հենվիր մարդասիրության վրա և զվարճացիր ազատ արվեստներով»¹: Ազատ արվեստներ ասելով՝ նա հասկանում էր ծիսակատարություններ, երաժշտություն, հրաձգություն, դեկավարում, գիր և հաշիվ: Միջնադարում «արվեստ» հասկացությունն օգտագործվում էր ուսուցման ոլորտները մատնանշելու համար, որը դիտարկվում էր որպես իմացության գործիք՝ քերականության, տրամաբանության, հռետորության, հանրահաշվի, երաժշտության, երկրաչափության և աստղագիտության մեջ:

Կասկած է հարուցում բնորոշման մեջ «արիեստ»² հասկացության օգտագործումը: Ներկայումս փորձաքննության անցկացման ժամանակ հատուկ գիտելիքները «արիեստի մեջ» շատ հազվադեպ կարող են պահանջարկ ունենալ:

Վ. Ի. Գոնչարենկոն հատուկ գիտելիքների բնորոշման մեջ փոխառնված եզրույթները լրացնում է դրանց օգտագործման նպատակների մատնանշմամբ. «Չատուկ գիտելիքները քրեադատավարական իմաստով գիտելիքներ են գիտության, տեխնիկայի կամ արվեստի բնագավառում, որոնք օգտագործվում են հատուկ պատրաստություն ունեցող անձանց կողմից՝ ապացուցողական տեղեկատվություն

¹ Տե՛ս Конфуций, Суждения и беседы, СПб, Кристалл, 2001, էջ 55:

² Արիեստ-1. որոշակի հմտություններ պահանջող և ձեռքի պարզ գործիքներով կատարվող աշխատանք՝ զանազան բաներ պատրաստելու և շինարարական նպատակների համար, 2. այդպիսի աշխատանքի որևէ ճյուղի՝ բնագավառի հմտություն, 3. սովորություն դարձած գործ՝ արարք՝ վարքագիծ, տե՛ս Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 135:

ստանալու համար»¹: Վ. Կ. Լիսիչենկոն և Վ. Վ. Ցիրկալը գտնում են, որ հատուկ գիտելիքները «դատավարությունում ոչ հանրահայտ գիտական, տեխնիկական և գործնական գիտելիքներ են, որոնք ձեռք են բերվել մասնագիտական կրթության արդյունքում, կամ որոշակի մասնագիտությամբ անձի կողմից, որը ներգրավված է որպես մասնագետ կամ փորձագետ՝ քննիչին կամ դատարանին օգնելու, գործի հանգամանքների բացահայտման կամ այնպիսի խնդիրների մասին եզրակացություն տալու նպատակով, որոնց լուծման համար պահանջվում է դրանց օգտագործումը»²:

Գ. Ի. Գրամովիչի կողմից առաջարկված սահմանման մեջ բավականին ծավալուն տրված է հատուկ գիտելիքների օգտագործման նպատակային նշանակությունը: Ըստ նրա՝ «քրեական դատավարության իմաստով հատուկ գիտելիքները համակարգված գիտական գիտելիքներ, ունակություններ և հմարքներ են մարդկային գործունեության որոշակի ոլորտում (բացառությամբ դատավարական իրավունքի ոլորտի գիտելիքների), որոնք ձեռք են բերվում նպատակաուղղված մասնագիտական նախապատրաստության և աշխատանքի փորձի արդյունքում, կիրառվում են ապացույցների և հանցագործության մասին կողմնորոշող տեղեկատվության ստացման նպատակով, ինչպես նաև նպաստում են տեխնիկական միջոցների և գործի համար կարևորություն ունեցող էական հանգամանքների հայտնաբերմանը և ապացույցների հետ կապված աշխատանքների հմարքների բացահայտմանը»³:

¹ Տե՛ս Гончаренко В. И., Использование данных естественных и технических наук в уголовном судопроизводстве, Киев, 1980, էջ 114:

² Տե՛ս Лисиченко В. К., Циркаль В. В., Использование специальных знаний в следственной и судебной практике, Киев, 1987, էջ 22:

³ Տե՛ս Грамович Г. И., Тактика использования специальных знаний в раскрытии и расследовании преступлений, МВШ МВД СССР, 1987, էջ 12:

Պարզ չեն Գ. Մ. Նադգորնու սահմանման մեջ տրված հատուկ գիտելիքների օգտագործման ոլորտն ու նպատակները. «հատուկ գիտելիքներ ասելով՝ հասկանում ենք այն գիտելիքները, որոնք ստացվել են գիտական, ինժեներական և արտադրական մասնագիտությունների մասնագիտական նախապատրաստության արդյունքում, ինչպես նաև հանրությանը հայտնի այլ գիտելիքները, որոնք անհրաժեշտ են գործի խնդիրների լուծման համար»¹: Հեղինակը կարևոր է համարում ընդգծել հատուկ գիտելիքների կապը մասնագիտական նախապատրաստության հետ:

Ա. Ա. Ջատակովը և Յու.Ն. Օրոպայը պնդում են, որ «դատավարությունում հատուկ գիտելիքներ ասելով՝ հասկանում են իրազեկ անձանց պրակտիկայում ստուգված մասնագիտական գիտելիքները, նրանց կարողությունը՝ օգտագործել գիտատեխնիկական միջոցներ և հնարքներ քննչական գործողության ընթացքում ապացույցների հայտնաբերման, ֆիքսման և ուսումնասիրության նպատակով»²: Մեր կարծիքով, «պրակտիկայում ստուգված մասնագիտական գիտելիքներ» արտահայտությունը բավականին դժվար է հասկանալ:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը, կարծում ենք՝ հատուկ գիտելիքների հասկացության բովանդակության մեջ պետք է մտնեն նյութական և դատավարական իրավունքի գիտության շրջանակներից դուրս այն բոլոր գիտելիքները, որոնք անհրաժեշտ են ապացուցման գործընթացում դատական ապացույցների հետազոտման, ինչպես նաև այլ երևույթների ու փաստերի ուսումնասիրման, հետազոտման համար:

¹Տե՛ս Надгорный Г. М., Гнесеологические аспекты понятия "специальные знания", Криминалистика и судебная экспертиза, Вып. 21, Киев, 1980, էջ 42:

²Տե՛ս Затаков А. А., Оропай Ю. Н., Использование научно-технических средств и специальных знаний в расследовании преступлений, Киев, 1980, էջ 81:

ՀՀ ՔԴՕ 243 հոդվածում նշվում են փորձաքննությունն նշանակելու և կատարելու հիմքերը. «Փորձաքննությունը կատարվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի որոշման հիման վրա, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառներում հատուկ գիտելիքներ: Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետի, ընթերակաների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննությունն նշանակելու անհրաժեշտությունից»:

Փորձաքննությունն նշանակելու համար հիմք են հանդիսանում այն փաստական տվյալները, որոնք մատնանշում են հանցագործության դեպքի, հանցագործության կատարման մեջ որոշակի անձի մեղավորության, ինչպես նաև արարքի հանցավորությունն ու պատժելիությունը բացառող և քրեական գործով պարզաբանման ենթակա այլ հանգամանքների ապացուցման համար հատուկ գիտելիքների օգտագործման անհրաժեշտությունը:

Հասկանալի է, որ քրեական հետապնդման մարմինն, իր հայեցողությամբ է լուծում քրեական գործով փորձաքննության կատարման անհրաժեշտության հարցը: Թեև իրականում քրեական հետապնդման մարմնի այդ հնարավորությունն օրենսդիրը որոշակի առումով սահմանափակել է՝ ուղղակի նախատեսելով մի շարք դեպքերում փորձաքննության նշանակման պարտադիր դեպքեր:

Համաձայն ՀՀ ՔԴՕ 108 հոդվածի՝ «քրեական գործով վարույթում ստորև նշված հանգամանքները կարող են հաստատվել միայն հետևյալ ապացույցները նախապես ստանալով և հետազոտելով.

1. մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը՝ դատաբժշկական փորձագետի եզրակացությունը.
2. հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով մեղադրյալի ունակ չլինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու դրանք՝ դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությունը.
3. վկայի կամ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալելու կամ վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները՝ դատահոգեբուժական փորձագետի եզրակացությունը.
4. գործի համար նշանակություն ունենալու դեպքում՝ տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը՝ տարիքի մասին փաստաթուղթը, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատաբժշկական կամ դատահոգեբանական բնագավառների փորձագետների եզրակացությունները»:

Փորձաքննություն նշանակելու մասին որոշումը պետք է բովանդակի փորձաքննություն նշանակելու հիմքերը, փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները և այլ օբյեկտները, նշելով՝ երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել, իսկ քրեական գործի նյութերով փորձաքննություն կատարելիս՝ տեղեկություններ, որոնց վրա կարող են հիմնվել փորձագետի հետևությունները, փորձագետին առաջադրված հարցերը, փորձագիտական հիմնարկի անվանումը կամ անձի ազգանունը, որին հանձնարարվում է փորձաքննության կատարումը (ՀՀ ՔԴՕ 244 հոդված):

ՀՀ ՔԴՕ 247 հոդվածի պահանջներին համապատասխան փորձաքննություն նշանակելիս և կատարելիս կասկածյալը, մեղադրյալը և տուժողն ունեն որոշակի իրավունքներ.

1. Մինչև փորձաքննություն կատարելը ծանոթանալ փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը և ստանալ իրենց իրավունքների պարզաբանում:

2. Բացարկ հայտնել փորձագետին:

3. Միջնորդել, որ փորձագետ նշանակվի իր մատնանշած անձանց թվից:

4. Փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում միջնորդել, որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն:

5. Փորձագետին առաջադրվեն լրացուցիչ հարցեր:

6. Քննիչի թույլտվությամբ ներկա գտնվել փորձաքննության կատարմանը:

7. Բացատրություններ տալ փորձագետին:

8. Քննիչի կողմից փորձագետի եզրակացությունն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում ծանոթանալ փորձագետի եզրակացությանը:

9. Մասնակցել իր միջնորդությամբ կատարվող՝ փորձագետի հարցաքննությանը:

Թվարկված իրավունքներից օգտվում է նաև այն անձը, ում նկատմամբ պետք է լուծվի բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հարցը, եթե դա թույլ է տալիս նրա հոգեկան վիճակը:

Օրենսդիրը, փորձաքննություն նշանակելու և կատարելու հետ կապված, անարդարացիորեն սահմանափակել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247 հոդվածում նշված սուբյեկտների շրջանակը՝ համապատասխան իրավունքներից զրկելով կասկածյալի, մեղադրյալի պաշտպա-

նին, ինչպես նաև տուժողի ներկայացուցչին ու օրինական ներկայացուցչին¹:

Քննիչը փորձաքննությունն նշանակելու մասին իր կայացրած որոշումը, հետազոտման ենթակա օբյեկտը և մյուս անհրաժեշտ նյութերը, երբեմն նաև քրեական գործն ուղարկում է փորձագիտական հիմնարկի ղեկավարին: Փորձաքննությունը կատարում է այն փորձագետը, որի ազգանունը նշված է որոշման մեջ: Իսկ եթե որոշման մեջ որոշակի փորձագետ նշված չէ, ապա փորձագիտական հիմնարկի ղեկավարը պետք է որոշի, թե տվյալ փորձագիտական հիմնարկում աշխատող ո՞ր փորձագետն է այն կատարելու (ՀՀ ՔԴՕ 248 հոդված):

Ըստ ՀՀ ՔԴՕ հոդված 244-ի, փորձաքննությունն նշանակելու որոշման մեջ քննիչը պետք է ցույց տա, թե ինչ նյութեր են ուղարկվում փորձաքննության: Եթե քրեական գործը չի ուղարկվում, կողմնորոշող տվյալները պետք է գրվեն որոշման նկարագրական մասում: Պետք է նշվեն. երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են հայտնաբերվել կամ ձեռք բերվել հետազոտման ենթակա իրեղեն ապացույցները: Որոշման մեջ նշվում են նաև փորձագիտական լուծման ենթակա հարցերը և այլն:

ՀՀ ՔԴՕ 252 հոդվածի ուժով փորձագետի եզրակացությունն ստանալուց հետո փորձաքննությունն նշանակած պաշտոնատար անձն իրավունք ունի հարցաքննել փորձագետին՝ եթե եզրակացությունը բավարար չափով պարզ չէ, ունի բացեր, որոնք լրացնելու համար չեն պահանջվում լրացուցիչ հետազոտություններ կամ անհրաժեշտություն է առաջացել ճշտելու փորձագետի կողմից կիրառված մեթոդները և հասկացությունները: Փորձագետի հարցաքննությունը կատարվում է ՔԴՕ 205, 206 և 209 հոդվածների պա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Երևան, 2003, էջ 186:

հանջները պահպանելով, այսինքն՝ վկայի հարցաքննության կանոններով: Հարցի նման կարգավորումը չի կարելի իրավաչափ համարել: Փորձագետը և վկան դատավարական տարբեր կարգավիճակներ ունեն, քրեական գործով վարույթին ներգրավվում են տարբեր հիմքերով և նպատակներով, հետևաբար՝ տարբեր են նրանց հարցաքննության առարկաները¹:

Փորձագետին չի կարելի հարցաքննել մինչև նրա կողմից եզրակացությունն ներկայացնելը: Փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

Փորձագետի եզրակացությանը ծանոթանում են կասկածյալը, մեղադրյալը և տուժողը: Նրանք իրավունք ունեն եզրակացության կապակցությամբ բացատրություններ տալ կամ առարկություններ անել, միջնորդել փորձագետին առաջադրելու նոր հարցեր կամ նշանակել կրկնակի փորձաքննություն:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը թույլատրում է հանցագործությունների մասին հաղորդումները ստանալիս՝ գործ հարուցելու օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում որոշ գործողությունների կատարման հետ նաև նշանակել փորձաքննություն (ՀՀ ՔԴՕ 180 հոդվ. 2-րդ մաս): Այս հարցի մասին գրականության մեջ կան կարծիքներ, որոնք արտահայտվում են հօգուտ նրա, որ քննչական մարմիններին իրավունք տրվի որոշակի դեպքերում նշանակել փորձաքննություն մինչև քրեական գործի հարուցումը²:

Դրա անհրաժեշտությունն առանձնապես զգացվում է այնպիսի գործերի հարուցումից առաջ, ինչպիսիք են մարմ-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Երևան, 2003, էջ 195:

² Տե՛ս Жогин Н. В., Фактулин Ф. Н., Предварительное следствие в советском уголовном процессе, М., 1965, էջ 13:

նական վնասվածքներ հասցնելը, սեռական հասունացման չհասած անձի հետ սեռական հարաբերություն ունենալը:

Նույն կերպ պետք է վարվել նաև ինքնասպանության և հանկարծամահության դեպքերում: Եթե բռնի մահվան կամ ինքնասպանության կասկած կա, ապա սկզբում պետք է նշանակվի դատաբժշկական փորձաքննություն, կատարվի տեղազննություն, նոր կորոշվի քրեական գործ հարուցելու հարցը:

Մի շարք դեպքերում կրիմինալիստիկական կամ այլ փորձաքննությունների կատարումը համարվում է կատարված հանցագործության վերաբերյալ հաղորդումների և հայտարարությունների ստուգման միակ հնարավորությունը:

Այս և նման բնույթի հարցեր հաշվի առնելով՝ անհրաժեշտ համարվեց նշված հոդվածի առկայությունը գործող ՔԴՕ-ում:

Խոսելով փորձագիտական հետազոտության՝ որպես գիտական հետազոտության տեսակի մասին, անհրաժեշտ ենք համարում վերլուծել կրիմինալիստիկական հետազոտությունների խնդիրները: Նշենք, որ դրանք միանշանակ պետք է համապատասխանեն կատարվող ժամանակակից հետազոտության հնարավորություններին, հակառակ դեպքում դրանք տվյալ հետազոտությունների շրջանակում իրենց լուծումը չեն կարող ստանալ, հետևաբար, կվերածվեն ձևական իրողությունների: Բացի դրանից, ցանկացած տեսակի հետազոտման խնդիրները չեն սահմանափակվում միայն այդ տեսակի հետազոտմամբ լուծվող հարցերի շրջանակով, այլ ընդգրկում են նաև հետազոտվող օբյեկտների հետ աշխատելու կանոնների մշակումը, մեթոդիկաների կատարելագործումը և այլն:

Մասնավորապես, փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման խնդիրների կապակցությամբ կցանկանայիք ընդգծել, որ քննարկվող հետազոտման

խնդիրների իրականացման ընթացքում հնարավոր է լուծել նույնացման հետ չկապված և նույնացման հետ կապված հարցեր:

Առաջինների թվին, մասնավորապես, կարելի է դասել.

- փաստաթղթի լրացման բացարձակ և հարաբերական ժամանակի պարզաբանումը,

- տարբեր փաստաթղթերի ընդհանրության պարզաբանումը,

- փաստաթղթի պահպանման պայմանների պարզաբանումը,

- փաստաթղթի սկզբնական բովանդակության փոփոխման փաստի և սկզբնական տեքստի վերականգնման մեթոդի պարզումը,

- վատ տեսանելիի, անտեսանելիի, գաղտնագրերի, ինչպես նաև ջնջված, լաքայապատված, սոսնձապատված կամ այրված փաստաթղթերի վերականգնումը,

- գրելու կամ տպագրական նյութի պարզաբանումը,

- փաստաթղթի պատրաստման եղանակի պարզաբանումը,

- փաստաթղթի առանձին վավերապայմանների պատրաստման եղանակի պարզաբանումը և այլն:

Նույնացման հետ կապված հարցերի շարքում կարելի է նշել.

- պարզել փաստաթղթի կամ դրա մի մասի պատրաստման համար կիրառված որոշակի տպագրական մեքենաները և այլ միջոցները,

- մեքենագրված տեքստը մեքենագրողի պարզաբանումը,

- ամբողջ փաստաթղթի վերականգնումն առանձին մասերով¹:

¹ Стѹ Криминалистика, Institutiones, под редакцией В. А. Образцова, М., 1997, Юристъ, тѹ 181:

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունի փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման խնդիրների նաև այլ դասակարգում, մասնավորապես, վերջիններս դասակարգվում են հետևյալ կերպ. դիագնոստիկական խնդիրներ, նույնացման խնդիրներ և դասակարգման խնդիրներ:

Առաջինների թվին դասվում են. փաստաթղթի պատրաստման եղանակի, փաստաթղթի կամ դրա առանձին մասերի պատրաստման ժամանակի պարզաբանումը, փաստաթղթի տեքստում կատարված փոփոխության փաստի և եղանակի պարզաբանումը, ինչպես նաև սկզբնական տեքստի վերականգնումը:

Երկրորդների շարքում նշվում են. առանձին մասերը մեկ փաստաթղթին պատկանելու փաստը պարզաբանելը, փաստաթուղթը պատրաստելու կամ դրա մեջ փոփոխություններ մտցնելու համար կիրառվող տեխնիկական միջոցների, ինչպես նաև փաստաթղթի կամ դրանում փոփոխություններ կատարելու համար կիրառվող նյութերի նույնացումը, մեքենագրողին պարզաբանելը:

Երրորդների թվում նշվում է հետևյալը. որոշակի օբյեկտի առարկաների որոշակի խմբին պատկանելու փաստի վերհանումը, օրինակ՝ մեքենագիր տեքստը հետազոտելով՝ փորձագետը հետևություններ է անում գրամեքենայի տեսակի, մակնիշի և այլնի մասին¹:

Գտնում ենք, որ կրիմինալիստիկական հետազոտման խնդիրներին անդրադառնալը, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունի այն իմաստով, որ շատ հաճախ կրիմինալիստիկական հետազոտման խնդիրները շփոթում են տվյալ հետազոտմամբ լուծվող հարցերի հետ:

¹ St'u Современные возможности судебной экспертизы, авторский коллектив, научный редактор Ю. Г. Корухов, М., 2000, РФЦСЭ, էջ 25:

Մասնավորապես, այս առումով մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման խնդիրներն այդ հետազոտմամբ լուծվող հարցերից հստակ տարանջատելու համար հարկ է հաշվի առնել, որ այդ տեսակի հետազոտման խնդիրները կարող են դասակարգվել հիմնականում երեք խմբի՝ դիագնոստիկ, նույնացման հետ կապված և նույնացման հետ չկապված խնդիրներ, իսկ հետազոտման ընթացքում լուծվող հարցերը թեև բխում են այդ խնդիրներից, սակայն կարող են դասակարգվել ըստ տարբեր հիմքերի և առավել մանրամասն¹:

Այս կապակցությամբ միանշանակ պետք է հավաստենք, որ որոշակի հետազոտության խնդիրներն ավելի ընդհանրական բնույթ ունեն, քան դրա ընթացքում հնարավոր լուծվող հարցերը: Այդ մասին արդեն վերը խոսվեց, միայն ավելացնենք, որ որոշակի հետազոտման ընթացքում առաջադրված որոշակի հարցերի լուծումն անուղղակիորեն վկայում է նաև տվյալ հետազոտության համար նախատեսված խնդիրների իրականացման մասին: Ասվածը մասնավորեցնելով փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման նկատմամբ՝ կարող ենք արձանագրել, որ այդ տեսակի հետազոտման խնդիրները հիմնականում նույնացման և դիագնոստիկ բնույթի են, որոնց շրջանակներում կարող են հետազոտվել հետևյալները. գրելու նյութի և գրող գործիքի տարբերակում, փաստաթղթի սկզբնական բովանդակության փոփոխության հայտնաբերում, փաստաթղթի պատրաստման վաղեմության որոշում, փաստաթղթի պատրաստման եղանակի, այն արտադրողի կամ պատրաստողի

¹ St'u Назначение и производство судебных экспертиз, пособие для следователей, судей и экспертов, ВНИИСЭ, отв. ред. Г. П. Аринушкин, А. Р. Шляхов, М., 1988, изд-во Юридическая литература, էջ 63; Криминалистика, под ред. И. Ф. Герасимова и Л. Я. Драпкина, М., 2000, изд. Высшая школа, էջ 175:

հայտնաբերում, ստորագրությունների, այրված, խուճացած, զուճաթափված կամ այլ եղանակով անտեսանելի կամ վատ տեսանելի դարձած տեքստերի, ինչպես նաև մեքենագիր, տպագիր, պատճենահաված տեքստերի նույնացում:

Վերը թվարկվածները փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման հիմնահարցերն են, որոնք որոշակի հետազոտության ընթացքում կարող են ունենալ մասնավոր դրսևորումներ:

Մեր կողմից շարադրված խնդիրների լուծման նպատակով փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտության ընթացքում կիրառվում են հետազոտման տարբեր մեթոդներ՝ ֆիզիկական, քիմիական, տեխնիկական, լուսանկարչական և այլն:

Նշենք, որ ցանկացած հետազոտման դեպքում նախ պետք է կիրառվեն փաստաթղթի ամբողջականությունը չվնասող հետազոտման մեթոդիկաներ, և եթե դրանք արդյունք չեն տալիս, ապա միայն դրանից հետո կարելի է կիրառել փաստաթղթի ամբողջականությանը վտանգ սպառնող մեթոդիկաներ, որոնք հիմնականում ֆիզիկա-քիմիական, քիմիական բնույթի մեթոդներն են:

Մասնագիտական գրականության մեջ այս առումով երաշխավորվում են նախ ֆիզիկական, տեխնիկական և այլ ոչ քիմիական մեթոդիկաների կիրառումը (փաստաթղթի հետազոտումը մանրադիտակի, խոշորացույցի, տեսանելի և անտեսանելի ճառագայթներով, ցայտերանգային (կոնտրաստային) և զուճաթաբերիչ լուսանկարման մեթոդներով և այլն), ապա ֆիզիկա-քիմիական, քիմիական մեթոդիկաների կիրառումը (փաստաթղթի հետազոտումը դիֆուզիա-պատճենահանման եղանակներով, քիմիական հակազդակ-

ների ազդեցությանը ենթարկելով, թղթի քրոմատոգրաֆիայի և այլ մեթոդներով)¹:

Մեր քրեադատավարական օրենսդրությունում բացակայում է փորձագիտական հետազոտության օբյեկտների հասկացությունը, նրանց տեղափոխման կարգը և նրանց հետ վերաբերվելու պայմանները: Տեղին կլինի նշել հետևյալ հասկացությունը՝ օգտագործելով օբյեկտների հայտնի սահմանումը՝ «Փորձագիտական հետազոտության օբյեկտը նյութական առարկա է, որը պարունակում է փորձագիտական խնդրի լուծման համար անհրաժեշտ տեղեկատվություն. իրեղեն ապացույցներ, դիակ, համեմատական հետազոտության համար օգտագործվող նմուշներ, քրեական գործի այլ նյութեր»²: Նորմում պետք է նշել, որ փորձագիտական հետազոտության օբյեկտների հավաստիությունը և թույլատրելիությունը երաշխավորում է փորձաքննությունը նշանակած մարմինը:

Որակյալ փորձագիտական հետազոտության նախապայման է հանդիսանում նմուշների ինացաբանական (գնոսեոլոգիական) և իրավաբանական բնույթի պարզաբանումը: Սրանից ելնելով՝ ենթադրում ենք, որ անհրաժեշտ է ավելի մանրամասն կանգ առնել «համեմատական հետազոտման նմուշներ» հասկացության վրա:

Այս ենթատեքստում կարևոր ենք համարում քննարկել նաև դատական փորձաքննության առարկայի խնդիրները:

¹ Ст'ю Корухов Ю. Г. Криминалистическое исследование документов. ВЗЮИ, М., 1972, էջ 25; David Ellen, The Scientific Examination of Documents. Methods and techniques. Second edition, Bristol, PA, 1997, Taylor & Francis, էջ 90; Petre R. De Forest, R.E. Gaensslen and Henry C. Lee, Forensic Science. An Introduction to Criminalistics, New York, 1983, McCraw Hill, էջ 365:

² Ст'ю Белкин Р. С., Криминалистика. Учебный словарь-справочник, М., 1999, էջ 127:

Դատական փորձաքննության առարկայի բովանդակությունն անհրաժեշտ է դիտարկել երկու դիրքորոշումից՝ գիտական եւ գործնական: Մի կողմից՝ դատական փորձաքննության առարկա են հանդիսանում օբյեկտների հատկանիշների եւ դրանց փոխակերպումների օրինաչափությունները՝ կապված հանցագործության դեպքի կատարման հետ, իսկ, մյուս կողմից՝ դատական փորձաքննության առարկա են հանդիսանում գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի բնագավառներում հատուկ գիտելիքների հիման վրա բացահայտվող փաստացի տվյալները (գործի հանգամանքները) եւ քրեական կամ քաղաքացիական գործի նյութերի հետազոտությունը:

Կոնկրետ փորձաքննության առումով դրա առարկան է հանդիսանում փորձագիտական խնդիրը, որը պետք է լուծի փորձագետը՝ հատուկ գիտելիքների համապատասխան ծավալի հիման վրա կատարվող հետազոտության ընթացքում եւ արդյունքներով՝ գիտատեխնիկական միջոցների ու մեթոդների օգտագործմամբ:

Փորձաքննության օբյեկտի հասկացությունը ևս հարկ է դիտարկել գիտության ու պրակտիկայի տեսանկյունից: Դատական փորձաքննության գիտության հասկացության առումով դատական փորձաքննության օբյեկտն այն օբյեկտների տեսակը (ծեւը), առարկաների որեւէ կարգը, կատեգորիան է, որոնք բնորոշվում են որոշակի հատկանիշներով: Փորձագիտական պրակտիկայում դա փորձագետի հետազոտման համար ստացվող որոշակի առարկան է (առարկաներ): Դրանք հիմնականում իրեղեն ապացույցներ են: Դրանց թվին են դասվում՝ մարդկանց եւ կենդանիների, առարկաների, մեխանիզմների պատկերները, այդ առարկաների մասերը, իրերը, նյութերը, փաստաթղթերը եւ տպագրական արտադրանքը, մարդու, կենդանիների դիակները եւ

դրանց մասերը, բուսական եւ կենդանական ծագում ունեցող տարաբնույթ օբյեկտները եւ այլն:

Բացի դրանից, փորձաքննության օբյեկտների թվին են դասվում իրադարձությունները, փաստերը, երևույթներն ու ոչ նյութական այլ օբյեկտները, որոնց ուսումնասիրման անհրաժեշտությունը քրեական գործի քննության ընթացքում պահանջում է հատուկ գիտելիքներ ու փորձագիտական հետազոտության կատարում: Սակայն այդ իրադարձությունների, փաստերի, երևույթների եւ ոչ նյութական այլ օբյեկտների ուսումնասիրությունն իրականացվում է դրանց մասին տեղեկատվության նյութական կրիչների հետազոտման միջոցով:

Փորձաքննության առարկա և օբյեկտ հասկացությունների հետ սերտորեն կապված է «համեմատական հետազոտման նմուշներ» հասկացությունը, որը փորձագետի հետազոտական գործունեության հիմնական գործոններից մեկն է և բավականին մեծ տեսական և գործնական հետաքրքրություն է առաջացնում:

Ավելին, նմուշներ ստանալու հարցի կարևոր նշանակությամբ է, թերևս, պայմանավորված ՀՀ ՔԴՕ-ի 55-րդ հոդվածի չորրորդ մասի առաջին ենթակետում կատարված փոփոխությունը, համաձայն որի քննիչին իրավունք վերապահվեց մինչև քրեական գործ հարուցելը նախապարաստվող նյութերով նաև հետազոտման համար վերցնել նմուշներ:

«Համեմատական հետազոտման նմուշ» հասկացության վերաբերյալ իրավաբանական գրականությունում տարբեր տեսակետներ կան: Իհարկե, յուրաքանչյուր հրատարակված սահմանում պարունակում է համեմատական հետազոտման նմուշի հասկացության ճիշտ ընկալման համար

հիմնական բնութագրումներ¹: Թերևս, ոչ բոլոր առաջարկված սահմանումներին կարելի է համաձայնել:

Որոշ ձևակերպումներում այնքան էլ հաջող չեն օգտագործված եզրույթները, չի պարունակվում «նմուշ» հասկացությունը՝ առարկաների առումով, կամ էլ մեկնաբանությունը հաշվի չի առնում այն բոլոր քննչական գործողությունները, որոնց ընթացքում կարող են նմուշներ վերցվել²:

Համեմատական հետազոտման նմուշ ասելով՝ հասկացվում է՝ «...նյութական օբյեկտ, որն անկասկած սերում է այլ օբյեկտից և հանդիսանում է նրա մասը կամ արտացոլում է նրա հատկությունները, որն ստացվում է հատուկ հետազոտությունների անցկացման համար, ճանաչվող օբյեկտի սեռային (խմբային) պատկանելության վերականգնման և ինքնության ճանաչման նպատակով, ինչպես նաև քննվող հանցագործության այլ հանգամանքների վերականգնման համար»³:

¹ Տե՛ս Дулов А. В., Права и обязанности участников судебной экспертизы, Минск, 1962, էջ 165; Петрухин И. Л., Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, էջ 37; Жбанков В. А., Понятие и процессуальное положение образцов для сравнительного исследования, Минск, 1965, էջ 71; Винберг А. И., Производные вещественные доказательства и образцы для сравнительного исследования в советском уголовном процессе, Соц. законность, 1966, № 3, էջ 22; Грамович Г. И., Тактика использования специальных познаний в раскрытии и расследовании преступлений, Минск, 1987, էջ 32:

² Տե՛ս Дулов А. В., Права и обязанности участников судебной экспертизы, Минск, 1962, էջ 165; Петрухин И. Л., Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, էջ 37; Жбанков В. А., Понятие и процессуальное положение образцов для сравнительного исследования, Минск, 1965, էջ 71; Винберг А. И., Производные вещественные доказательства и образцы для сравнительного исследования в советском уголовном процессе, Соц. законность, 1966, № 3, էջ 22:

³ Տե՛ս Долженко Н. И., Понятие образцов для сравнительного исследования и их природа, Вестник криминалистики. Вып. 1, М., 2000, էջ 47:

Նշենք, որ այլ օբյեկտից անկասկած ծագման դեպքում ոչ բոլոր համեմատելի օբյեկտները կարող են համարվել նմուշներ: Օրինակ, ֆոնոգրաման մարդու ձայնի ձայնագրումն է մագնիսային կրիչի վրա և այն չի ծագում այլ օբյեկտից: Նմանապես, եթե դատաձգաբանական փորձաքննության իրականացման ընթացքում որպես համեմատական նյութ ներկայացվի հրազեն, ապա այն չի ծագում այլ օբյեկտից, այլ պատրաստված է արտադրական պայմաններում որպես սկզբնական օբյեկտ, և այդ դեպքում կհամեմատվեն հրազենի չափանիշները:

Մեկ այլ սահմանման համաձայն. «Նմուշներն առարկաներ են, որոնք ստեղծվել կամ փոփոխվել են իրենց ապացույցների ձևավորման եղանակին նման ձևով և հենց այդ օբյեկտի ազդեցության ներքո»¹:

Գրեթե բոլոր սահմանումներում տրված է նմուշի գլխավորատրիբուտը՝ համեմատական հետազոտության համար անհրաժեշտ հատկանիշների առկայությունը նմուշում: Անկախ նրանից՝ դրանք ստեղծվել են, թե ստացվել այլ օբյեկտից, նմուշը պետք է իր մեջ պարունակի համեմատության համար բավարար և օգտակար տվյալներ իդենտիֆիկացիայի խնդիրների իրականացման համար:

Այնուամենայնիվ, մենք հակված ենք կարծելու, որ անկախ համեմատական հետազոտման նմուշի տարաբնույթ սահմանումներից, համեմատական հետազոտման նմուշը նյութական առարկա, օբյեկտ է, որն ինչպես որակական, այնպես էլ քանակական առումով պիտանի է համեմատական հետազոտում իրականացնելու համար:

Քննարկման առիթ է հանդիսանում համեմատական հետազոտման նմուշների դատավարական բնույթի խնդիրը:

¹ Տե՛ս Орлов Ю. К., Гносеологическая сущность и процессуальная форма образцов для сравнительного исследования. Труды ВНИИСЕ. Вып. 5, М., 1973, էջ 178:

Գործող օրենսդրությունը չի սահմանում, թե արդյոք դրանք ինքնուրույն ապացույցի արժեք ունեն: Գոյություն ունեն երկու տեսակետներ: Ըստ առաջինի՝ համեմատական հետազոտման նմուշներն ապացույցի ինքնուրույն տեսակ են և բնորոշվում են որպես իրեղեն ապացույցի տարատեսակ¹: Համաձայն երկրորդի՝ համեմատական հետազոտման նմուշներն ինքնուրույն ապացույցի արժեք չունեն²:

Մեր կարծիքով, պետք է ելնել հենց իրեղեն ապացույցի հասկացությունից: Ըստ ծագման բնույթի իրեղեն ապացույց են հանդիսանում այն նյութական օբյեկտները, որոնք ծագել են հանցագործության ընթացքում կամ օգտագործվել են հանցագործության իրականացման ժամանակ, հանցագործության նախապատրաստվելիս և այլն: Կարծում ենք, որ համեմատական հետազոտման նմուշների ձևը կախված է հենց օբյեկտի բնույթից: Նմուշների սահմանման ժամանակ կարելի է հիմք ընդունել ձևավորման գործընթացը:

Նմուշները, որոնք հատկապես ձեռք են բերվել համեմատական հետազոտման իրականացման համար, իրեղեն ապացույց չեն: Չի կարելի իրեղեն ապացույցների թվին դասել այն օբյեկտները, որոնք ծագել են մինչև հետազոտվող դեպքի տեղի ունենալը և կապված չեն դրա հետ: Համեմատական հետազոտման նմուշները միայն առանձին դեպքե-

¹ Стѣ Дулов А. В., Права и обязанности участников судебной экспертизы, Минск, 1962, էջ 168-169, Галкин В. М., Средства доказывания в уголовном процессе, ч. 1. М., 1967, էջ 32; Петрухин И. Л., Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, էջ 148; Рахунов Р. Д., Вещественные и письменные доказательства в советском уголовном процессе, "Ученые записки ВИЮН". Вып. 10, М., 1959, էջ 208-209:

² Стѣ Белкин Р. С., Эксперимент в следственной, судебной и экспертной практике, М., 1964, էջ 166-167; Винберг А. И., Образцы для сравнительного исследования, М., 1962, էջ 45-49; Жбанков В. А., Получение образцов для сравнительного исследования, М., 1992, էջ 5; Селиванов Н. А., Вещественные доказательства, М., 1971, էջ 12, 15:

րում կարող են լինել իրեղեն ապացույցներ, եթե մինչ այդ դրանք բնորոշվել են որպես այդպիսին:

Ընդհանրացնելով նշենք, որ դատական փորձաքննությունը բովանդակային առումով համարվում է գիտական հետազոտության յուրահատուկ տեսակ՝ ենթարկվելով գիտական հետազոտությանը ներկայացվող պահանջներին:

Կարող ենք հավաստել, որ դատական փորձաքննությունը բնութագրող առանձնահատուկ գծերն են. նախ այն կատարվում է որոշակի բնագավառում հատուկ գիտելիքներ ունեցող անձի կողմից՝ հատուկ գիտական մեթոդիկաների կիրառմամբ, ապա հստակ դատավարական և ոչ դատավարական կանոնակարգված կարգով, իսկ դրա արդյունքները, թեև դատավարական առումով հավասարազոր են մյուս ապացույցներին, այնուամենայնիվ, ի տարբերություն մյուս ապացույցների՝ ծագում են գիտական հիմքերի վրա:

§ 3. Դատական փորձաքննությունների տեսակները

Դատական փորձաքննությունների դասակարգումն ունի էական տեսական եւ գործնական նշանակություն, քանի որ հնարավորություն է ընձեռում առավել խոր ուսումնասիրել դրանք, ինչպես նաև որոշել դրանց մեթոդական եւ կազմակերպական ապահովման հարցերը:

Դատական փորձաքննությունները դասակարգվում են տարբեր հիմքերով, մասնավորապես, ըստ կիրառվող գիտելիքների բնագավառների (ճյուղի), կատարման տեղի եւ հաջորդականության, հետազոտման ծավալի, փորձագետների կազմի և այլն:

Փորձաքննությունների կատարման ժամանակ օգտագործվող **ըստ մասնագիտական գիտելիքների ճյուղի բնույթի՝** ընդունված է առանձնացնել չորս մակարդակներ. 1- կարգեր

(տիպեր). 2 - տեսակներ, 3 - ձևեր, 4 - տարատեսակներ (ենթատեսակներ):

Դատական փորձաքննությունների այդպիսի բաժանումը՝ հաշվի առնելով դրանց միջոցով լուծվող հիմնական խնդիրները, ունի հետևյալ նշանակությունը.

- օգնում է որոշելու փորձաքննությունների տեսակները եւ ձևերը, որոնց կատարումը պետք է կազմակերպվի դատափորձագիտական հիմնարկներում, կանխատեսել նոր ուղղությունների ստեղծումը,

- դյուրացնել կարճաժամկետ եւ հեռանկարային գիտահետազոտական աշխատանքների (ԳՀԱ) պլանների մշակումը՝ փորձագիտական հետազոտության տեսության ու մեթոդիկայի զարգացման համար,

- նախորոշում է փորձագետ կադրերի պատրաստումը եւ վերապատրաստումը, նրանց իրավասությունը եւ մասնագիտացումը,

- օգնում է փորձաքննությունն նշանակող անձին փորձաքննության համապատասխան տեսակի (ձևի) ճիշտ ընտրության հարցում:

Փորձաքննության կարգը կազմում են փորձագիտական հետազոտությունները, որոնք միավորվում են ըստ դատական փորձաքննությունների տեսական ու մեթոդական հիմքերի ձեւավորման աղբյուր ծառայող գիտելիքների եւ այդ գիտելիքների հիմքի վրա հետազոտվող օբյեկտների ընդհանրության: Այդպիսիք են, օրինակ, հանդիսանում կրիմինալիստիկական փորձաքննությունների կարգը, դատաբժշկական փորձաքննությունների կարգը եւ այլն:

Փորձաքննությունների տեսակները տարբերվում են ըստ փորձագիտական հետազոտության առարկայի, օբյեկտի եւ, համապատասխանաբար, մեթոդիկայի: Օրինակ, քրեագիտական փորձաքննության մեջ տեսակի մակարդակով առանձնացվում են փաստաթղթերի տեխնիկա-կրիմինա-

նալիստիկական, ձեռագրաբանական, հեղինակագիտական, տեխնիկական փորձաքննությունները, հետքաբանական, ձգաբանական, դիմանկարային փորձաքննությունները և այլն:

Փորձաքննության ձեւը կազմում են կարգի տարրերը, որոնք տարբերվում են առարկայի յուրահատկությամբ՝ օբյեկտների ու մեթոդիկաների համար ընդհանուր կարգի առումով: Օրինակ, փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական փորձաքննության մեջ տարբերվում են փաստաթղթերի ռեկվիզիտների եւ փաստաթղթերի պատրաստման եղանակի փորձաքննությունները և այլն:

Փորձաքննության ենթատեսակները ձեւի բաղկացուցիչ մասերն են, որոնք տարբերվում են փորձաքննության տվյալ ձեւի առարկայի համար բնորոշ խնդիրների ուրույն խմբով եւ առանձին օբյեկտների կամ դրանց խմբերի հետազոտման մեթոդների ամբողջությամբ: Բոլոր դատական փորձաքննությունները կարելի է բաժանել տասներկու կարգերի.

- 1 - քրեագիտական.
- 2 - բժշկական եւ հոգեֆիզիոլոգիական.
- 3 - ճարտարագիտատեխնիկական.
- 4 - ճարտարագիտատրանսպորտային.
- 5 - ճարտարատեխնոլոգիական.
- 6 - տնտեսագիտական.
- 7 - կենսաբանական.
- 8 - հողագիտական.
- 9 - գյուղատնտեսական.
- 10 - սննդամթերքի.
- 11 - բնապահպանական.
- 12 - արվեստագիտական:

Մասնագիտական գրականության և փորձագիտական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս ներկայացնել դասակարգման հետևյալ պատկերը¹.

Կարգ 1. Քրեագիտական:

Տվյալ կարգը ներառում է փորձաքննությունների երեք կարգ՝ Ա - ավանդական կրիմինալիստիկական, որոնք ձեւավորվել են հիմնականում դատական փորձաքննությունների առաջացման եւ կայացման ժամանակաշրջանում. Բ - վերջին տասնամյակներում ձեւավորված փորձաքննություններ. Գ - ինքնուրույն կարգի բաժանվող նյութերի, հոււնքի, արտադրանքի հետազոտությունների տարբեր տեսակներ, նաեւ՝ նյութագիտական կոչվող:

Ա. 1.1. Հեղինակագիտական:

1.2. Մատնադրոշմային:

1.3. Չզաբանական (հրազեն, ռազմամթերք եւ կրակոցի հետքեր):

1.4. Չեռագրաբանական:

1.5. Դիմանկարային:

1.6. Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական փորձաքննություն:

1.7. Հետքաբանական:

1.8. Սառը զենքի:

Բ. 1.9. Տեսածայնագրաբանական (տեսածայնաուսումնասիրման):

1.10. Պայթուցատեխնիկական:

¹ Ընդ որում, յուրաքանչյուր փորձագիտական հիմնարկի համար գերատեսչական ակտերով սահմանվում են համապատասխան կարգեր: Օրինակ՝ ՌԴ արդարադատության նախարարի 2003թ. մայիսի 14-ի թիվ 144 հրամանի առաջին հավելվածով հաստատվել են նախարարության ենթակայության տակ գործող բոլոր փորձագիտական հիմնարկների կարգերը՝ փորձաքննությունների այն տեսակները, որոնք կարող են կատարվել նշված հիմնարկներում:

1.11. Լուսանկարչատեխնիկական:

1.12. Ոչնչացված պիտակային միջերի վերականգնման փորձաքննություն:

Գ.1.13. Թելավոր բնույթի օբյեկտների փորձաքննություն:

1.14. Լաքուներկանյութերի եւ ծածկույթների փորձաքննություն:

1.15. Նավթամթերքի եւ վառելիքաքսայուղային նյութերի փորձաքննություն:

1.16. Ապակու փորձաքննություն:

1.17. Մետաղների, ձուլվածքների եւ դրանցից շինվածքների (մետաղագիտական) փորձաքննություն:

1.18. Պոլիմերային նյութերի, պլաստմասսաների, ռետինների եւ դրանցից արտադրանքի փորձաքննություն:

1.19. Թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի փորձաքննություն:

1.20. Սպիրտ պարունակող հեղուկների փորձաքննություն:

1.21. Օծանելիքի եւ դիմահարդարման միջոցների փորձաքննություն:

Կարգ 2. Դատաբժշկական եւ հոգեֆիզիոլոգիական:

2.1. Դատաբժշկական:

2.1.1. Դիակների դատաբժշկական հետազոտություն:

2.1.2. Կենդանի անձանց դատաբժշկական զննություն:

2.1.3. Իրեղեն ապացույցների (արյան, մազերի, օրգանիզմի արտաթորանքի եւ այլն) դատաբժշկական հետազոտություն:

2.2. Դատահոգեբուժական:

2.3. Դատահոգեբանական:

2.4. Դատական հոգեբանահոգեբուժական:

Կարգ 3. Դատական ճարտարագիտատեխնիկական

3.1. Հրդեհատեխնիկական:

3.2. Անվտանգության տեխնիկայի գծով փորձաքննություն:

3.3. Շինարարատեխնիկական:

3.4. Էլեկտրատեխնիկական:

3.5. Համակարգչատեխնիկական:

Կարգ 4. Դատական ճարտարագիտատրանսպորտային:

4.1. Ավտոտեխնիկական:

4.2. Ավիացիոն-տեխնիկական:

4.3. Երկաթուղատեխնիկական:

4.4. Այլ ճարտարագիտատրանսպորտային:

Կարգ 5. Դատական ճարտարագիտատեխնոլոգիական:

5.1. Տեխնոլոգիական:

5.2. Ապրանքագիտական:

Կարգ 6. Դատական տնտեսագիտական:

6.1. Հաշվապահական:

6.2. Ֆինանսատնտեսագիտական:

6.3. Ծարտարագիտատնտեսագիտական:

Կարգ 7. Դատակենսաբանական:

7.1. Բուսաբանական:

7.2. Կենդանաբանական:

7.3. Միկրոկենսաբանական:

7.4. Միջատաբանական:

7.5. Ձկնաբանական:

7.6. Թռչնաբանական:

7.7. Մարդու հոտահետքաբանական:

Կարգ 8. Դատահողագիտական:

8.1. Հողագիտական:

8.2. Հանքագիտական:

Կարգ 9. Գյուղատնտեսական:

9.1. Ագրոկենսաբանական:

9.2. Ագրոտեխնիկական:

9.3. Անասնաբուժամանասնաբուժական:

9.4. Անասնաբուժաթունաբանական:

Կարգ 10. Սննդամթերքի:

Կարգ 11. Դատաբնապահպանական:

11.1. Միջավայրի բնապահպանություն:

11.2. Բիոցենոզի բնապահպանություն:

Կարգ 12. Արվեստագիտական:

Փորձաքննությունների տարբեր տեսակներ գտնվում են զարգացման տարբեր մակարդակներում: Դրանցից մի քանիսը զոյություն ունեն տասնամյակներ շարունակ, մյուսները նոր են սկսել ստեղծվել, մյուսները՝ դիտարկվում են դատական փորձաքննությունների ընդհանուր զարգացման հեռանկարում: Հարկ է նաև նկատի ունենալ փորձաքննությունների ստեղծման եւ դրանց փոխակերպման գործընթացի զարգացումը՝ փորձաքննությունների նոր տեսակների ի հայտ գալը, փորձաքննությունների ձևերի փոխակերպումն ինքնուրույն տեսակների (օրինակ՝ լուսանկարչատեխնիկական, տեսաձայնագրաբանական):

Այսպիսով, վերոշարադրյալ դասակարգումը չի կարող համարվել վերջնական, լիովին ավարտուն և հետագայում կկատարելագործվի՝ նկատի ունենալով նշված բնագավառի հետագա նորմատիվային կարգավորման հեռանկարը:

Ըստ կատարման տեղի փորձաքննությունները բաժանվում են փորձագիտական հիմնարկներում կատարվող եւ փորձագիտական հիմնարկից դուրս կատարվող փորձաքննությունների:

ՀՀ ՔԴՕ-ն նախատեսում է փորձաքննության կատարումն ինչպես փորձագիտական հիմնարկում (248 հոդված), այնպես էլ փորձագիտական հիմնարկից դուրս (249 հոդված)՝ քննիչի որոշմամբ փորձագետ ճանաչված անհատների կողմից: Այս հարցը չի ազդում ստացված եզրակացությունների ապացուցողական նշանակության վրա, քանի որ բոլոր դեպքերում փորձագետը ղեկավարվում է իր հատուկ գիտելիքներով և կրում է իր կողմից տրված եզրակացության գիտական և մասնագիտական հիմնավորվածության համար անհատական պատասխանատվություն:

Փորձաքննությունն նշանակած պաշտոնատար անձը երկու դեպքում էլ կարող է ներկա գտնվել համապատասխան հետազոտությունների կատարմանը, իսկ նրա թույլտվությամբ փորձաքննությանը կարող են ներկա գտնվել նաև կասկածյալը, մեղադրյալը և տուժողը (ՀՀ ՔԴՕ 247 հոդված):

Ըստ հետազոտության ծավալի՝ փորձաքննությունները բաժանվում են հիմնականի եւ լրացուցիչի:

ՀՀ ՔԴՕ-ում, ի հավելումն սկզբնական, լրացուցիչ և կրկնակի փորձաքննության, կարգավորվում է համալիր և հանձնաժողովային փորձաքննությունների կատարումը:

Քրեական դատավարության օրենսգրքի 245 հոդվածի 1-ին մասի համաձայն բարդ կամ կրկնակի փորձաքննությունները կարող են կատարվել միանձնյա կամ նույն մաս-

նագիտությամբ փորձագետների հանձնաժողովի կողմից: Այս դեպքում, կողմի պահանջով, փորձագետների հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել իր կողմից մատնանշված փորձագետը: Փորձագետների հանձնաժողովը կազմում է եզրակացություն և ստորագրում այն՝ միասնական կարծիքի դեպքում: Տարածայնության դեպքում յուրաքանչյուր փորձագետ կազմում է առանձին եզրակացություն՝ ընդգրկելով բոլոր կամ տարածայնություններ առաջացրած հարցերը:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հանձնաժողովային փորձաքննությունն նշանակելու մասին որոշումը պարտադիր է փորձագիտական հիմնարկի ղեկավարի համար: Իսկ երբ փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկում՝ առանց հանձնաժողովային փորձաքննության պահանջի, ապա նրա ղեկավարը իրավասու է կազմակերպել հանձնաժողովային փորձաքննության կատարում:

ՀՀ ՔԴՕ 251 հոդվածը նախատեսում է լրացուցիչ և կրկնակի փորձաքննություններ և սահմանում, որ «եթե հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը համաձայն չեն փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, կարող են նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով նույն կամ մեկ ուրիշ փորձագետի»:

Ի տարբերություն ՀՀ քրեադատավարական օրենսդրության, ՌԴ-ում լրացուցիչ դատական փորձաքննության նշանակումը կատարվում է ոչ միայն փորձագետի եզրակացության ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, այլ նույն քրեական գործով՝ նախկինում հետազոտված հանգամանքների հետ կապված նոր

հարցերի առաջացման դեպքում (ՌԴ ՔԴՕ 207 հոդվածի 1-ին մաս):

«Կարծում ենք, որ լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել նաև այն դեպքում, երբ ի հայտ են գալիս քրեական գործով արդեն հետազոտված հանգամանքների հետ կապված նոր հարցեր»¹: Այս հանգամանքն արդարացնում ենք նրանով, որ պրակտիկայում կարող են հանդիպել այնպիսի իրավիճակներ, երբ ի հայտ է եկել նոր հանգամանք, որը հաշվի չի առնվել փորձաքննության նշանակման ժամանակ, կամ էլ ի հայտ են գալիս հետազոտություն պահանջող նոր օբյեկտներ: Ելնելով սրանից, առաջարկում ենք, որ ՀՀ ՔԴՕ 251 հոդվածի 1-ին մասը պետք է շարադրել հետևյալ կերպ. «Եթե հետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը, դատախազը համաձայն չեն փորձագետի եզրակացությանը՝ վերջինիս ոչ բավարար չափով պարզ կամ լրիվ լինելու պատճառաբանությամբ, կամ եթե առաջանում է նախկին հետազոտության հետ կապված լրացուցիչ հարցերի լուծման անհրաժեշտություն, կարող են նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով նույն կամ մեկ ուրիշ փորձագետի»:

Սովորաբար փորձագետի եզրակացությունը ոչ լրիվ է լինում, երբ փորձաքննությունը նշանակելիս կամ կատարելիս տեղ են գտել բացթողումներ, որոնք կարելի է լրացնել լրացուցիչ փորձաքննությամբ: Այդպիսիք կարող են լինել փորձաքննության լուծմանն առաջադրվող խնդիրների ճշգրիտ որոշման անհնարիությունը՝ հետազոտմանն անհրաժեշտ նյութերի անբավարարության պատճառով: Փորձագետին առաջադրվող հարցերի ոչ լրիվ շարադրանքը, որը կարող է պայմանավորված լինել նրանով, որ փորձաքննություն նշանակելու պահին քննիչը միշտ չէ, որ կարող է

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Երևան, 2003, էջ 193:

նախատեսել իր կողմից առաջադրվող հարցերի լուծման հնարավորությունը: Ոչ բավարար չափով լրիվ լինելու պատճառով լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել նաև, երբ փորձագետի եզրակացությանը մեղադրյալի կամ դատավարության այլ մասնակցի ժանոթանալուց հետո միջնորդություն արվի լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին:

Լրացուցիչ փորձաքննության նշանակման ոչ բավարար չափով պարզ լինելու շարժառիթը հետաքրքրական է նրանով, որ նման թերություն սովորաբար ունենում են այն եզրակացությունները, որոնց բովանդակությունը կամ հիմնավորումը լրիվ կամ մասնակիորեն քննիչին հասկանալի չէ:

Առաջին հայացքից ոչ պարզ կարելի է համարել այն եզրակացությունը, որը բովանդակում է տարատեսակ մանր վրիպակներ, որոնք փորձագետի անփութության արդյունք են: Այս առումով օրենքի «ոչ բավարար չափով պարզ» արտահայտությունը որոշակի չի թվում, այլ կերպ ասած՝ անորոշ է: Դրա համար էլ արդարացի կլինի առաջարկը՝ այն դիտել եզրակացության մեջ հետևությունների գիտական հիմնավորվածության բացակայության տեսանկյունից¹:

Լրացուցիչ փորձաքննություն կարելի է նշանակել նաև այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանում ստանալ կատարված հետազոտության մեթոդիկայի և դրա արդյունքների գիտական բացատրության վերաբերյալ:

Ակնհայտ է, որ եզրակացության առանձին անհասկանալի պահերը կարելի է վերացնել փորձագետի հարցաքննությամբ:

Ըստ կատարման հաջորդականության փորձաքննությունները բաժանվում են սկզբնականի եւ կրկնակիի:

¹ Տե՛ս Рахунов Р. Д., Теория и практика экспертизы в советском уголовном процессе, М., 1953, էջ 195:

Լրացուցիչ փորձաքննությունը պետք է տարբերել կրկնակիից, որը ՔԴՕ 251 հոդվածի 2-րդ մասի համաձայն «... կատարվում է, երբ փորձագետի եզրակացությունը հիմնավորված չէ կամ կասկած է հարուցում, կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել են ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները»:

Նշված հոդվածի սույն կետի նկատմամբ կան վերապահումներ. մասնավորապես՝ «...երբ կասկած է հարուցում կամ ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել են ոչ հավաստի կամ խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները»:

Նախ նշենք, որ փորձագետի եզրակացությունը, ինչպես և ցանկացած ապացույց, գնահատվում է այն նշանակող մարմնի կողմից: Այնուհետև, եթե ապացույցները, որոնց վրա հիմնված է եզրակացությունը, ճանաչվել են ոչ հավաստի, դա փորձաքննությունը նշանակող մարմնի թերացումն է՝ կամ պետք է դրանք նախապես ստուգվեն, ճշգրտվեն, հետո նշանակվի փորձաքննություն, կամ եթե, համենայնդեպս, դա չի արվել՝ նշանակվում է նոր փորձաքննություն (սկզբնական)՝ հավաստի ապացույցների հիման վրա: Այս դեպքում նաև փորձագետին փոխելու կարիք չկա:

Ինչ վերաբերում է վերջին հիմնավորմանը. «խախտվել են փորձաքննության կատարման դատավարական կանոնները», հարկ ենք համարում նշել, որ փորձագետը փորձաքննություն կատարելիս հնարավորություն չունի խախտելու դատավարական կարգը:

Օրենքը որպես կրկնակի փորձաքննության հիմք նախատեսում է փորձագետի եզրակացության հիմնավորված չլինելը: Փորձագետի եզրակացությունը գիտականորեն չհիմնավորված կարելի է համարել այն դեպքում, երբ, օրինակ՝ նրանում առկա է տրամաբանական հակասություն

վերլուծության և համադրության (անալիզի և սինթեզի) միջև, կամ երբ տրվում են համընկնող բոլոր հատկանիշները, իսկ սինթեզում արվում է բացասական հետևություն կամ հակառակը: Եվ, վերջապես, երբ փորձագետի հետևությունները չեն բխում նրա կողմից կատարված վերլուծությունից և համադրությունից:

Կրկնակի փորձաքննությունը կարող է ավարտվել նոր հետևություններով, որը տարբերվում է սկզբնական փորձաքննության եզրակացությունից, ինչպես նաև սկզբնական հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդների գիտական հիմնավորվածության հարցի գնահատականով, եթե այդ մասին որոշման մեջ առաջադրել է փորձաքննությունն նշանակող անձը: Փորձաքննությունն նշանակելու մասին որոշման մեջ պետք է նշվեն նախկին փորձաքննության արդյունքների հետ չհամաձայնելու շարժառիթները (ՅԿ ՔԴՕ 251 հոդվ. 2-րդ մաս): Նույն հոդվածն իրավունք է տալիս նախկին փորձաքննությունը կատարած փորձագետներին, ներկա գտնվել կրկնակի փորձաքննությանը, տալ պարզաբանումներ, սակայն նշում է, որ հետազոտմանը և եզրակացություն կազմելուն նրանք չեն մասնակցում:

Չողվածի բովանդակությունից ելնելով կարելի է ասել, որ կրկնակի փորձաքննությունը միջոց է համարվում սկզբնական փորձաքննության եզրակացության ստուգման և գնահատման համար՝ դրա գիտական հիմնավորվածության, լրիվության և հավաստիության տեսանկյունից:

Մյուս կողմից, կրկնակի փորձաքննությունը լրացնում է սկզբնական հետազոտության մեջ տեղ գտած բոլոր բացթողումներն ու անհարթությունները: Այս պահերն էլ պայմանավորեցին կրկնակի փորձաքննությունների տեղը և նշանակությունը դատական ապացույցների համակարգում:

Այն դեպքերում, երբ քրեական գործով նշանակություն ունեցող որևէ հարցի պարզումը հնարավոր է միայն տարբեր

բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ապա պետք է նշանակվի համալիր փորձաքննություն (ՀՀ ՔԴՕ 246 հոդված):

«Համալիր փորձաքննության շրջանակում պարզաբանված փաստական տվյալների համակցության հիման վրա փորձագետներից յուրաքանչյուրն իր հատուկ գիտելիքների սահմաններում մասնակցում է ընդհանուր եզրակացության ձևավորմանը»-նշված է ՔԴՕ 246 հոդվածի 2-րդ մասում: Ըստ նույն հոդվածի հաջորդ (3-րդ և 4-րդ) մասերի՝ փորձագետն իրավունք չունի ստորագրել համալիր փորձաքննության այն մասը, որը չի պատկանում իր գիտական իրավասությանը:

Եթե փորձաքննության կատարումը հանձնարարված է փորձագիտական հիմնարկին՝ առանց համալիր փորձաքննություն կատարելու պահանջի, ապա անհրաժեշտության դեպքում այդ հիմնարկի ղեկավարը կարող է կազմակերպել համալիր փորձաքննություն:

Համալիր փորձաքննության կատարումը ՀՍՄՀ 1961թ. ՔԴՕ-ն չէր նախատեսում, չնայած որ այն լայն կիրառում ուներ քննչական, դատական և փորձագիտական պրակտիկայում, բայց հարցի հստակ օրենսդրական կարգավորման բացակայությունը և քրեական դատավարությունում դրա տարբեր ընկալումն այն դարձրել էր դատավարական գիտության ամենադժվար և ժամանակակից հիմնախնդիրներից մեկը:

Գործող ՔԴՕ-ն սահմանելով փորձաքննության այս տեսակը և տալով դրան որոշակի կարգավորում, վերջ տվեց տեսական տարածայնություններին: Համալիր փորձաքննության օրենսդրական նախատեսումն օրինաչափ է, քանի որ ոչ միայն փորձաքննության յուրաքանչյուր տեսակի գիտական հնարավորությունները, այլ կատարման հետ կապ-

ված բազմաթիվ կազմակերպամեթոդական ու դատավարական հարցեր յուրաքանչյուր պահի որոշվում են օբյեկտիվ պատճառներով և, առաջին հերթին, գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակով:

Համալիր փորձաքննությունը, ըստ Ի. Լ. Պետրուխինի, փորձագիտական հետազոտությունների բարդ համակցություն է: «Դրանցից յուրաքանչյուրը դատավարական առումով ինքնուրույն է, քանի որ այն իրականացվում է մասնագետի կողմից, իր գիտելիքների սահմաններում, որոնց չեն տիրապետում մյուս մասնագետները, որոնք մասնակցում են համալիր փորձաքննությանը»¹:

Միևնույն ժամանակ, այդպիսի փորձագիտական հետազոտությունները կապված են միմյանց հետ նպատակի միասնությամբ. այն է՝ դրանց օգնությամբ պարզաբանման ենթակա փաստական տվյալներն իրենց համակցությամբ հնարավորություն են տալիս կատարել ավելի լայն հետևություններ այն հարցերի վերաբերյալ, որոնք առաջադրված են քննիչի կամ դատարանի կողմից:

Ինչպես տեսնում ենք որոշակի փորձագիտական հետազոտման ընթացքում կարող են կիրառվել տարբեր բնագավառների հատուկ գիտելիքներ ու մեթոդիկաներ: Ընդհանրապես փորձագիտական հետազոտման մեթոդիկան բնորոշվում է որպես գիտականորեն հիմնավորված մեթոդների, հնարքների ու տեխնիկական միջոցների (սարքավորումների) համակարգ²: Այս բնորոշումը, մասնագիտական գրականության, ինչպես նաև փորձագիտական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ փորձագիտական հետազոտման ընթացքում փորձագետի կողմից միևնույն հե-

¹ Ст'у Петрухин И. Л., Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М, 1964, էջ 146:

² Ст'у Назначение и производство судебных экспертиз, пособие для следователей, судей и экспертов, ВНИИСЭ, отв. ред. Г. П. Аринушкин, А. Р. Шляхов, М., 1988, изд-во Юридическая литература, էջ 9:

տազոտության ընթացքում կարող են կիրառվել հետազոտման ինքնուրույն, առանձին մեթոդիկաներ, թեև որոշ դեպքերում դրանք կարող են հաջորդել մեկը մյուսին կամ կիրառվել միաժամանակ՝ հետազոտման խնդիրներից ելնելով կամ հետազոտման ամբողջականությունն ապահովելու նպատակով¹: Բնականաբար, տարբեր բնագավառի հատուկ գիտելիքների ու հետազոտման տարբեր մեթոդիկաների միևնույն հետազոտության շրջանակներում կիրառման պարագայում առնչվում ենք համալիր փորձագիտական հետազոտությունների կատարման խնդրին, որի իրավական կարգավորման հարցը տվյալ դեպքում հիմնարար նշանակություն ունի:

Այս իմաստով ընդգծենք, որ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 246-րդ հոդվածի բովանդակությունը, որը վերաբերում է համալիր փորձաքննությունների անցկացման կարգին:

Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին կետում սահմանված է. «Եթե քրեական գործով նշանակություն ունեցող որևէ հարցի պարզաբանումը հնարավոր է միայն տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ապա պետք է նշանակվի համալիր փորձաքննություն»:

Հոդվածի այսօրինակ ձևակերպումից պարզ է դառնում, որ համալիր փորձաքննության անցկացման համար առկա

¹ Фотографические и физические методы исследования вещественных доказательств, под ред. Зюскина Н. М. и Киричинского Б. Р., М., 1962; Криминалистическая экспертиза. Вып. 2, высшая школа МООП РСФСР, под ред. Кисина М.В., М., 1966; Эйсман А. А., Николайчик В.М. Физические методы выявления невидимых текстов, под ред. Вимберга А. И., ВНИИК прокуратуры СССР, М., 1961; David Ellen, The Scientific Examination of Documents. Methods and techniques. Second edition, Bristol, PA, 1997, Taylor & Francis.

են երկու տարբեր հիմքեր. առաջինը, երբ որոշակի հետազոտություն կատարելու համար անհրաժեշտ են տարբեր բնագավառների հատուկ գիտելիքներ և, երկրորդ, երբ հետազոտության իրականացման համար անհրաժեշտ է տարբեր մեթոդիկաների միաժամանակյա կիրառում:

Առաջինի դեպքում խնդիրը պարզ է, սակայն երկրորդի պարագայում այն բարդանում է, այն պատճառով, որ, ինչպես արդեն նշել ենք, միևնույն բնագավառի հետազոտության ընթացքում հնարավոր է միաժամանակ կիրառվեն հետազոտման բոլորովին ինքնուրույն, առանձին մեթոդիկաներ:

Փաստորեն, միևնույն բնագավառի հետազոտության կատարման ընթացքում, երբ անհրաժեշտություն է զգացվում միաժամանակ կիրառել տարբեր մեթոդիկաներ, պետք է կատարվի համալիր փորձաքննություն: Ստացվում է, որ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման ընթացքում, եթե փորձագետը կերպովան փաստի հայտնաբերման և վերացված տեքստի վերականգնման նպատակով միաժամանակ կիրառի լուսնկարչական մեթոդիկայի հնարքներ՝ ցայտերանգային (կոնտրաստային), լուսանկարում անտեսանելի ինֆրակարմիր և այլ ճառագայթներում, այնուհետև կիրառի ֆիզիկա-քիմիական մեթոդիկաների հնարքներ՝ հետազոտվող փաստաթուղթը պատճենահանի դիֆուզիա-պատճենահանման եղանակով կամ ներկանյութը ենթարկի քիմիական ռեակցիաների կաթիլային եղանակով, ապա պետք է նշանակվի համալիր փորձաքննություն:

Մեր կարծիքով, օրենքի նման ձևակերպումը ճիշտ չէ, քանի որ միևնույն բնագավառի հետազոտության ընթացքում, թեև միևնույն փորձագետի կողմից կարող են միաժամանակ կիրառվել տվյալ բնագավառի տարբեր մեթոդիկա-

ներ, սակայն վերջինս չպետք է հիմք հանդիսանա համալիր փորձաքննություն կատարելու համար:

Մեր տեսակետով նշված դրույթը միանգամայն տեղին կլինի, եթե խոսքը տարբեր բնագավառի մեթոդիկաների միաժամանակյա կիրառման մասին լինի, որը, սակայն, չի բխում հողվածի ձևակերպումից: Ուստի այդ կապակցությամբ ճիշտ կլիներ հողվածի քննարկվող կետը ձևակերպել հետևյալ կերպ. «Եթե քրեական գործով նշանակություն ունեցող որևէ հարցի պարզաբանումը հնարավոր է միայն գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստի տարբեր բնագավառներում հատուկ գիտելիքների կամ հետազոտության տարբեր բնագավառների մեթոդիկաների միաժամանակյա կիրառման հիման վրա, ապա պետք է նշանակվի համալիր փորձաքննություն»: Այս պարագայում միանշանակ պարզ է դառնում, որ խոսքը տարբեր բնագավառների հետազոտման մեթոդիկաների մասին է, որը և անխուսափելիորեն պահանջում է այլ բնագավառի մասնագետի մասնակցություն: Այս առումով նշենք, որ երբեմն, հատկապես, փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման ընթացքում, առաջադրված հարցերի լուծումը, ինչպես նաև հետազոտման ամբողջականության ապահովումը պահանջում է այլ բնագավառի մեթոդիկաների կիրառում: Մասնավորապես, փաստաթղթի պատրաստման վաղեմության հարցի պարզաբանման և այլ դեպքերում գրող նյութի քիմիական կազմի ու բաղադրության հետազոտման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում կիրառել քիմիայի բնագավառի հատուկ մեթոդիկաներ, որի ժամանակ միանգամայն տեղին է համալիր փորձաքննության նշանակումը: Որպես օրինակ նշենք փորձագիտական պրակտիկայում հետազոտման ներկայացված անդորրագրերի ու ստացականների համալիր հետազոտումը, երբ փաստաթղթաբանի կողմ

մից հետազոտվել էին այդ փաստաթղթերի շտրիխների արտաքին կառուցվածքը և այլ հատկանիշներ՝ կիրառելով լուսանկարչական հնարքներ, ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենտային վերլուծության եղանակը, մանրադիտակային հետազոտման եղանակներ, իսկ թանաքի շտրիխների ներքին կազմն ու բաղադրությունը դրանց կատարման վաղեմության պարզաբանման նպատակով՝ կիրառվել է գազահեղուկային քրոմատոգրաֆիայի և այլ քիմիական մեթոդներ շտրիխներում առանձին նյութեր հետազոտելիս¹:

Համալիր փորձաքննությունների քննարկման տեսանկյունից անդրադառնալով մեկ այլ կարևոր հարցի, որը կապված է նման փորձաքննությունների արդյունավետ իրականացման հետ: Համալիր փորձաքննությունների կատարմանը մասնակցում են մի քանի փորձագետ և, ինչպես արդեն նշել ենք, կիրառվում են տարբեր բնագավառի գիտելիքներ կամ տարբեր մեթոդիկաներ: Փորձաքննության ընթացքը համակարգելու, այն ուղղորդելու, ինչպես նաև տարբեր փորձագետների միջև աշխատանքի բաժանում կատարելու համար անհրաժեշտ է, որ փորձագետների կազմից որևէ մեկը ղեկավարի հետազոտման ընթացքը: Նկատենք, որ ղեկավարումը դատավարական կամ այլ բնույթ չի կրում, և տվյալ անձը բացի կազմակերպչական կամ համակարգողական բնույթի աշխատանքներից, որևէ այլ լիազորությամբ չի օժտվում: Այս դեպքում աշխատանքների համակարգումն ուղղակիորեն կապված է տվյալ փորձաքննության կատարման արդյունավետության հետ, քանի որ առանց մեթոդիկաների, հնարքների ու սարքավորումների կիրառման հաջոր-

¹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձագիտական վարույթ Հմ 27990106, 31. 01. 2002թ., ըստ քրեական գործի հմ 53401201:

դականության որոշման հազիվ թե հնարավոր լինի ժամանակին և որակով ավարտին հասցնել միաժամանակ իրականացվող հետազոտական աշխատանքները:

Այս առիթով դեռևս ԽՍՀՄ արդարադատության նախարարության 1972թ-ի դեկտեմբերի 6-ի փորձագիտական հիմնարկներում փորձաքննությունների կատարումը կազմակերպելու մասին որոշմամբ փորձագիտական հիմնարկի ղեկավարը կարող էր երկու և ավելի փորձագետների մասնակցությամբ կատարվող փորձաքննության համար դրանցից մեկին հանձնարարել համակարգելու մյուսների աշխատանքը¹:

Համակարգողական աշխատանքի անհրաժեշտության մասին խոսվում է նաև մասնագիտական գրականության մեջ: Ընդ որում, իրավագիտորեն նշվում է, որ համալիր հետազոտություններ կատարելիս անհրաժեշտ է նշանակել կամ փորձագետների կողմից իրենց կազմից ընտրել փորձագիտական հանձնաժողովի ղեկավար՝ հանձնաժողովի աշխատանքները համակարգելու համար²:

Բացի դրանից, մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ համալիր հետազոտության առավելությունը դրսևորվում է փորձագետների աշխատանքը համակարգելու, ընդհանուր պլանի համաձայն գործելու, տարբեր գիտատեխնիկական մեթոդները որոշակի հաջորդականությամբ կիրառելու հնարավորության ապահովման մեջ: Հետևաբար, համալիր հետազոտություններ կատարելիս աշխատանքները կոորդինացնելու նպատակով փորձագի-

¹ Стѹ Самарина Т. М. Отражения данных экспертного осмотра вещественных доказательств в заключении эксперта// Теоритические и практические вопросы судебной экспертизы, Сборник научных трудов, вып. 38, ВНИИСЭ, М.,1979, ст. 5

² Стѹ Шляхов А. Р. Процессуальные основы производства криминалистической экспертизы, М., 1962, էջ 48:

տական խմբի համար նշանակվում է ղեկավար: Ղեկավարող փորձագետը մշակում է հետազոտությունների ընդհանուր պլան, համակարգում է փորձագիտական խմբի աշխատանքը, նախագահում է փորձագետների նիստերը, փորձաքննության ընդհանուր ժամկետների սահմաններում որոշակիացնում է առանձին հետազոտությունների կատարման ժամկետները և վերահսկում է այդ ժամկետների պահպանումը, ինչպես նաև կապեր է պահպանում այլ հաստատությունների ղեկավարների ու փորձաքննություն նշանակած մարմնի հետ: Սակայն միևնույն ժամանակ ղեկավարն ըստ էության հարցեր լուծելիս դատավարական որևէ առավելությունից չի օգտվում¹:

Ընդ որում, փորձագիտական պրակտիկայում ևս միանշանակ դրական վերաբերմունք կա համալիր հետազոտություններ կատարելիս, երբ միաժամանակ մասնակցում են տարբեր բնագավառի փորձագետներ, հետազոտման ընթացքի ու արդյունքների արդյունավետության ապահովման տեսանկյունից փորձագիտական խմբի ղեկավար ունենալու վերաբերյալ: Այս մասին են վկայում մեր կողմից ՀՀ ՆԳ նախարարության փորձաքննագիտական վարչության և ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնի փորձագետների շրջանում կատարված հարցումների արդյունքները: Հարցման ենթարկված բոլոր փորձագետները միանշանակ կողմնակից են համալիր հետազոտություններ կատարելիս փորձագիտական խմբի ղեկավար ունենալու և այդ խնդիրը դատավարական օրենսդրությամբ կարգավորելու անհրաժեշտության հարցին:

¹ Стѹ Назначение и производство судебных экспертиз, пособие для следователей, судей и экспертов, ВНИИСЭ, отв. ред. Аринушкин Г. П., Шляхов А. Р. М., 1988, изд-во Юридическая литература, էջ 23:

Այսպիսով, մասնագիտական գրականության, ինչպես նաև փորձագիտական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ համալիր հետազոտություններ կատարելիս, երբ հետազոտությանը մասնակցում են տարբեր բնագավառի փորձագետներ, հետազոտման արդյունավետության ապահովման նպատակով անհրաժեշտ է, որ փորձագետների խմբից որևէ փորձագետ նշանակվի ղեկավար՝ աշխատանքները համակարգելու համար: Հարցի կարևորությունը պահանջում է դրան տալ իրավական կարգավորում դատավարական օրենսդրության մեջ, հատկապես, եթե հաշվի առնենք, որ նման փորձ արդեն արվել է, սակայն հարցին լուծում տրվել է գերատեսչական ակտով ամրագրելու ձևով՝ ԽՍՀՄ արդարադատության նախարարության կողմից, որին անդրադարձել ենք վերը:

Մեր կարծիքով, համալիր փորձաքննությունների կատարման համար ունեցած նշանակության տեսանկյունից քննարկվող հարցի իրավական կարգավորումը հրատապ հարց է, և որքան այդ հարցը կարգավորող իրավական ակտը բարձր ուժ ունենա, այնքան ավելի հետևողական ու նպատակային կիրականացվեն համալիր հետազոտությունները: Այս իմաստով ցանկալի կլիներ, որպեսզի համալիր փորձաքննությունները կարգավորող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերը դրույթներ պարունակեին այդ փորձաքննությունների հետազոտական աշխատանքների կատարումը համակարգող ու կազմակերպող անձի պարտադիր գործունեության մասին՝ այդ իրավունքը վերապահելով փորձագիտական հիմնարկի ղեկավարին, որը, հաշվի առնելով փորձագիտական աշխատանքի ստաժը, աշխատանքային փորձը տվյալ ոլորտում, ինչպես նաև կատարվող հետազոտության բնույթն ու առանձնահատկությունը, թե հատկապես որ բնագավառի հարցեր են առավել

շատ շոշափվելու և այլն, փորձագետների խմբից կնշանակի խմբի ղեկավար:

Այսպիսով, մեր կարծիքով նպատակահարմար է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 246-րդ հոդվածում ավելացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ. «Փորձագիտական հիմնարկի ղեկավարը հետազոտական աշխատանքի ընթացքը համակարգելու նպատակով մինչև հետազոտությունն սկսելը հետազոտմանը մասնակցող փորձագետների կազմից նշանակում է փորձագետների խմբի ղեկավար»:

ԳԼՈՒԽ 2.

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՆՐԱ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՅԻ ՏԵՍԱԿ

§ 1. Փորձագետը որպես քրեական դատավարության առանձնահատուկ սուբյեկտ

ՀՀ ՔԴՕ 85 հոդվածը սահմանում է, որ «1.Փորձագետը քրեական գործով չչափազրգռված այն անձն է, որին իր համաձայնությամբ, քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար: Փորձագետը կարող է նշանակվել դատավարության մասնակցի առաջարկած անձանցից:

2.Փորձագետը պետք է տիրապետի գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառի բավարար հատուկ գիտելիքների:

3.Քրեական գործով վարույթին իրավաբանական հարցերով փորձագետ չի ներգրավվում»:

Հոդվածի 4-րդ մասում շարադրված են փորձագետի պարտականություններն ու դրանք չկատարելու հետևանքները, ինչպես նաև նրա իրավունքները:

Փորձագետի, որպես քրեական դատավարությունում հատուկ գիտելիքներ կիրառող սուբյեկտի, դատավարական կարգավիճակի ճիշտ ընկալման համար նախ և առաջ նպատակահարմար ենք համարում անդրադառնալ քրեական

դատավարությունում մասնագետի և փորձագետի կողմից իրականացվող հետազոտությունների տարբերություններին:

Նշված երկու սուբյեկտների գործունեությունը տարբերվում է ինչպես բովանդակային, այնպես էլ ձևական առումներով: Փորձագետի կողմից իրականացվող հետազոտությունը, քրեադատավարական օրենսդրությանը, համապատասխան կարող է դիտվել որպես հատուկ գիտելիքների օգտագործման ձևերից մեկը:

Փորձագետի կողմից իրականացվող հետազոտության արդյունքներով կազմվում է եզրակացություն, որը համարվում է ապացույց: Մասնագետի աշխատանքը շարադրվում է համապատասխան քննչական գործողության արձանագրություն մեջ: Հետևաբար, առանց քննչական գործողության այդ աշխատանքի արդյունքն ապացույցի ուժ չունի:

Այնուամենայնիվ, առանցքային տարբերությունը վերը նշված սուբյեկտների դատավարական կարգավիճակի առանձնահատկությունն է: Բացի դրանից, մասնագետի և փորձագետի գործունեությունը քրեական դատավարությունում տարբեր նպատակներ է հետապնդում: Մասնագետը մասնակցում է քննչական գործողությունների կատարմանը: Վերջինիս օժանդակությունը հատկապես կարևորվում է սկզբնական և անհետաձգելի քննչական գործողությունների կատարման ժամանակ: Համապատասխանաբար, մասնագետն օժանդակում է իրերի, առարկաների և փաստաթղթերի հայտնաբերմանը, վերցնելուն և ֆիքսմանը, որոնք կարող են նաև հավանական իրեղեն ապացույցներ դառնալ: Իսկ դրանց հետագա հետազոտությունը նոր տեղեկություններ ու հանգամանքներ պարզելու նպատակով իրականացնում է փորձագետը՝ փորձագիտական հետազոտության միջոցով: Վերոնշյալ տարբերությունները բխում են փորձագետի և մասնագետի իրավունքների դատավարական կար-

գավորումից: ՀՀ քրեադատավարական օրենսդրության նորմերով փորձագետին տրվում է լրիվ ինքնուրույնություն փորձաքննության կատարման համար, մինչդեռ մասնագետին թույլ չի տրվում անցնել իրեն տրված առաջադրանքի սահմանները, նա գործում է քրեական գործով վարույթն իրականացնող անձի ցուցումների շրջանակներում: Դրանով իսկ մասնագետը սահմանափակվում է իր գործողություններում: Այսպիսով, մասնագետի գործունեության օրենսդրական կարգավորումը սահմանափակում է նրա դատավարական ինքնուրույնությունը, որն էապես տարբերում է նրան փորձագետից: Փորձաքննության իրականացումն ինքնուրույն դատավարական գործողություն է: Մասնագետը գործում է միայն տարբեր քննչական գործողությունների շրջանակներում: Մասնագետի՝ որպես դատավարական սուբյեկտի սահմանման ժամանակ այդպիսի նորմ չի նախատեսվում, նրա մասնակցությունը քննչական գործողությունների կատարմանը տեղի է ունենում նույն ձևով, ինչ այլ անձանց դեպքերում: Քննչական գործողություններ իրականացնելիս մասնագետի մասնակցությունը հիմնականում կայանում է հետքերի հայտնաբերման ու զննության, փորձագետին ուղղվելիք հնարավոր հարցերի շրջանակը որոշելիս քննիչին օգնելու, նմուշներ ընտրելու մեջ: Մասնագետի բոլոր գործողությունները գրանցվում են քննչական գործողության արձանագրությունում, որը, ինչպես և փորձագետի եզրակացությունը, ապացույց է հանդիսանում: Ընդ որում, մասնագետի մասնակցությունն այնպիսի քննչական գործողություններին, ինչպիսիք են՝ խուզարկությունը, զննությունը, քննչական փորձարարությունը և այլն, անշուշտ, էական նշանակություն է ունենում դրանց կատարման արդյունավետության բարձրացման համար: Մինչդեռ փորձագետի եզրակացությունն ապացույցի ինքնուրույն տեսակ է, ուստի դրա ձևակերպումը պետք է համապատասխանի որոշակի

կանոնների: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ օրենսդիրը մանրամասն կարգավորում է փորձաքննության նշանակման և իրականացման գործընթացները:

Փորձագետի դատավարական կարգավիճակի առանձնահատկություններով պայմանավորված՝ հարկ ենք համարում անդրադառնալ փորձագետի կարգավիճակին առնչվող մյուս կարևոր հարցին: Այն դրսևորվում է հետևյալում, որ ՀՀ ՔԴՕ 252 հոդվածի ուժով փորձագետի եզրակացությունն ստանալուց հետո փորձաքննություն նշանակած պաշտոնատար անձն իրավունք ունի հարցաքննել փորձագետին, եթե եզրակացությունը բավարար չափով պարզ չէ, ունի բացեր, որոնք լրացնելու համար չեն պահանջվում լրացուցիչ հետազոտություններ կամ անհրաժեշտություն է առաջացել ճշտելու փորձագետի կողմից կիրառված մեթոդները և հասկացությունները: Փորձագետի հարցաքննությունը կատարվում է ՀՀ ՔԴՕ 205, 206 և 209 հոդվածների պահանջները պահպանելով, այսինքն՝ վկայի հարցաքննության կանոններով: Թեև, ի տարբերություն նախկին քրեադատավարական օրենսդրության, երբ փորձագետի հարցաքննության համար առանձին նորմ սահմանված չէր, և կարիքի դեպքում վերջինս հրավիրվում էր որպես վկա, ներկայումս հարցը կարգավորվել է, այնուամենայնիվ, հարցի նման կարգավորումը չի կարելի իրավաչափ համարել: Փորձագետը և վկան դատավարական տարբեր կարգավիճակներ ունեն, քրեական գործով վարույթին ներգրավվում են տարբեր հիմքերով և նպատակներով, հետևաբար՝ տարբեր են նաև նրանց հարցաքննության առարկաները¹: Այդ պատճառով, առավել տրամաբանական է, որ ապացույցների տեսակների մեջ փորձագետի եզրակացությունը համալրվի նաև նրա ցուցմունքներով:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Հատուկ մաս, Երևան, 2003, էջ 195:

Փորձագետին չի կարելի հարցաքննել մինչև նրա կողմից եզրակացություն ներկայացնելը: Փորձագետի հարցաքննության արձանագրությունը չի կարող փոխարինել փորձագետի եզրակացությանը:

Ընդհանրապես, քրեական դատավարությունում փորձագետի կարգավիճակը, դերն ու նրա գործունեության առանձնահատուկ բնույթը պայմանավորված են վերջինիս կողմից տրվող գրավոր ակտով, այն է՝ եզրակացությամբ:

Փորձագետի և մասնագետի դատավարական կարգավիճակի առանձնահատկությունների պարզաբանման համար կարևոր նշանակություն ունի «մասնագետ» հասկացության պարզաբանումը, որն իրավաբանական գրականության մեջ ընկալվում է տարբեր կերպ:

Մասնավորապես, Վ. Ա. Սնետկովը նպատակահարմար է գտնում քրեադատավարական օրենքով նախատեսված կարգով հետազոտությանը մասնակցող իրագեկ անձանց անվանել դատական մասնագետներ, ինչպես ընդունված է այլ դատավարական հասկացությունների համար՝ «դատական փորձաքննություն», «դատական փորձագետ», «դատական ապացույց» և այլն¹: Դատական մասնագետների դասին Վ. Ա. Սնետկովը դասում է նաև փորձագիտական կրիմինալիստիկական ենթաբաժանմունքների աշխատակիցներին, որոնք պետք է իրականացնեն իրենց մասնագիտական պարտականությունները քննչական գործողությունների ընթացքում:

Փորձաքրեագիտական ստորաբաժանման աշխատակիցը պետք է ունենա մասնագիտական հատուկ պատրաստվածություն, որը նրան թույլ կտա իրագործել մասնա-

¹ Стѣ Снетков В. А., Деятельность экспертно-криминалистических подразделений органов внутренних дел по применению экспертно-криминалистических методов и средств в раскрытии и расследовании преступлений, М., 1996, т. 7:

գետի գործառույթները: Փորձաքրեագիտական ստորաբաժանման մասնագետի պրոֆեսիոնալ կարգավիճակի հիմքն են կազմում նրա գործառութային պարտավորությունները, որոնք անրագրված են ի պաշտոնե:

Է. Բ. Մելնիկովան մասնագետ է համարում այն անձին, որն ունի հետաքննության կամ նախաքննության համար անհրաժեշտ հատուկ գիտելիքներ, շահագրգռված չէ գործի ելքով, ներգրավված է քննչական գործողությունների իրականացմանը, ցուցաբերում է գիտատեխնիկական օգնություն ցանկացած ձևով, բացառությամբ փորձագիտական եզրակացության, ղեկավարվում է հետաքննություն կատարող անձի կամ քննիչի կողմից՝ քննչական գործողություններ իրականացնելիս¹:

Մասնագետի ապացուցողական գործունեության դատավարական առանձնահատկությունը, ըստ Վ. Դ. Արսենևի, շատ դեպքերում կայանում է նրա գործունեության՝ որևէ ինքնուրույն ձևակերպված արդյունքի բացակայությամբ: Մասնագետի գործունեությունը (դատավարական առումով), այսպես ասած՝ միաձուլվում է դատարանի և քննիչի գործունեությանը, նրա գործողությունների մասին վկայում են միայն քննչական գործողության (դատական միստի) արձանագրության նշումները, ինչպես նաև քննչական գործողության արձանագրությունում նրա ստորագրությունը²:

Քրեական դատավարությունում մասնագետի մասնակցության ինստիտուտն առաջին անգամ իր օրենսդրական ձևակերպումն ստացավ 1961թ. ՀՍՍՀ ՔԴՕ-ում: Սակայն չեն սահմանվել «մասնագետ» հասկացության բովանդակութ-

¹ Стѣ Мельникова Э. Б., Участие специалиста в следственных действиях, М., 1964, т. 24-25:

² Стѣ Арсеньев В. Д., Понятие специалиста и некоторые вопросы его компетенции в советском уголовном процессе, Организационно-правовые проблемы судебной экспертизы, Сб. науч. тр. ВНИИСЭ, М., 1982, т. 34:

յունը, նրա իրավունքներն ու պարտականությունները: «Օրենսգիրքը, նախատեսելով մասնագետի մասնակցությունը դատավարությանը, բոլորովին չի խոսում նրա իրավունքների և պարտականությունների մասին: Դա պատահականություն չպետք է համարել: Օրենսդիրը մասնագետին չի դիտում որպես դատավարությանը մասնակցող ինքնուրույն անձ, այլ դիտում է որպես հետաքննություն կատարող անձի կամ քննիչի օգնական, որը կոչված է իր կոնսուլտացիաներով ու բացատրություններով օգնելու նշված պաշտոնատար անձանց, նրանց կողմից կատարվող քննչական գործողությունները նպատակասլաց և արդյունավետ դարձնելու համար»¹:

Քրեական դատավարությունում հատուկ գիտելիքների օգտագործման տեսության և պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնագետն ընկալվում է որպես այնպիսի անձ, որը ներգրավվում է միայն առանձին, օրենքով նախատեսված քննչական և դատավարական գործողությունների կատարմանը:

ՀՀ ՔԴՕ 84 հոդվածով, ի տարբերություն ՀՍՍՀ ՔԴՕ-ի նորմերի (հոդված 124¹), ընդլայնվել են մասնագետի իրավունքներն ու պարտականությունները: Մինչդեռ քրեադատավարական օրենսդրությունում, ինչպես արդեն նշվել է, չկա հատուկ գիտելիքների բովանդակության պարզաբանում, որոնց պետք է տիրապետի մասնագետը:

Համաձայն ՀՀ ՔԴՕ-ի նորմերի, քննչական գործողության իրականացման արդյունքում կազմվում է արձանագրություն, որի մեջ նշվում են քննչական գործողությանը մասնակցող յուրաքանչյուր անձի անունը, ազգանունը, հայրանունը, դատավարական կարգավիճակը, պետք է լրիվ արտացոլվեն տեղեկություններ մասնագետի, նրա գործո-

¹ Տե՛ս Դատական փորձաքննության հարցեր, ժողովածու 1, ԵՊՀ, Երևան, 1962, էջ16:

ղությունների, ինչպես նաև քննչական գործողություններն իրականացնելիս օգտագործված գիտատեխնիկական միջոցների, դրանց օգտագործման պայմանների ու կարգի, այն օբյեկտների մասին, որոնց նկատմամբ կիրառվել են այդ միջոցները և ստացված արդյունքները: Սակայն օրենսդրությամբ կարգավորված չէ մասնագետի մասին տեղեկությունների ձևակերպման և ներմուծման կարգը: Որպես կանոն, քննիչը նշում է տեղեկություններ մասնագետի պաշտոնի, կրթության, որակավորման և գործունեության բովանդակության մասին և նրա ստորագրության վավերացման մասին:

Որպես մասնագետ անձի ներգրավման մասին որոշումը մեր քրեադատավարական օրենսդրությամբ չի կարգավորվում: Համաձայն ՀՀ ՔԴՕ 55 հոդվածի չորրորդ մասի 12 կետի՝ քննիչը լիազորված է գործին մասնակից դարձնել մասնագետների, իսկ քննչական գործողություններին մասնագետի մասնակցության կարգը որոշվում է նշված օրենսգրքի այն հոդվածներով, որոնք սահմանում են կոնկրետ քննչական գործողության իրականացման կարգն ու պայմանները:

Կարևոր է նաև մասնագետին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը: Ն. Ա. Սելիվանովն արդարացիորեն նշում է. «Առաջին հայացքից այդպիսի հարցը կարող է ակադեմիական թվալ: Սակայն իրականում այդպես չէ: Իրագեկ անձը, օգնելով քննիչին, սկզբունքորեն զուրկ չէ իր գործողությունների արդյունքների գիտակցական աղավաղման հնարավորություններից»¹:

Ի տարբերություն փորձագետի, մասնագետը եզրակացություն չի կազմում, նրա կարծիքը չի կարող հավասարվել

¹ Տե՛ս Селиванов Н. А., Основание и формы применения научно-технических средств и специальных знаний при расследовании преступлений, Вопросы борьбы с преступностью, Вып.7, М., 1968, էջ 116:

փորձագետի եզրակացությանը: Սակայն օբյեկտների նախնական հետազոտությամբ մասնագետը կարող է տեղեկություններ ներկայացնել հանցագործության կատարման հանգամանքների, հանցագործության գործիքների և այլ տվյալների մասին:

Բոլոր դեպքերում, քննչական գործողության արդյունքների ստացման ու դրանց գնահատման «պատասխանատուն» վարույթն իրականացնող անձն է: Ուստի, մեր կարծիքով, մասնագետի պատասխանատվության հարցը լուծելիս պետք է հաշվի առնել վերջինիս մասնակցության աստիճանը, գործողությունների ու ստացված արդյունքների (հետևանքների) միջև պատճառական կապը և այլն:

Քննարկումների առիթ է հանդիսանում այն հարցը, թե արդյոք հնարավոր և նպատակահարմար է մասնագետի գործունեության արդյունքները ձևակերպել տեղեկանքի տեսքով:

Այսպես, Յու. Կ. Օրլովն անթույլատրելի է համարում ձևակերպման այնպիսի տարբերակի ներմուծումը, ինչպիսին մասնագետի տեղեկանքն է¹: Ս. Ա. Վելիչկինի և Դ. Ա. Տուրչինի կարծիքով՝ մասնագետի կողմից տեղեկանքի կազմման իրավական հիմք է ծառայում օրենքում ամրագրված այն դրույթը, ըստ որի մասնագետն իրավունք ունի արձանագրությանը կցելու ենթակա այնպիսի հայտարարություն անել, որը կապված է ապացույցների հայտնաբերման, վերցնելու և ամրապնդման հետ, ինչպես նաև պարզաբանումներ տալ իր կողմից կատարված գործողությունների վերաբերյալ²:

¹ Տե՛ս Օրլով Ю. К., Производство экспертизы в уголовном процессе, М., 1982, էջ 28:

² Տե՛ս Величкин С. А., Турчин Д. А., Участие специалиста в производстве следственных действий, Проблемы борьбы с преступностью, Омск, 1976, էջ 93-100:

Վ. Ն. Մախովի կարծիքով՝ նպատակահարմար է ՔԴՕ-ում կատարել լրացումներ, որոնք թույլ կտան իրազեկ անձանց ցուցմունքները դիտել որպես ապացույց¹:

Որոշ տեսաբանների կարծիքով՝ մասնագետի ակտը պետք է համարել որպես ապացույցի ինքնուրույն աղբյուր²:

Միևնույն ժամանակ չի կարելի համաձայնել այն տեսաբանների հետ, որոնք գտնում են, որ մասնագետի գործունեությունը ոչ մի ապացուցողական նշանակություն չունի³: Մասնագետի գործունեության բոլոր արդյունքները ֆիքսվում են համապատասխան քննչական գործողության շրջանակներում: Դրանով իսկ դրանք համարվում են քննչական գործողության արձանագրության որոշակի մասը, այսինքն՝ «...մասնագետի օգնությամբ ստացված տվյալները կազմում են ապացույցների աղբյուրի օրգանական մասը»⁴:

Ինչպես նշում է Յու. Կ. Օրլովը՝ «մասնագետի կողմից ուսումնասիրության կատարման պայմաններին են պատկանում հետևյալները.

1. մասնագետի գործունեությունը լրացնում է քննիչի գործունեությունը և անկախ հանդես չի գալիս,
2. մասնագետը եզրակացություն չի տալիս և ընդհանրապես չի ձևակերպում ոչ մի հետևություն, որն ա-

¹ Տե՛ս Махов В. Н., Использование знаний сведущих лиц при расследовании преступлений, Монография, М., 2000, էջ 296:

² Տե՛ս Вольнский А. Ф., Концептуальные основы технико-криминалистического обеспечения раскрытия и расследования преступлений, Дис., М., 1999, Пампушко И. П., Совершенствование правовых и организационных основ применения криминалистической техники в раскрытии преступлений, Дис., М., 1996, Лысов Н. П., Справка специалиста как источник доказательств, В кн. Актуальные проблемы обеспечения практики научно-техническими достижениями, Киев, 1987:

³ Տե՛ս Махов В. А., участие специалиста в следственный действиях, М., 1975, էջ 3:

⁴ Տե՛ս Мельникова Э. Б., участие специалистов в следственный действиях, М., Юридическая литература, 1964, էջ 66:

պացուցողական նշանակություն կունենա գործի համար: Նրա ամբողջ գործունեությունն ընթանում է այն քննչական գործողության շրջանակներում, որին նա մասնակցությունն է ունենում,

3. մասնագետների գործունեության արդյունքներն ինքնուրույն ապացույցի նշանակություն չունեն, բայց հանդես են գալիս որպես համապատասխան քննչական գործողության արձանագրության բաղկացուցիչ մաս»¹:

Ինչպես վերը նշվեց, նոր քրեադատավարական օրենսդրությունում, ի տարբերություն նախկինի, տրվում է փորձագետի և մասնագետի դատավարական իրավասության սահմանների առավել հստակ բնորոշում: Սակայն իրավաբանական գրականությունում փորձագետի և մասնագետի գործունեության տարբերակման, մասնագետի գործառույթների ընդլայնման, դրանց իրականացման իրավական ձևի փոփոխության հարցերը մնում են հույժ արդիական: Դա տեղի է ունենում պրակտիկ գործունեության պահանջով, որը բովանդակային առումով առկա է փորձագետների կողմից կատարվող հետազոտության մեջ, դուրս չի գալիս օբյեկտի ուսումնասիրմանն ուղղված գործողությունների իրագործման սահմաններից: Կան նաև այլ պատճառներ, որոնք հիմք են հանդիսացել քրեական դատավարությունում մասնագետի և փորձագետի կողմից օգտագործվող հատուկ գիտելիքների սահմանազատման հարցի մանրամասն քննարկման համար:

Հիմնականում մասնագետի գործունեության հետազոտական ոլորտի հարցերը ծագում են՝ կապված, այսպես կոչված, որակյալ զննում կատարելու հետ: Ինչպես հայտնի է, դեպքի տեղի զննության նպատակները չեն սահմանա-

¹ Стен Орлов Ю. К., Производство экспертизы в уголовном процессе, М., 1982, էջ 25:

փակվում միայն իրեղեն ապացույցների հայտնաբերմամբ: Ձևնության ընթացքում լուծվում են նաև այլ խնդիրներ, այդ թվում՝ դեպքի իրադրության և գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերականգնումը: Այսպես, դեպքի տեղի զննության ընթացքում մասնագետը, զննելով, օրինակ, սեղանի վրա հայտնաբերված բաժակը, կարող է պարզել՝ դրա վրա ձեռքի հետքեր կա՞ն, ինչպես և որ ձեռքով են դրանք թողնվել, պիտանի են, արդյոք, նույնացման համար: Միևնույն ժամանակ, եթե այդ բաժակը վերցվել է առանց մասնագետի այդպիսի մանրամասն ուսումնասիրության, ապա փորձագետին փորձաքննության նշանակման ընթացքում կառաջադրվեն այդ հարցերը: Ինչպես տեսնում ենք, տվյալ դեպքում տարբերությունը գիտելիքների օգտագործման ձևի ու տարբերակների՝ տվյալ անձանց դատավարական դիրքի մեջ է:

Գոյություն ունի փորձագետի և մասնագետի գործունեության որոշակի առանձնահատկություն, որը չկա դատավարության մասնակից այլ անձանց աշխատանքում: Օրինակ՝ իրեղեն ապացույցների զննության, կամ համեմատական հետազոտման նմուշների ստացման ժամանակ մասնագետի գործունեությունը շատ կողմերով է նման փորձագետի գործունեությանը:

Մասնագետի և փորձագետի գործունեության հիմնական տարբերությունը բովանդակային բնույթ է կրում: Քանի որ մասնագետի համար օրենքով չի պահանջվում եզրակացություն տալը, նա պարտավոր չէ իրականացնել իր կողմից հետազոտվող օբյեկտների հատուկ ուսումնասիրություն:

Փորձագետի կողմից կատարվող հետազոտությունը, քրեադատավարական օրենսդրությանը համապատասխան, կարող է դիտվել որպես հատուկ գիտելիքների օգտագործման ձև: Կատարելով գիտական հետազոտություն՝ փորձագետը բացահայտում է օբյեկտի հատկությունները, իրակա-

նացնում դրանց գիտական մեկնաբանությունը և այդ հիմքի վրա ձևակերպում նոր քրեագիտորեն նշանակություն ունեցող տեղեկություն:

Մասնագետի պարագայում՝ վերջինիս գործողությունները հիմնականում կրում են կողմորոշող, օգնող, օժանդակող նշանակություն: Մասնագետը քննչական գործողության իրականացման ժամանակ գտնվում է քննությունը վարող մարմնի ենթակայության ներքո և, վերջապես, մասնագետի գործողության արդյունքներն արտացոլվում են քննչական գործողության արձանագրության մեջ:

Փորձագետի իրավական դրությունը (կարգավիճակը) ՀՀ ՔԴՕ-ի նորմերի վերլուծության համաձայն սահմանվում է հետևյալ կերպ.

- փորձագետի ողջ գործունեությունը կանոնակարգվում է օրենսդրությամբ,
- փորձագետը դատավարության ինքնուրույն մասնակից է՝ հանդես գալով դրա մյուս սուբյեկտներից անկախ,
- նրա գլխավոր գործառույթը հատուկ գիտելիքների կիրառմամբ կատարված փորձաքննության օբյեկտների եւ գործի նյութերի հետազոտությունների հիման վրա եզրակացություն տալն է,
- փորձագիտական հետազոտության նպատակը, հատուկ գիտելիքների կիրառմամբ, օբյեկտի ուսումնասիրման հիման վրա ապացուցողական փաստերի հաստատումն է,
- փորձագետն ազատված է անհրաժեշտ տեղեկատվության հավաքման պատասխանատվությունից եւ պետք է միայն գործառի իրեն տրամադրված նյութերը, սակայն իրավունք ունի փորձաքննությունը նշանակած անձից պահանջել լրացուցիչ տեղեկատ-

վություն, որը պարտավոր է բավարարել փորձագետի միջնորդությունը,

- փորձագետը գործի նյութերը հետազոտում է միայն իր առջև դրված հարցերի առումով, իր իրավասության սահմաններում,
- փորձագետի եզրակացությունում շարադրված փաստերի ապացուցողական նշանակությունը գնահատվում է ինչպես ըստ էության, այնպես էլ ըստ դատավարական ձեւի:

Այդ պահանջներից թեկուզեւ մեկից փորձագետի շեղվելը նրա եզրակացությունը զրկում է ապացուցողական նշանակությունից:

Փորձագետի գործունեությունը բնորոշում են. ինքնուրույնությունը, անհատականությունը, անձնական պատասխանատվությունն իր կողմից կատարված աշխատանքի արդյունքների համար:

Փորձագետի ինքնուրույնությունն արտահայտվում է նրանում, որ նա, իր իրավասությունների սահմաններում, ազատ է հետազոտությունների կատարման մեթոդիկաների ընտրության հարցում: Սակայն այդ ինքնուրույնությունը հարաբերական է, քանի որ նրա կողմից ընտրված՝ հետազոտության մեթոդները եւ միջոցները չպետք է խախտեն իրեն ապացույցների հետ վարվելու կանոնները, դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները, համապատասխանեն համամարդկային բարոյական նորմերին:

Փորձագետի ինքնուրույնությունը նշանակում է նաեւ հետազոտություն կատարելիս նրա ենթակայության բացակայություն, որպես մասնագետ՝ իր իրավասության շրջանակներում հարցերը լուծելիս անկախ պետք է լինի անմիջական ղեկավարի, քննիչի, դատավորի, գործի հարցում շահագրգիռ անձանց ազդեցությունից:

Փորձագետը կարող է միջնորդություն հարուցել իրեն լրացուցիչ նյութեր տրամադրելու վերաբերյալ, որոնց բացակայությունը կամ դժվարացում, կամ էլ բացառում է հետազոտության կատարումը: Նա կարող է առաջարկել քննիչին կատարել այս կամ այն քննչական գործողություններ (ավելի հաճախ՝ զննումներ)՝ լրացուցիչ նյութերի հայտնաբերման, վերցման եւ փորձագետին տրամադրման համար, ինչպես նաեւ միջնորդել տվյալ քննչական գործողություններին մասնակցելու վերաբերյալ, որպեսզի որպես մասնագետ օգնություն ցուցաբերի քննիչին:

Փորձագետն անձամբ է կատարում փորձագիտական հետազոտությունը եւ ըստ դրա արդյունքների ձեւակերպում հետեւությունները:

Փորձագետի իրավասությունը՝ կոնկրետ տեսակի, ձեւի եւ ենթատեսակի դատական փորձաքննության տեսությանը եւ մեթոդիկային տիրապետելն է: Ընդունված է տարբերել փորձագետի իրավասության գիտական եւ սուբյեկտիվ կողմերը: Փորձագետի գիտական իրավասությունը հատուկ գիտելիքների ծավալն է, որոնց պարտավոր է տիրապետել դատական փորձաքննության տվյալ տեսակի, ձեւի, ենթատեսակի յուրաքանչյուր ներկայացուցիչ: Հնարավոր է փորձագետի իրավասությունը ողջ տեսակի, ձեւի սահմաններում:

Կոնկրետ անձի իրավասության սուբյեկտիվ կողմը կոնկրետ ձեւի, ենթատեսակի փորձաքննությունների տեսությանը եւ մեթոդիկային տիրապետելու աստիճանն է: Այն կախված է տվյալ անձի փորձից, նրա բազային եւ հատուկ կրթությունից (ինչի մասին փորձագետը սովորաբար նշում է իր եզրակացության ներածական մասում), նոր մեթոդների ու մեթոդիկաների նրա իմացությունից:

Փորձագետի ձեռնհասությունը փորձաքննության առարկային վերաբերող առաջադրված հարցերը լուծելու ունակությունն է: Այն որոշվում է նրա կրթության եւ մասնագիտական պատրաստվածության մակարդակով, ինչպես նաեւ հետազոտությունների տվյալ բնագավառում աշխատանքի փորձով: Փորձագիտական հիմնարկներում փորձագետի ձեռնհասությունն ստուգվում և հավաստվում է համապատասխան որակավորման հանձնաժողովների կողմից, որն ստուգված անձին տալիս է ինքնուրույնաբար որոշակի տեսակի փորձաքննություններ կատարելու իրավունքի համապատասխան փաստաթուղթ (թույլտվություն):

Օրենսդիրը փորձագետին օժտել է իրավունքներով, որոնք պետք է փորձագետի համար ստեղծեն իրական հնարավորություններ եւ պայմաններ նրա վրա դրված պարտականությունների կատարման համար:

Փորձագետի իրավական կարգավիճակի վերաբերյալ դատողություններ անելիս անհրաժեշտ է պարզաբանել փորձագետի դատավարական իրավունքներն ու պարտականությունները:

Քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ փորձագետն օժտված է հետևյալ իրավունքներով.

– ծանոթանալ գործի՝ փորձաքննության առարկային վերաբերող նյութերին,

– միջնորդություն հարուցել եզրակացություն տալու համար իրեն անհրաժեշտ լրացուցիչ նյութեր տրամադրելու վերաբերյալ,

– հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվությամբ մասնակցել հարցաքննություններին եւ այլ քննչական ու դատական գործո-

դություններին եւ տալ փորձաքննության առարկային վերաբերող հարցեր,

– եթե առաջադրված հարցերը փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից դուրս են կամ նրան ներկայացված նյութերը բավարար չեն եզրակացություն տալու համար, գրավոր ձեւով հայտնել փորձաքննությունն նշանակած մարմնին եզրակացություն տալու անհնարինության մասին,

– բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի գործողությունները եւ որոշումները ,

– պահանջել փորձաքննության կատարման հետ կապված ծախսերի հատուցում,

– իր եզրակացությունում մատնացույց անել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները, որոնց վերաբերյալ նրան հարցեր չեն առաջադրվել:

Իրավունքների հետ մեկտեղ, օրենքը նախատեսում է փորձագետի պարտականությունների համակարգը՝ կապված դատական փորձաքննության նշանակման եւ կատարման հետ:

Նախևառաջ, փորձագետը պարտավոր է ներկայանալ փորձաքննությունը նշանակած անձի (մարմնի) կանչով եւ իր անունից տալ առաջադրված հարցերի առումով կատարված հետազոտությունների հիման վրա եզրակացություն՝ այն հաստատելով իր ստորագրությամբ (ՔԴՕ, հոդվ. 250):

Փորձագետը պարտավոր է տալ օբյեկտիվ եզրակացություն իրեն առաջադրված հարցերի վերաբերյալ: Նախ՝ օբյեկտիվությունը ենթադրում է գործի ելքով նրա լիովին ոչ շահագրգռությունը, ապա՝ հետազոտությունների՝ համակցությամբ, արդյունքների վերաբերյալ հատուկ գիտելիքների և ներքին համոզմունքների գնահատման հիման վրա եզ-

րակացություն տալը և գիտականորեն հիմնավորված մեթոդիկաների կիրառումը:

Փորձագետի վրա է դրված նաև դատական նիստում իր տված եզրակացությունը հրապարակելու պարտականությունը, եթե նա հրավիրվում է նիստի:

Քրեադատավարական օրենքով նախատեսված է փորձագետի պարտականությունը՝ ներկայանալ փորձաքննությունն նշանակած անձի կանչով, ինչպես նաև պատասխանատվություն կրել իր պարտականությունների կատարումից խուսափելու կամ անհարգելի պատճառներով չներկայանալու համար:

Փորձագետը պատասխանատվություն է կրում ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար:

Փորձագետի վրա դրված է պարտականություն՝ ապահովել փորձաքննության օբյեկտների ամբողջականությունը: Եթե ենթադրվում է այնպիսի մեթոդների օգտագործում, որոնք կարող են հանգեցնել օբյեկտի լիովին կամ մասնակի ոչնչացման կամ էական փոփոխության, որի կապակցությամբ կբացառվի կրկնակի հետազոտության հնարավորությունը, փորձագետը պետք է այդ մասին տեղեկացնի փորձաքննությունը նշանակողին եւ նրա համաձայնության դեպքում կիրառել օբյեկտը խաթարող նման մեթոդներ:

Եթե փորձագետը չի կարող տալ եզրակացություն, նա պետք է դա հիմնավորի իր դիրքորոշումը պարզաբանող համապատասխան փաստարկներով եւ տեղեկություններով: Այդպիսի փաստարկների թվին են դասվում՝ որոշման մեջ փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից դուրս, ինչպես եւ՝ իրավունքի բնագավառին առնչվող հարցերի առկայությունը, առաջադրված հարցերին պատասխան տալու անհնարինությունը՝ կապված փորձագետի կողմից ներկայացվող բնագավառում գիտելիքների վիճա-

կի, օբյեկտների հետազոտության անհրաժեշտ մեթոդիկաների բացակայության հետ:

Այսպիսով, կարելի է հավաստել, որ փորձագետը քրեական դատավարությունում ունի հատուկ դատավարական կարգավիճակ, որը բխում է վերջինիս մասնագիտական գիտելիքների, հմտությունների և դերակատարության առանձնահատկություններից:

§ 2. Փորձագետի եզրակացության գնահատման գիտական չափանիշները

Փորձագիտական հետազոտման ընթացքն ու արդյունքները նկարագրվում են փորձագետի եզրակացության մեջ:

ՀՀ ՔԴՕ-ի 114 հոդվածի 1-ին մասում տրված է «փորձագետի եզրակացության» սահմանումը. «Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ գրավոր հիմնավորված հետևություններն են իրեն առաջադրված հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է՝ գործի համապատասխան նյութերը հետազոտելով»:

ՀՀ ՔԴՕ նորմերում իր արտացոլումն է գտել պրակտիկայով հիմնավորված այն տարբերակը, երբ փորձագետը ստորագրություն է տալիս այն մասին, որ հատուկ նախագուշացվել է ակնհայտ կեղծ եզրակացություն տալու դեպքում պատասխանատվության ենթարկվելու մասին: ՀՀ ՔԴՕ 85 հոդվածի 4-րդ կետի 2-րդ մասով և 5-րդ կետով սահմանվում է, որ փորձագետը պարտավոր է իրեն առաջադրված հարցերի վերաբերյալ տալ հիմնավորված և օբյեկտիվ եզրակացություն: Փորձագետի կողմից իր պարտականու-

յունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Ի տարբերություն ՀՍՍՀ 1961թ. ՔԴՕ-ի, փորձագետի եզրակացության մեջ նորամուծություն է համարվում այն, որ օրենքով սահմանվում է, թե «...ովքեր են մասնակցել, քրեական գործի որ նյութերն է փորձագետն օգտագործել, ինչպիսի իրեղեն ապացույցներ, նմուշներ և այլ օբյեկտներ են հետազոտվել, ինչպիսի հետազոտություններ են կատարվել, ինչպիսի մեթոդներ են կիրառվել, առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները, գործի համար նշանակություն ունեցող այն հանգամանքները, որոնք պարզվել են փորձագետի նախաձեռնությամբ» (ՀՀ ՔԴՕ հոդված 250-ի 2-րդ մաս):

Այնուհետև, փորձագետի եզրակացության բովանդակության լրիվության, ինչպես նաև դրա հետագա գնահատման համար էական նշանակություն ունի օրենքի այն պահանջը, համաձայն որի. «Փորձագետի եզրակացությանը պետք է կցվեն հետազոտված իրեղեն ապացույցները, նմուշները և այլ նյութեր, ինչպես նաև փորձագետի հետևությունները պարզաբանող լուսանկարները, սխեմաները» (ՀՀ ՔԴՕ հոդված 250-ի 3-րդ մաս):

ՔԴՕ 250 հոդվածում մանրամասն կանոնակարգվում է փորձագետի եզրակացության բովանդակությունը: Հոդվածում նշված է, որ անհրաժեշտ հետազոտությունների կատարումից հետո փորձագետը կազմում է եզրակացություն, որում պետք է նշվի՝ երբ, որտեղ, ում կողմից (ազգանուն, անուն եւ հայրանուն, կրթություն, գիտական աստիճան եւ կոչում, զբաղեցրած պաշտոն), ինչ հիմքերով է կատարվել փորձաքննությունը, ով է մասնակցել փորձաքննությունը կատարելիս, ինչ նյութեր է փորձագետն օգտագործել, ինչ հետազոտություններ է կատարել, փորձագետին ինչ հար-

ցեր են առաջադրվել եւ նրա պատճառաբանված պատասխանները: Եթե փորձաքննություն կատարելիս փորձագետը պարզում է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ, որոնց առնչությամբ իրեն հարցեր չեն առաջադրվել, նա իրավունք ունի դրանք նշել իր եզրակացությունում:

Եզրակացության առավել մանրամասն բովանդակությունը կանոնակարգված է տարբեր գերատեսչական նորմատիվ ակտերով, որոնք կանոնակարգում են փորձագիտական հիմնարկների գործունեությունը: Փորձագետի եզրակացությունը կազմվում է երեք մասից՝ ներածական, հետազոտական եւ հետեւություններ:

Ներածական մասում նշվում են հետևյալները.

- եզրակացության համարը եւ կազմման ամսաթիվը, փորձագետի պաշտոնը, փորձագիտական - քրեագիտական ստորաբաժանման անվանումը, փորձագետի ազգանունը, անունը, հայրանունը, կրթությունը, մասնագիտությունը, փորձագիտական աշխատանքի ստաժը,
- փորձաքննության կատարման համար հիմքերը (քննիչի, նախաքննություն անցկացնող անձի, դատախազի որոշումը կամ դատարանի որոշումը),
- քրեական գործի կամ վարչական իրավախախտման մասին գործի համարը, կատարված հանցագործության կամ վարչական արարքի՝ փորձաքննության առարկային վերաբերող հանգամանքների հակիրճ շարադրումը,
- փորձաքննության տեսակը,
- փորձաքննության ներկայացված օբյեկտների ցանկը,
- լուծման համար փորձագետի առջեւ դրված հարցերի ցանկը,

- կրկնակի փորձաքննության դեպքում եզրակացության ներածական մասում լրացուցիչ նշվում են սկզբնական փորձաքննությունը կատարած փորձագետի մասին տեղեկությունները, սկզբնական փորձաքննության հետեւությունները, ինչպես նաեւ կրկնակի փորձաքննություն նշանակելու շարժառիթները:

Եզրակացության հետազոտական մասում շարադրվում է հետազոտության գործընթացը.

- հետազոտվող օբյեկտների հակիրճ նկարագրությունը,
- հետազոտության ժամանակ կիրառված քրեագիտական միջոցները, մեթոդները եւ ստացված արդյունքները,
- կատարված փորձարարությունները (դրանց նպատակը, բովանդակությունը, պայմանները, քանակը, ստացված արդյունքների հաստատունությունը, դրանց հաստատագրման համար օգտագործված միջոցները եւ մեթոդները),
- օբյեկտի հետազոտության արդյունքում բացահայտված էական նշանները եւ հատկանիշները,
- ի հայտ եկած նշանների համեմատական հետազոտության եղանակները եւ ձեւերը, դրանց միջեւ բացահայտված համընկնումների եւ տարբերությունների գնահատման արդյունքները:

Կրկնակի փորձաքննություն կատարելիս նշվում է՝ հաստատում է, արդյոք, այն սկզբնական փորձաքննության հետեւությունները. տարբերության դեպքում՝ պարզաբանվում են տարբերվելու պատճառները:

Եզրափակիչ մասում շարադրվում են փորձագետի հետևությունները: Հետեւություններում հակիրճ, հստակ, տարբեր մեկնաբանություններից զերծ ձեւով շարադրվում են փորձագետի առջեւ դրված հարցերի պատասխանները:

Յուրաքանչյուր հարցի պատասխանը պետք է տրվի ըստ էության, իսկ անհնարինության դեպքում հարկ է ցույց տալ հարցի լուծման անհնարինությունը:

Փորձագետի եզրակացությանը կցվում են հետազոտությունից հետո մնացած իրեղեն ապացույցները, նմուշները, ինչպես նաև ֆոտոառկուսակները, սխեմաները, գծանկարները եւ փորձագետի հետեւությունները հաստատող այլ նյութեր: Եզրակացության հետազոտական մասի տեքստում դրանց հղումներ են կատարվում: Յուրաքանչյուր հավելված ուղեկցվում է բացատրական մակագրություններով եւ ստորագրվում է փորձագետի կողմից:

Փորձաքննությունն նշանակելու արդյունքներով, բացի փորձագետի եզրակացությունից, կարող է նաև կազմվել եզրակացություն տալու անհնարինության մասին փաստաթուղթ:

Փորձագիտական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ գործնականորեն մշակված է այն հիմքերի ցանկը, որոնց պարագայում պատրաստվում է եզրակացություն տալու անհնարինության մասին փաստաթուղթ (կատարման անհնարինության ակտ).

- եթե առաջադրված հարցը դուրս է փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից (ՔԴՕ, հոդվ. 250): Փորձագետի առջև երբեմն դրվում են քննիչի կամ դատարանի իրավասությանը վերաբերող հարցեր: Երբեմն հարցերը հասցեագրվում են ոչ անհրաժեշտ մասնագիտությամբ փորձագետին:

- Եզրակացություն տալու համար փորձագետին ներկայացված նյութերի ոչ պիտանիության ու անբավարարության նկատառումով: Դա շատ հաճախ պայմանավորված է նմուշների փոքրաքանակությամբ կամ նույնացվող օբյեկտի նվազ տեղեկատվությամբ (օրինակ, մատնահետքում չեն պատկերվել պապիլյար գծանախշի կառուցվածքի անհրաժեշտ քանակությամբ առանձնահատկություններ):

- Գիտության եւ փորձագիտական պրակտիկայի ժամանակակից վիճակը հնարավորություն չի ընձեռում լուծել փորձագետի առջև դրված հարցը:

Երբեմն փորձագետի առջև դրվում են հարցեր, որոնց մի մասը նա կարող է լուծել, իսկ մյուս մասն ի վիճակի չէ լուծելու: Այդպիսի դեպքում կազմվում է եզրակացություն, որում, ըստ էության, հետևություններից հետո փորձագետը նշում է, թե որ հարցերին եւ ինչու նա չի կարող պատասխանել:

Հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ նյութը վերադարձվում է փորձաքննությունը նշանակած անձին՝ առանց փորձաքննության կատարման: Դա տեղի է ունենում.

- փորձաքննության նշանակման դատավարական կարգի խախտման,

- այն հիմնարկում, որտեղ ստացվել է նյութը, անհրաժեշտ մասնագետների, սարքավորումների կամ հետազոտության կատարման համար պահանջվող նյութերի բացակայության դեպքերում:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ փորձագետի եզրակացությունը համարվում է ապացույցի տեսակ:

Կարծում ենք փորձագետի եզրակացությունը, որպես ապացույցի առանձին տեսակ, ունի որոշակի առանձնահատկություն այն պատճառով, որ դրա ձևավորման համար կիրառվում են հատուկ գիտելիքներ ու մեթոդիկաներ: Այս հանգամանքն իր դրսևորումն է ստանում նաև փորձագետի եզրակացության հասկացությունը սահմանելիս: Փորձագետի եզրակացության հասկացության մասին խոսելիս՝ Մ. Ա. Չելցովը և Ն. Վ. Չելցովան նշում են. «Եթե որոշակի փաստի առկայության կամ բացակայության մասին չկա հատուկ

փորձի վրա հիմնված հետևություն, չի կարող լինել նաև փորձագետի եզրակացություն»¹: Նման տեսակետի կողմնակից է նաև Ս. Ս. Ստրոգովիչը՝ խոսելով փորձագետի եզրակացության հասկացության մասին²:

Մասնագիտական գրականության մեջ, քննարկելով փորձագետի եզրակացության՝ որպես ապացույցի տեսակի, առանձնահատկությունները, առանձնացվում են երեք հիմնական հատկանիշներ, որոնք բնորոշ են փորձագետի եզրակացությանը որպես ապացույցի առանձին տեսակ: Դրանք են. նախ եզրակացությունը տրվում է գիտական հետազոտություն կատարելու արդյունքում, ուստի նման հետազոտությունը կատարվում է միայն հատուկ գիտելիքներով օժտված անձի կամ անձանց կողմից, այսինքն՝ կիրառվում են հատուկ գիտելիքներ և, վերջապես, ապացուցողական տեղեկատվությունը տրվում է եզրակացություն՝ գրավոր ակտ կազմելու միջոցով³: Միևնույն ժամանակ կա տեսակետ, համաձայն որի՝ թեև փորձագետի եզրակացությունը վերը նշված հատկանիշներով պայմանավորված ապացույցի մյուս տեսակների շարքում ունի որոշակի առավելություններ, այնուամենայնիվ, դա հիմք չէ փորձագետի եզրակացությունը գնահատել որպես ապացույցի մյուս տեսակների նկատմամբ առավելություն ունեցող հատուկ, բացահիկ ապացույց⁴:

Կարծում ենք, չի կարելի չհամաձայնել նման տեսակետի հետ, քանի որ անկախ նրանից, թե օրենսդրությամբ

¹ Стѣу Чельцов М. А., Чельцова Н. В. Проведение экспертизы в советском уголовном процессе, М., 1954, էջ 25:

² Стѣу Строгович М. С. Курс советского уголовного процесса, М., 1958, էջ 231:

³ Стѣу Давтян А. Г. Экспертиза в гражданском процессе, М., 1995, изд. Спарк, էջ 67:

⁴ Стѣу Треушников М. К. Оценка отдельных видов доказательств по гражданским делам. Советская юстиция, 1985, No.1, էջ 24:

սահմանված ապացույցի տեսակներից որևէ մեկն արժանահավատությունը որոշակիորեն երաշխավորող առանձնահատկություններ ունի, սակայն դա չի կարող ընդհանուր առմամբ այդ ապացույցին առավելություն տվող հանգամանք դիտվել: Կարծում ենք, որ յուրաքանչյուր ապացույցի արժեքը կարող է ի հայտ գալ միայն այլ ապացույցների համակցությամբ դրա գնահատման արդյունքում: Այլ հարց է, որ որոշակի գործերով փորձագետի եզրակացությունը կարող է վճռորոշ դեր խաղալ գործի քննության ընթացքի և ընդհանրապես դրա բացահայտման համար: Մասնավորապես, փաստաթղթերի կեղծումների վերաբերյալ գործերի քննության ժամանակ փորձագետի կողմից փաստաթղթի տեքստի սկզբնական բովանդակության փոփոխման փաստի հատկանիշների հայտնաբերումը հիմնական նշանակություն ունի այլ ապացույցների հետ մեկտեղ կեղծարարության փաստն ապացուցելու համար: Ասվածը հիմնավորվում է նաև մեր կողմից ՀՀ վճերաքննիչ դատարանում կատարված գործերի ուսումնասիրության արդյունքներով: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ փաստաթղթերի կեղծման համար մեղադրանքի ապացուցման հիմքում դատարանը հիմնական գնահատականը տալիս է փորձագետի կողմից տրված եզրակացությանը, որով հաստատվում է դրանում կատարված փոփոխությունների փաստը¹:

Ընդհանրապես, փորձագետի եզրակացությունն ապացույցի մյուս տեսակների նման պետք է վստահություն

¹ Стѣу ՀՀ քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանի արխիվ, վարույթ Հ 370/99 քրեական գործով ըստ մեղադրանքի Վ. Ս.-ի ՀՀ քր. օր-ի 15-78 հոդվ. 1-ին մաս և 213 հոդվ. 3-րդ մասերով, 17.11.1999թ., վարույթ Հ 405/2000 քրեական գործով ըստ մեղադրանքի Ա. Գ.-ի ՀՀ քր. օր-ի 213 հոդվ. 1-ին մասով 05.10.2000թ., վարույթ Հ 10/555/02 ըստ մեղադրանքի Է. Ս.-ի ՀՀ քր. օր-ի 89 հոդվ., 162⁴ հոդվ., 213 հոդվ. 2-րդ մաս, 159¹ 1-ին մասերով, 14.02.2002թ., վարույթ Հ 184/99 ըստ մեղադրանքի Ռ. Շ.-ի ՀՀ քր. օր-ի 89 հոդվ. 4-րդ մաս, 213 հոդվ. 3-րդ մաս, 231 հոդվ. 1-ին մաս 2-րդ կետի, 25.06.1999թ. և այլն:

ներշնչի, որը կարող է ապահովվել միայն հետազոտման ընթացքի շարադրման պարզության, մատչելիության, ինչպես նաև հետևությունների գիտական հիմնավորվածության, արժանահավատության և փաստարկվածության դեպքում: Այս իմաստով կարևոր ենք համարում ընդգծել, որ փորձագետը հետազոտման արդյունքները շարադրելիս ընդհանրապես պետք է ձեռնպահ մնա առանց անհրաժեշտության հատուկ հասկացություններ ու եզրույթներ, օտարահունչ բառեր կիրառելուց, որպեսզի հետագայում եզրակացության բովանդակության վերաբերյալ տարակարծություններ չառաջանան: Ավելացնենք, որ բոլոր դեպքերում կիրառվող տարբեր բնագավառի հատուկ գիտելիքներով պայմանավորված՝ եզրակացության մեջ կարող են օգտագործվել այդ բնագավառի հատուկ եզրույթներ ու արտահայտություններ¹: Այդ իմաստով՝ «փորձագիտական լեզուն» անընդհատ կատարելագործման կարիք ունի²:

Հետազոտման ընթացքն ու արդյունքները շարադրվում են որոշակի հաջորդականությամբ, որոնց համապատասխան էլ փորձագետի եզրակացությունը կարելի է բաժանել կառուցվածքային երեք մասերի՝ ներածական, հետազոտական (նկարագրական) և եզրափակիչ:

Այս առնչությամբ կարևոր ենք համարում ընդգծել, որ վերը նշված բաժանումը պայմանական բնույթ է կրում, քանի որ նույնիսկ քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում նման բաժանում:

¹ Նման դեպքերում հարցին լուծում տալու համար օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին մասում սահմանել է, որ փորձագետը կարող է հարցաքննվել նաև իր կողմից եզրակացության մեջ օգտագործված հասկացությունները ճշգրտելու նպատակով:

² Sten Pedenchuk A. K. Заключение судебного эксперта: логика, истинность, достоверность: докт. дисс., М., 1995, էջ 57:

Փորձագետի եզրակացության գնահատման տեսանկյունից, թեև հիմնական նշանակություն ունի եզրակացության հետազոտական մասը, քանի որ այդ բաժնում է ըստ էության շարադրվում հետազոտման բուն ընթացքն ու արդյունքները, այնուամենայնիվ, եզրակացության հիմնավորվածությունն ու ապացուցողական արժեքը գնահատվում են ամբողջությամբ կառուցվածքային բոլոր մասերի հետ մեկտեղ:

Մեր կողմից ուսումնասիրված փորձագիտական եզրակացությունների կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ եզրակացության ներածական մասում հիմնականում պարունակվում են հետևյալ տեղեկությունները. եզրակացության համարը և այն կազմելու ժամանակը, փորձաքննությունն նշանակած անձի կամ մարմնի անվանումը, փորձաքննությունն նշանակելու իրավական հիմքերը, գործի նյութերի, իրեղեն ապացույցների և հետազոտման ենթակա այլ օբյեկտների ցանկը, ինչպես նաև փորձագետին առաջադրվող հարցերը: Սովորաբար հարցերը շարադրվում են այն հաջորդականությամբ, ինչպես դրանք նշված են փորձաքննությունն նշանակելու մասին որոշման մեջ: Այս ենթատեսակում նշենք, որ փորձագետի կողմից իրեն առաջադրված հարցերի ձևակերպումները փոփոխելու հնարավորության հարցի շուրջ առկա են տարակարծություններ: Որոշ հեղինակներ գտնում են, որ փորձագետը իրավասու չէ փոխել իրեն առաջադրված հարցերի ձևակերպումները, բացառությամբ քերականական սխալների, վրիպակների դեպքերի¹, իսկ այլ հեղինակներ գտնում են, որ եթե փորձագետին հասկանալի է հարցի իմաստը, սակայն գտնում է, որ այն

¹ Sten Назначение и производство судебных экспертиз, пособие для следователей, судей и экспертов, ВНИИСЭ, отв. ред. Г. П. Арин-ушкин, А. Р. Шляхов, М., 1988, изд-во Юридическая литература, էջ 28:

պետք է վերաձևակերպվի, ապա փորձագետը կարող է հարցը վերաձևակերպել այնպես, ինչպես նա հասկանում է իր հատուկ գիտելիքներին համապատասխան, սակայն պարտադիր կերպով նշելով նաև հարցի սկզբնական ձևակերպումը¹:

Մեր կարծիքով, բոլոր դեպքերում նպատակահարմար է փորձագետին իրավունք վերապահել փոխելու իրեն առաջադրված հարցերի ձևակերպումները հետևյալ երկու պայմանների պահպանման դեպքերում. նախ վերաձևակերպումը չպետք է փոխի կամ կասկած առաջացնի առաջադրված հարցի բովանդակության վերաբերյալ, ապա պարտադիր կերպով պետք է նշվի նաև հարցի սկզբնական ձևակերպումը: Վերջին հաշվով, փորձագիտական հետազոտման և եզրակացության հետագա գնահատման տեսանկյունից էականը հարցի բովանդակության ճիշտ ընկալումն է, այլ ոչ թե ձևակերպման ոճը կամ ձևը, որը փորձագետը կարող է փոխել իր մասնագիտական ընկալման աստիճանին համապատասխան:

Ներածական մասում նշվում են նաև լրացուցիչ հարցերը, որոնց լուծումը փորձագետն անհրաժեշտ է համարում սեփական նախաձեռնությամբ՝ փորձաքննության ամբողջականությունն ու գործի արդարացի քննությունն ապահովելու նպատակով:

Մասնավորապես, փաստաթղթերի փորձագիտական հետազոտման ժամանակ փորձագետն իր մասնագիտական ու աշխատանքային փորձի վրա հիմնվելով կարող է պարզել փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման հետ կապված այնպիսի հարցեր, որոնք առաջադրված չեն եղել իրեն փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ: Վերջինս իսկապես կարևոր կրիմինալիս-

¹ Տե՛ս Бурков И. В., Мурзинов А. В. Заключение эксперта как вид доказательств, Владимир, 2001, изд. Транзит-Икс, էջ 26:

տիկական ու դատավարական նշանակություն ունեցող հարց է և երկար ժամանակ մասնագիտական գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տվել: Ուստի, հաշվի առնելով քննարկվող հիմնահարցի կարևոր նշանակությունը հետազոտությունների կատարման ընթացքի և դրանց արդյունքների ամրագրման համար, կցանկանայինք մեր դիրքորոշումն արտահայտել դրա վերաբերյալ, հատկապես, եթե նկատի ունենանք, որ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտումը փորձագիտական հետազոտությունների մեջ իր ունեցած մեծ տեսակարար կշռի շնորհիվ չի կարող անմասն մնալ քննարկվող հիմնահարցից, և հարցի ճիշտ ու հստակեցված լուծումը կարող է էական դեր կատարել հետազոտության կատարման ընթացքի և արդյունքների ամրագրման, ինչպես նաև եզրակացության գնահատման համար:

Փորձագիտական նախաձեռնության կապակցությամբ նշենք, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի՝ փորձագետը պարտավոր է եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլ նաև իր իրավասության շրջանակների մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով: Նույն հարցը նախատեսված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի՝ եթե փորձագետը փորձաքննություն կատարելիս պարզում է գործի համար նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնց կապակցությամբ նրան հարցեր չեն առաջադրվել, նա իրավունք ունի այդ հանգամանքների վերաբերյալ հետևություններն արտացոլել իր եզրակացությունում:

Նշենք, որ փորձագիտական նախաձեռնության հարցը գրականության մեջ տեսական վեճերի տեղիք է տվել: Բանն

այն է, որ, իրոք, հետազոտություն կատարելիս փորձագետն անձամբ կարող է պարզել որոշակի հանգամանքներ, որոնք կարող են գործի քննության համար էական նշանակություն ունենալ: Բացի դրանից, որոշ դեպքերում փորձագետը, գործի հանգամանքները, իրեղեն ապացույցներն ուսումնասիրելով, հենվելով իր մասնագիտական փորձի վրա, կարող է ավելի լավ որոշել այն հարցերի շրջանակը, որոնք ենթակա են փորձագիտական հետազոտման, ինչպես նաև առաջադրել հարցեր, որոնց լուծումը հնարավոր է փորձաքննության միջոցով, ի տարբերություն փորձաքննություն նշանակող մարմնի, որը կարող է տեղյակ չլինել տվյալ փորձաքննության հնարավորությունների մասին:

Սակայն վերը նշվածի առնչությամբ առաջանում են որոշ խնդիրներ, որոնք էլ տարակարծությունների տեղիք են տվել. մասնավորապես, փորձագետն իրավասու է իր նախաձեռնությամբ ընդլայնել հետազոտության շրջանակները, թե՛ ոչ: Այս կապակցությամբ Վ. Ս. Նիկիֆորովը նշում է. «Փորձագետը կարող է և պարտավոր է նախաձեռնություն դրսևորել իր հետազոտության սահմաններն ընդլայնելու ուղղությամբ, դատարանի կամ քննիչի ուշադրությունը հրավիրել առանձին հանգամանքների վրա, սակայն միայն այն բնագավառում, որտեղ անհրաժեշտ են նրա հատուկ գիտելիքները»¹: Մյուս հեղինակներն այդպիսի նախաձեռնության դրսևորումը հնարավոր են համարում միայն փորձաքննություն նշանակած անձի հետ նախապես համաձայնեցնելուց հետո²:

¹ Տե՛ս Никифоров В. М. Вопросы советской криминалистики, М., 1951, էջ 15:

² Տե՛ս Комиссарова Я. В. Процессуальные и нравственные проблемы производства экспертизы на предварительном следствии, канд. дисс., Саратов, 1996 էջ 59, Чельцов М. А., Чельцова Н. В. Проведение экспертизы в советском уголовном процессе, М., 1954, էջ 130; Шляхов А. Р. Судебная экспертиза: организация и проведение, М., 1979, Юридическая литература, էջ 90-91:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ որոշ հեղինակներ փորձագիտական նախաձեռնության իրավունքը զնահատելով որպես բացառիկ, այնուամենայնիվ, դրա իրականացումը հնարավոր են համարում որոշակի պայմանների առկայության դեպքում, նշելով, որ փորձագետն իրավունք ունի իր նախաձեռնությամբ ցույց տալ այն հանգամանքները, որոնց վերաբերյալ իրեն հարցեր չեն առաջադրվել, սակայն հետևյալ պահանջների պահպանման դեպքում. եթե այդ հանգամանքները վերհանվել են իր հատուկ գիտելիքների կիրառման հիման վրա և դուրս չեն գալիս փորձագետի իրավասության սահմաններից, եթե դրանք վերհանվել են փորձագիտական հետազոտման ընթացքում և բխում են դրանից, եթե դրանք նշանակություն ունեն փորձագետի կողմից հետազոտության կատարման ընթացքում պարզաբանված հանգամանքների համար և անմիջականորեն կապված են դրանց հետ, այսինքն՝ բացահայտում, լրացում, ճշգրտում են տվյալ փորձաքննության առարկան կազմող հանգամանքները և, վերջապես, եթե օբյեկտիվ պատճառներով փորձագետը չի կարողացել խորհրդակցել փորձաքննությունը նշանակած անձի հետ եզրակացության մեջ նշված հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ ներառելու առիթով¹:

Վերը շարադրվածի կապակցությամբ նշենք, որ միանշանակ համաձայն ենք տարբեր հեղինակների այն տեսակետին, որ լրացուցիչ հանգամանքների վերհանումը չպետք է դուրս գա փորձագետի իրավասության սահմաններից և դրանք պետք է պարզաբանվեն փորձագետի կողմից հետազոտություն կատարելիս նրա հատուկ գիտելիքների կիրառման հիման վրա, սակայն հետազոտության սահմանների հարցի հետ կապված, մեր խորին համոզմամբ՝ նախ որևէ

¹ Տե՛ս Бурков И. В., Мурзиков А. В. Заключение эксперта как вид доказательств, Владимир, 2001, изд. Транзит-Икс, էջ 66:

հետազոտությունն չի կարող ունենալ սահմաններ, այլ հարց է, եթե խոսքը վերաբերում է որոշակի տեսակի հետազոտության: Սակայն անգամ այս պարագայում մենք գտնում ենք, որ եթե նույնիսկ փորձագետն իր նախաձեռնությամբ ընդլայնում է հետազոտության սահմանները կամ թեկուզև ծավալը՝ գործի քննության համար նշանակություն ունեցող որևէ փաստ, երևույթ կամ հանգամանք վերհանելու կամ պարզելու նպատակով, ապա այն արդարացի կարելի է համարել: Որպես ասվածի հիմնավորում՝ ընդգծենք, որ շատ հաճախ հնարավոր է փորձագետի կողմից նոր հայտնաբերած հանգամանքները հետագա հետազոտությունների ընթացքում չբացահայտվեն՝ նկատի ունենալով, որ իրեղեն ապացույցները, փորձաքննության ուղարկված նյութը, առարկան կարող են ենթարկվել արտաքին ու ներքին տարբեր ազդեցությունների ու կրել ֆիզիկական, քիմիական, կազմաբանական կամ այլ տեսակի փոփոխություններ: Արդյունքում, գործի ճիշտ լուծման համար կարևոր նշանակություն ունեցող որոշ հանգամանքներ կարող են այդպես էլ չպարզված մնալ: Իսկ նման կարևոր ու անհրաժեշտ նշանակություն ունեցող գործողություն կատարելու հնարավորություն փորձագետին չընձեռելը կամ այդ հնարավորության ընձեռումը փորձաքննությունն նշանակող անձի հայեցողությանը թողնելը, մեր կարծիքով, մեղմ ասած, անընդունելի է, առավել ևս, եթե հաշվի առնենք, որ օրենսդիրն այդ ճանապարհով արդեն գնացել է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետով փորձագետին ոչ թե իրավունք է վերապահել, այլև պարտավորեցրել է եզրակացություն տալ նաև փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով: Բացի դրանից, քննարկվող հարցն ուղղակիորեն բխում է դատական փորձագիտության խնդիրների ու փորձագետի ինքնուրույնության բովանդակությունից:

Գրականության մեջ նշվում է նաև, որ փորձագիտական նախաձեռնության հետ կապված որոշ խնդիրներ են առաջանում նաև փորձագետի կողմից նոր հարցեր ձևակերպելու ու դրանց պատասխանելու առնչությամբ: Մասնավորապես Պ. Ֆ. Տելնովը քննադատում է փորձագետի նախաձեռնությամբ նոր՝ լրացուցիչ հարցեր առաջադրելու հնարավորության հարցը: Վերջինս հիմնավորում է նրանով, որ հարցեր առաջադրելու իրավունքը վերապահված է փորձաքննությունն նշանակած անձին և, ավելին, մինչև փորձաքննություն կատարելը մեղադրյալին¹ իրավունք է վերապահված ծանոթանալու փորձագետին առաջադրված հարցերին, որն իրավասու է իր վերաբերմունքն արտահայտել դրանց վերաբերյալ և միջնորդելու առաջադրել լրացուցիչ հարցեր: Իսկ փորձագետի կողմից այդ հարցերն առաջադրելիս մեղադրյալի այդ իրավունքը չի պահպանվում²: Իսկ

¹ Հեղինակը միայն նշում է մեղադրյալին, սակայն, մեր կարծիքով, նման իրավունքով օժտված են նաև կասկածյալը՝ նախնական քննության և հետաքննության ընթացքում, ամբաստանյալը՝ դատական քննության ընթացքում: Բացի դրանից, համաձայն ՀՀ քր. դատ. օր-ի 247 հոդվածի՝ քննարկվող իրավունքից օգտվում են ոչ միայն կասկածյալը, մեղադրյալը, այլ նաև տուժողը: Թեև հոդվածի ձևակերպման մեջ չի նշվում ամբաստանյալի մասին, սակայն համաձայն նույն օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ մասի՝ մեղադրյալը, որի վերաբերյալ գործը նշանակված է դատական քննության, կոչվում է ամբաստանյալ: Կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում մեղադրյալի այդ իրավունքից կարող է օգտվել նաև ամբաստանյալը դատական քննության ընթացքում: Վերջինս բխում է նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքի բովանդակությունից (քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու հնարավորությունը (ՀՀ քր. դատ. օր-ի 19-րդ հոդվածի 2-րդ մաս)): Ավելացնենք նաև, որ փորձագետին հարցեր առաջադրելու իրավունքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ օժտել է գործին մասնակցող անձանց: Օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանին առաջադրել հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում:

² Տելնով П. Ф. Процессуальные вопросы судебной экспертизы, (пособие для экспертов) ЦНИИСЭ, М., 1967, էջ 23:

Ի. Լ. Պետրուխինի կարծիքով՝ փորձագետի կողմից գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ հայտնաբերելիս, որոնք դուրս են գալիս իրեն առաջադրված հարցերի շրջանակից, փորձագետը կարող է այդ մասին հայտնել փորձաքննություն նշանակած մարմնին՝ որոշման մեջ համապատասխան հարցերը ներառելու և մեղադրյալին, իսկ դատարանում՝ ամբաստանյալին, ինչպես նաև դատավարության այլ մասնակիցներին դրանց ծանոթացնելու համար¹:

Միանգամայն համաձայնելով հեղինակների այն տեսակետին, որ փորձաքննություն նշանակելիս, ինչպես նաև կատարելիս պետք է պաշտպանել նաև մեղադրյալի և դատավարության այլ մասնակիցների շահերը և հարգել իրավունքները, այնուամենայնիվ, ընդգծենք, որ վերջիններիս իրավունքը տվյալ դեպքում փորձաքննություն նշանակելիս արտահայտվում է փորձաքննություն նշանակելու մասին համապատասխան մարմնի որոշմանը ծանոթանալով և ընդամենը փորձագետին լրացուցիչ հարցեր առաջադրելով: Կարծում ենք, շատ դեպքերում փորձագետին դատավարական օրենսդրությամբ լրացուցիչ հարցեր առաջադրելու իրավունք ունեցող անձինք (կասկածյալ, մեղադրյալ, տուժող, դատավարության այլ մասնակից և այլն) նույնպես կարող են վրիպել կամ շրջանցել այնպիսի հարցեր, որոնք կարող են առաջադրվել ու լուծվել փորձագետի կողմից տվյալ հետազոտության ընթացքում և, վերջին հաշվով, շատ հնարավոր է, որ փորձագետի նախաձեռնությամբ առաջադրված հարցերն ուղղակի բխեն գործի օբյեկտիվ քննության շահերից: Ստացվում է, որ իսկապես որոշ դեպքերում փորձագետն իր նախաձեռնության իրավունքից օգտվելով՝ կարող

¹ Стен Петрухин И. Л. Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, изд-во "Юридическая литература", էջ 111:

է նպաստել, այլ ոչ թե խոչընդոտել մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրականացմանը: Բացի դրանից, մեղադրյալի և մյուս անձանց հարուցած միջնորդությունները՝ փորձագետին լրացուցիչ հարցեր առաջադրելու վերաբերյալ, հնարավոր է նաև մերժվեն վարույթն իրականացնող մարմնի կողմից և, վերջապես, փորձագետի կողմից առաջադրվող լրացուցիչ հարցերը բխում են կատարվող հետազոտությունից և կոչված են լրացնելու այն:

Ինչ վերաբերում է Ի. Լ. Պետրուխինի այն պնդմանը, թե լրացուցիչ հարցերի մասին փորձագետը նախօրոք կարող է հայտնել փորձաքննություն նշանակելու մասին որոշում կայացրած անձին՝ մեղադրյալին, ինչպես նաև օրենքով նման իրավունքով օժտված դատավարության այլ մասնակիցներին տեղյակ պահելու համար, ապա չենք կարծում, որ այդ քայլին չդիմելու դեպքում մեղադրյալի և դատավարության մյուս մասնակիցների իրավունքները կարող են խախտվել, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, հնարավոր է նաև, որ փորձագետի առաջադրած հարցերը բխեն մեղադրյալի կամ մյուսների շահերից: Իսկ փորձագետի առաջադրած հարցերի շուրջ կասկածներ կամ այլ առարկություններ ունենալու դեպքում թվարկված անձինք կարող են օգտվելով իրենց մեկ այլ իրավունքից, այն է՝ փորձագետի եզրակացությանը համաձայն չլինելու դեպքում միջնորդել, որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

Եվ, վերջապես, փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ նշում է պարունակվում փորձագետի համար առ այն, որ վերջինս պատասխանի այդ թվում նաև հետազոտության ընթացքում առաջացող լրացուցիչ հարցերին, և այդ որոշմանը մեղադրյալը և դատավարական օրենսդրությամբ այդ իրավունքից օգտվող այլ անձինք ծանոթացվում

են, այսինքն՝ նախապես տեղեկացվում են փորձագիտական նախաձեռնությամբ առաջադրվող հարցերի հնարավորության մասին, հետևաբար, անհրաժեշտության դեպքում վերը շարադրված կարգով (լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն կատարելու միջնորդությամբ) կարող են միջոցներ ձեռնարկել, եթե գտնեն, որ փորձագետին կարելի էր առաջադրել այլ հարցեր:

Բացի դրանից, գրականության մեջ քննադատության է ենթարկվում նաև փորձագետին առաջադրվող հարցերի բաժանումը հիմնականի ու լրացուցիչի, քանի որ լրացուցիչ հարցերը կարող են ավելի կարևոր տեղեկություններ պարունակել, քան հիմնական հարցերը, և, ավելին, հարցերի նման բաժանումը կարող է խառնաշփոթ առաջացնել հիմնական և լրացուցիչ փորձաքննությունների հետ կապված¹:

Մեր կարծիքով, միանշանակ պետք է համաձայնել վերը ներկայացված տեսակետին, քանի որ իսկապես անընդունելի է փորձագիտական հետազոտմամբ լուծվող հարցերն ընդհանրապես դասակարգել հիմնականի և լրացուցիչի, որովհետև գործի քննության ցանկացած փուլում լրացուցիչ թվացող ցանկացած հարց հաջողությամբ կարող է էական հանգամանք պարզելու հիմք դառնալ: Բացի դրանից, փորձագետի կողմից առաջադրվող «լրացուցիչ» հարցերը կարող են առավել արժեքավոր լինել, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, փորձագետը հիմնվելով իր մասնագիտական հմտությունների, հատուկ փորձի վրա՝ կարող է իր նախաձեռնությամբ առաջ քաշել և լուծել տվյալ հետազոտության, ինչպես նաև գործի քննության համար էական նշանակություն ունեցող հարցեր: Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի օգտագործում լրացուցիչ հար-

¹ Стів Саматов Т. А. К вопросу о процессуальной регламентации экспертной инициативы// Криминалистика и вопросы судебной экспертизы, Ташкент, 1988, изд. ТашГУ, էջ 10:

ցեր արտահայտությունը, այնուամենայնիվ, մեր պատկերացմամբ, այն ընդհանուր առմամբ կարող է կիրառվել միայն նշելու համար փորձագետի կողմից պարզված հարցերը, այլ ոչ թե պակաս հետաքրքրություն ներկայացնող հարցերի իմաստով:

Փորձագետի կատարած հետազոտության ընթացքի և արդյունքների ամրագրման, ինչպես նաև եզրակացության գնահատման տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է իրենից ներկայացնում նաև այն հարցը, թե փորձագետն իրավասու է, արդյոք, որպես ելակետային տվյալներ օգտագործել մասնագիտական կամ այլ անհրաժեշտ գրականության աղբյուրներից ստացված տվյալները, թե՛ ոչ, և միայն պետք է սահմանափակվի իր անմիջական հետազոտության տվյալներով: Այս կապակցությամբ նշենք, որ հաճախ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում օգտվել գրականության տարբեր աղբյուրներից, տեղեկագրերից կամ այլ հետազոտությունների արդյունքում հաստատված տվյալներից՝ գիտականորեն հիմնավորված եզրակացություն տալու համար: Որպես ելակետային տվյալներ փորձագետը կարող է երբեմն հաշվի առնել նաև փորձարարական-գիտական հետազոտությունների արդյունքները, որոնք կատարվել են ուրիշ հիմնարկներում: Դրանք կապված չեն որոշակի գործի հետ, սակայն կարող են կարևոր նշանակություն ունենալ եզրակացություն տալու համար: Մասնավորապես, փաստաթղթերի փորձագիտական հետազոտման ժամանակ փորձագետը կարող է հարցում կատարել առանձին ներկանյութերի որոշակի տվյալների վերաբերյալ, այդ տվյալները տրամադրելու կամ տվյալ դեպքում որոշակի մեթոդիկայի կիրառման բնութագրիչների մասին և այլն: Այս բոլոր տվյալները կրում են խորհրդատվական բնույթ և

նման են տարբեր տեղեկագրերում պարունակվող տվյալներին: Համապատասխան փաստաթղթերը կարող են կցվել եզրակացությանը կամ էլ եզրակացության մեջ նշվում է այդ տվյալների ստացման աղբյուրը: Ընդ որում, նույնիսկ մասնագիտական գրականության մեջ տեսակետ կա, որ նման գիտամեթոդական ձեռնարկների ու տեղեկագրերի տվյալների կիրառումը բարձրացնում է եզրակացության գիտական հիմնավորվածության արժեքը, քանի որ վերջիններս պարունակում են արդեն փորձարկված, գործնականում փորձարկված և իրենց արդյունավետությունն ու հիմնավորվածությունը հաստատած այս կամ այն բնագավառի տվյալներ¹: Ընդ որում, փորձագետն իր աշխատանքի ընթացքում կիրառում է ոչ թե ուղղակի գիտության ու տեխնիկայի տվյալները, այլև գիտականորեն հիմնավորվածություն ունեցող, հատուկ փորձարկված ու մշակված մեթոդներ, կանոններ ու դրույթներ, որոնք կարող են օգտագործվել փորձագիտական խնդիրների լուծման համար²:

Պ. Ֆ. Տելնովի կարծիքով՝ փորձագետը կարող է խորհրդակցել այլ մասնագետների հետ, օգտվել գրականության տվյալներից, որոնք որևէ դատավարական նշանակություն չունեն: Կարևորն այն է, որ փորձագետը եզրակացությունը տալիս է իր անունից և չի կարող այլ մասնագետի կողմից կատարված հետազոտության արդյունքներով եզրակացություն տալ³:

Միանշանակ համաձայնելով հեղինակի վերը նշված կարծիքի հետ՝ հավելենք, որ փորձագետն իր կատարած հե-

¹ Стѹ Бурков И. В., Мурзиков А. В. Заключение эксперта как вид доказательств, Владимир, 2001, изд. Транзит-Икс, էջ 13-14:

² Стѹ Педенчук А. К. Заключение судебного эксперта: логика, истинность, достоверность: докт. дисс., М., 1995, էջ 50-51:

³ Стѹ Тельнов П. Ф. Процессуальные вопросы судебной экспертизы, (пособие для экспертов) ЦНИИСЭ, М., 1967, էջ 8:

տազոտության համար կրում է անձնական պատասխանատվություն, բնականաբար, վերջինս ենթադրում է, որ հետազոտությունը պետք է անմիջականորեն կատարվի միայն նրա կողմից, թեև հետազոտության ընթացքում փորձագետը կարող է օգտվել այլ՝ առավել փորձառու մասնագետների խորհուրդներից, տարբեր տեղեկագրերից և այլ տվյալներից, սակայն եզրակացությունը պետք է հիմնավորի իր կողմից անմիջականորեն կատարված հետազոտությունների արդյունքներով:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ տեղեկատվության կամ գրականության տվյալները որպես ելակետային հետազոտման ընթացքում օգտագործելու դեպքում նպատակահարմար է բոլոր դեպքերում այդ մասին հայտնել փորձաքննություն նշանակած մարմնին¹:

Կարծում ենք, որ դրա անհրաժեշտությունը չկա, նախ՝ քանի որ դրանք սկզբնական տվյալներ են, ապա՝ խորհրդատվական բնույթի, և այնուհետև նշված մարմիններին տեղեկացնելը որևէ հետևանք չի կարող ունենալ, նկատի ունենալով, որ վերջիններս իրավասու չեն ուղղորդել հետազոտման ընթացքը, առավել ևս՝ վերահսկել այն:

Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման վերաբերյալ եզրակացության հետազոտական մասում շարադրվում են փորձագետի կողմից կիրառված տեխնիկական միջոցներն ու մեթոդները՝ մանրադիտակային, լուսանկարչական, ֆիզիկական, քիմիական և այլն: Ընդ որում, պարտադիր պետք է նշվի տարբեր սարքերի ու մեթոդների կիրառման տեխնիկական պայմանների մասին, քանի որ դրանք մեծ ազդեցություն ունեն ամբողջ հետազոտության կատարման ընթացքի, հետևությունների հիմնա-

¹ Стѹ Шляхов А. Р. Судебная экспертиза, организация и проведение, М., 1979, էջ 127:

վորման և զնահատման համար: Հետազոտման մեթոդները և բարդ սարքերի աշխատանքի տեխնոլոգիական ռեժիմը, ստացված արդյունքները եզրակացության մեջ, կարծում ենք, մանրամասն պետք է նշվեն, որպեսզի հետագայում հնարավոր լինի ստուգել հետևությունների ճշմարտացիությունը՝ կրկնելով հետազոտման մեթոդիկան, այլ կերպ ասած՝ եզրակացության հիմնավորվածությունը:

Հետազոտման ընթացքում կիրառված մեթոդիկաների շարադրման հարցի հետ կապված մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ փորձագետը կարող է հիմնվել տարբեր գիտնականների հեղինակած տեսությունների ու դրույթների վրա¹, իսկ այլ հեղինակներ էլ նշում են, որ նման դեպքերում փորձագետը ոչ միայն պետք է նշի որոշակի մեթոդիկայի հեղինակի և գրականության աղբյուրի մասին, այլ նաև պետք է տվյալներ նշվեն դրա պաշտոնական հաստատման մասին, եթե այն պաշտոնապես երաշխավորվել է²: Մենք ևս կարծում ենք, որ ցանկացած դեպքում որևէ հեղինակի մասնավոր մեթոդիկա կիրառելիս հարկ է նաև նշել դրա պաշտոնական հաստատման վերաբերյալ տվյալներ կիրառված մեթոդիկայի արդյունքների ստացման արժանահավատությունը մեծացնելու և ընդհանրապես եզրակացության ապացուցողական արժեքը բարձրացնելու նպատակով:

Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման ժամանակ եզրակացության հետազոտական մասում հետազոտվող օբյեկտի ձևը նկարագրելիս նպատակահարմար է օգտվել համընդհանուր կիրառում ունեցող երկրաչափական հասկացություններից և խուսափել համա-

¹ Տե՛ս Владимиров Л. Е. Учение об уголовных доказательствах, Тула 2000, изд. Автограф, էջ 244:

² Տե՛ս Бурков И. В., Мурзинов А. В. Заключение эксперта как вид доказательств, Владимир, 2001, изд. Транзит-Икс, էջ 46:

նուններ կիրառելուց: Մասնավորապես գույնի նկարագրման ժամանակ, կարծում ենք, առավել նպատակահարմար է օգտվել դրա ֆիզիկական բնութագրիչներից, մասնավորապես օգտվել գունավոր ապակիների հավաքածուից՝ նշելով գույնի խտության աստիճանը, ասենք՝ բաց (մուգ) կարմիր և այլն: Գտնում ենք, որ պետք է ձեռնպահ մնալ գունային համեմատություններ կիրառելուց: Նույնը վերաբերում է նաև չափի, քաշի, ծավալի և այլնի բնութագրումներին, եթե դրանք անհրաժեշտ են փաստաթղթերի փորձագիտական հետազոտման ընթացքի ու արդյունքների ամրագրման ժամանակ:

Հետազոտման ընթացքի և արդյունքների շարադրումը նպատակ ունի փորձաքննություն նշանակած անձին հնարավորություն ընձեռել համոզվելու հետազոտման մեթոդիկայի ամբողջականության ու գիտական հիմնավորվածության, դրա կիրառման ստուգության մեջ:

Ինչպես արդեն նշել ենք, եզրակացության հետազոտական մասում պարտադիր կերպով մանրամասն պետք է նկարագրվեն հետազոտման ընթացքում կիրառված գիտատեխնիկական մեթոդները: Այս իմաստով կցանկանայինք կարևորել նոր գիտատեխնիկական մեթոդիկաների կիրառման ընթացքի շարադրման հարցը: Խոսքը մասնավորապես համակարգչային նոր տեխնիկայի և ծրագրերի կիրառման մասին է: Այդ դեպքում մանրամասն պետք է շարադրվեն համակարգչային տեխնիկայի ու այն ծրագրի տեխնիկական տվյալները, որոնք կիրառվել են հետազոտություններ կատարելիս, որպեսզի հնարավոր լինի ծանոթանալ կիրառված մեթոդիկայի հնարավորություններին ու արժանահավատությանը և անհրաժեշտության դեպքում վերարտադրվի այն: Մեր փորձարարական աշխատանքների ընթացքում փաստաթղթերի տարատեսակ հետազոտությունների նպա-

տակով կիրառվել է «Videoscope» անվանմամբ համակարգչային ծրագիրը, որի արդյունքներ եզրակացության մեջ նկարագրելու դեպքում անպայմանորեն կշարադրվեն ծրագրի ընդհանուր տեխնիկական ու աշխատանքային ռեժիմի տվյալները՝ նշելով տեխնիկայի ու համակարգչի մակնիշը, որպեսզի այդ մեթոդիկայի կիրառումն ավելի արժանահավատ լինի և անհրաժեշտության դեպքում կրկնվի:

Փորձագիտական պրակտիկայում փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման վերաբերյալ եզրակացություններում կարելի է հանդիպել հետևյալ արտահայտություններին՝ «համակարգչային տեխնիկայի կիրառմամբ կատարված հետազոտությունից պարզվեց հետևյալը..... կամ համակարգչային տեխնիկայի կիրառման արդյունքում պարզվեց, որ....»¹, որոնք, կարծում ենք, լիարժեք համարվել չեն կարող, քանի որ մանրամասն տեղեկատվություն չի տալիս կիրառված համակարգչային տեխնիկայի վերաբերյալ, դրա կիրառման արժանահավատությունն ստուգելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այն կրկնելու համար: Քննարկվող դեպքերում անհրաժեշտ է նշել նաև համակարգչի մակնիշը, մոդելը, համակարգչային ծրագիրը, որով կատարվել է հետազոտությունը, աշխատանքային ռեժիմը և այլ տվյալներ:

Կարծում ենք, որ այսօրինակ հարցերի ավելի խոր քննարկումը հրատապ է՝ հաշվի առնելով համակարգչային տեխնիկայի զարգացման ու դրա կիրառման համընդհանրության ժամանակակից վիճակն ու հեռանկարները:

¹ Տե՛ս ԲԳ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձագիտական վարույթներ Զմ 09499903, 01.07.1999թ., ըստ քրեական գործի հմ 62203499; Զմ 03-103/1217, 18.09.1998թ., ըստ քրեական գործի հմ 13206198; Զմ 03-116/1421, 30.10.1998թ., ըստ քրեական գործի հմ 70901598; Զմ 03-121/1409, 27.10.1998թ., ըստ քրեական գործի հմ 51104298 և այլն:

Շարադրելով անջատ և համեմատական հետազոտությունների տվյալները՝ փորձագետը եզրակացության մեջ դրանց տալիս է գիտական գնահատական: Փորձագետը ոչ միայն պետք է հավաստի ստացված արդյունքները, հատկանիշների նույնությունը կամ տարբերությունը, այլ պետք է գիտականորեն հիմնավորի հետազոտվող օբյեկտները բնութագրող հատկանիշների նշանակությունը:

Այս կապակցությամբ՝ եթե կատարված հետազոտության արդյունքում փորձագետը պարզում է, որ իր կողմից հայտնաբերված հատկանիշները բավարար են որոշակի (կատեգորիկ) դրական եզրակացություն տալու համար, իսկ որոշ հատկանիշների տարբերությունները չեն կարող ազդել այդ եզրահանգման վրա, ապա փորձագետը իր եզրակացության մեջ պարտավոր է պարզաբանել, թե ինչու հայտնաբերված տարբերությունները չեն կարող ազդել իր կատեգորիկ եզրահանգման վրա¹:

Եզրափակիչ մասում նշվում են փորձագետի հետևությունները: Փորձագետի հետևություններն իրեն առաջադրված հարցերի պատասխաններն են, որոնցում հատուկ գիտելիքների կիրառման հիման վրա հաստատվում է որոշակի փաստի, հանգամանքի առկայությունը կամ բացակայությունը: Եզրակացության մեջ դրանք շարադրվում են այն հաջորդականությամբ, որով դրանք դրվել են փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ: Դրա հետ մեկտեղ նշվում են նաև այն փաստերը, որոնք բացահայտվել են փորձագետի կողմից սեփական նախաձեռնությամբ:

Պատասխանները պետք է խստորեն համապատասխանեն առաջադրված հարցերի բովանդակությանը: Պատասխանները ձևակերպվում են հստակ ու պարզ, դրանք չպետք

¹ Տե՛ս Яблоков Н. П. Криминалистическое исследование материалов документов, М., 1961, изд. Московского университета, էջ 33:

է լինեն երկինաստ և տարբեր մեկնաբանությունների տեղիք տան:

Հետևությունները ձևակերպելիս նպատակահարմար չէ օգտագործել իրավական գնահատական պարունակող արտահայտություններ: Մասնավորապես, փաստաթղթերի հետազոտման դեպքում՝ «կեղծ փաստաթուղթ», «ստորագրությունը կեղծված է», «կեղծ կնիք» և այլն: Սակայն երբեմն փորձագետներին հենց փորձաքննություն նշանակող մարմիններն են առաջադրում այդպիսի հարցեր, օրինակ՝ օրինական է, արդյոք, Կ.-ին տրված վարորդական իրավունքի վկայականը, պատրաստված է, արդյոք, այն Կ.-ի կողմից թե՛ ոչ¹: Կամ եզրակացությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ փորձագետին առաջադրված են հետևյալ հարցերը. «Փորձաքննության ներկայացված թղթադրամները կեղծ են, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա ինչ եղանակով»², «Փորձաքննությանը ներկայացված ԱՄՆ 100 դոլարանոց թղթադրամները կեղծ են, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա ինչ եղանակով, կեղծված լինելու դեպքում դրանք համեմատել հայտնաբերված ՀՀ կեղծ թղթադրամների հետ՝ պատրաստման եղանակի նույնացում կատարելու նպատակով»³, կամ «փորձաքննությանը ներկայացված ծխախոտի վրա փակցված հարկային դրոշմանիշերը կեղծ են, թե՛ ոչ, եթե կեղծ են, ինչ եղանակով և ինչ հատկանիշներով են տարբերվում պե-

¹ Տե՛ս Шляхов А. Р. Общие положения методики криминалистической экспертизы/ Учебно-методическое пособие/, М., 1961, էջ 117:

² Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձագիտական վարույթ Հմ 03-142/1700, 15.12. 1998թ., ըստ քրեական գործի հմ152080498:

³ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձագիտական վարույթ Հմ 03-144/1723, 21.12.1998թ., ըստ քրեական գործի հմ 44202498:

տական չափորոշիչով պատրաստված դրոշմանիշերից»¹: Նման դեպքերում ճիշտ կլիներ հարցեր առաջադրել հետևյալ կերպ. փորձաքննությանը ներկայացված թղթադրամները համապատասխանում են ՀՀ կամ ԱՄՆ պետական չափորոշիչ թողարկմանը, թե՛ ոչ, ինչ եղանակով են դրանք պատրաստվել և այլն, այսինքն՝ այն կերպ, ինչպես փորձագետները ձևակերպել են իրենց պատասխանները նշված եզրակացությունների հետևությունների մասում: Միանգամայն ճշգրիտ կարելի է համարել փորձաքննությանն առաջադրվող հարցերի հետևյալ ձևակերպումները. «Ներկայացված փաստաթղթի սկզբնական տեքստը փոփոխման ենթարկվել է, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա ինչ եղանակով է ենթարկվել փոփոխման և ինչպիսին է եղել նախորդ տեքստը. վկայականում լուսանկարի փոփոխում եղել է, թե՛ ոչ. վկայականի վրա եղած կնիքները ինչ եղանակով է պատրաստված՝ տնայնագործական, թե՛ գործարանային, ինչ եղանակով են կնիքները թողնված վկայականի ներդիրի և լուսանկարի վրա»²:

Փաստենք, որ նման դեպքերում փորձագետն ուղղակի պետք է եզրակացության մեջ արձանագրի միայն տեքստում փոփոխության հայտնաբերման փաստը՝ դրա իրավաբանական որակումը թողնելով փորձաքննություն նշանակող մարմնի իրավասությանը: Ավելին, այս մասին նշում կա նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ քրեական գործով վարույթին իրավաբանական հարցերով փորձագետ չի ներգրավվում:

¹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձագիտական վարույթ Հմ 03-20/291, 13.03.1998թ., ըստ քրեական գործի հմ 14101398:

² Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձագիտական վարույթ Հմ 03-134/1601, 23.12.1998թ., ըստ քրեական գործի հմ 62202294:

Եզրակացության մեջ փորձագետի շարադրած հետևությունների գնահատման համար պետք է հաշվի առնել վերջիններիս համապատասխանությունը կատարված հետազոտման ծավալներին, այլ կերպ ասած՝ արդյոք հետևությունները բխում են հետազոտական մասի շարադրանքից¹: Կարծում ենք, նման համադրում կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել եզրակացության ներածական մասում փորձագետին առաջադրված հարցերի բովանդակությունը և: Այս կապակցությամբ փաստենք, որ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, փորձագետին հարցեր են առաջադրվում փաստաթղթում (թղթադրամ, ակցիզային դրոշմանիշ, անձնագիր և այլն) կատարված կեղծիքի փաստի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Արդեն նշել ենք, որ կեղծիքի փաստի հաստատումը փորձագետի իրավասությունների մեջ չի մտնում, և նման դեպքերում փորձագետներն իրենց հետևություններում իրավամբ միայն շարադրում են, որ հետազոտված փաստաթղթերի տեսակները չեն համապատասխանում պետական չափորոշիչ թողարկմանը: Սակայն, կարծում ենք, որ նման պարագաներում փորձագետը չպետք է բավարարվի միայն նշելով, որ ներկայացված փաստաթղթերի տեսակները չեն համապատասխանում պետական չափորոշիչ թողարկմանը, այլ պետք է հետևություններում նշի նաև դրանց պատրաստման եղանակի մասին, բնականաբար, հետազոտական մասում անդրադառնալով դրա հատկանիշներին, առավել ևս, եթե հաշվի առնենք, որ դա կարող է դիտվել նաև որպես փորձագիտական նախաձեռնության դրսևորում:

¹ Տե՛ս Бурков И. В., Мурзинов А. В. Заключение эксперта как вид доказательств, Владимир, 2001, изд. Транзит-Икс, էջ 53:

Եզրակացության մեջ փորձագետի շարադրած հետևությունները պետք է լինեն հստակ, առաջադրված հարցերի պատասխանները պետք է ուղղակիորեն համապատասխանեն հարցերի բովանդակությանը: Այս կապակցությամբ կցանկանայինք ընդգծել, որ փորձագիտական պրակտիկայում երբեմն խմբային կամ տեսակային պատկանելության հարցին որոշակի պատասխանելու փոխարեն փորձագետն ուղղակի շարադրում է այն ընդհանուր հատկանիշները, որոնք համընկնում են: Օրինակ՝ համեմատվող թղթի օրինակները համընկնում են ըստ լիզոմի քանակի, բաղադրության, ինչպես նաև այլ օժանդակ հատկանիշներով՝ ուլտրամանուշակագույն ճառագայթներում լյունիներացենցիայի գույնով, կամ մեկ ուրիշ դեպքում՝ համեմատվող թղթերը համընկնում են ըստ հաստության, գույնով, մակերեսով, մանրաթելերի կառուցվածքով¹:

Այս և նման այլ դեպքերում, մեր կարծիքով, փորձագետը ոչ թե պետք է բավարարվի միայն թվարկելով համընկնող ընդհանուր հատկանիշները, այլ նաև պետք է նկարագրի տարբերվող հատկանիշները և որոշակի, դրական հետևության հանգելու դեպքում՝ նշի դրանց առաջացման պատճառները, այնուհետև պետք է ուղղակի շարադրի հարցի պատասխանը, այն է՝ հետազոտման ընթացքում կիրառված մեթոդիկաները կամ հետազոտման ներկայացված նյութի ոչ բավարար քանակությունը կամ վիճակը թույլ չեն տալիս լուծել նյութի խմբային պատկանելության հարցը կամ ուղղակիորեն պատասխանել առաջադրված հարցերին:

¹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարության ՓԿ արխիվ, փորձագիտական վարույթներ ՀՆ 09499903, 01.06.1999թ., ըստ քրեական գործի հՆ 62203499. ՀՆ 03-22/304, 19.03.1998թ. ըստ քրեական գործի հՆ 18206393:

Այլ կերպ ասած՝ փորձագետի թվարկած հատկանիշներն իրենց ամբողջության մեջ պետք է գնահատվեն և արդյունքում որոշակի դրական կամ բացասական պատասխան տրվի խմբային պատկանելության հարցի վերաբերյալ, քանի որ խմբային պատկանելության հարցի վերաբերյալ կարող է տրվել միայն որոշակի (կատեգորիկ) եզրակացություն, ի տարբերություն նույնացման հարցի, որի դեպքում կարող է տրվել նաև հավանական եզրակացություն:

Կարծում ենք, որ փորձագիտական հետազոտման ընթացքի ու արդյունքների ամրագրումն առավել արդյունավետ, իսկ դրա գնահատումն էլ արժանահավատ կլինի, եթե այդ ընթացքում հաշվի առնվեն մեր կողմից վերը ներկայացված և այլ առաջարկներ ու պահանջներ:

**Վահե Գուրգենի Ենգիբարյան
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Այձե՛սձո՛յի Աձձա Աձձա՛յի իձձ՝
ՆՆ՛ ԱԾԱ՛Ն Ա՛Ի Ի Օ՛Ա Ի Ծ՛Ի ԱԷ՛Ա՛Ն Օ
ՆՕ՛ԱԱ՛Ի Օ՛Օ ԿԷ՛ՆԻ ԱԾՕԷ՛Շ**

**Vahe G. Yengibaryan
MODERN PROBLEMS
OF THE FORENSIC EXPERTISE**

Տեխն. խմբագիր՝ Ա. Կարապետյան
Էջադրումը՝ Ա. Պետրոսյան

Հանձնված է տպագրության 9.07.2007:
Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84^{1/16}:
Ծավալը՝ 8 տպ. մամուլ: Քանակը՝ 500: